ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌՅԱՆՑ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ .....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....

ՁԵՎԱՎՈՐՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ.....

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ .....

ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ .....

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ .....

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ .....

ԱՌՑԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ .....

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ .....

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ .....

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՁԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ .....

ԲՌՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ .....

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....

Հայաստանում երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության վերաբերյալ հարցման անցկացման ուղեցույցներ .....

Երեխաների անվտանգության ապահովման քաղաքականություն-ընթացակարգի մշակման ուղեցույց .....

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Հետազոտական թիմը խորին երախտագիտություն է հայտնում բոլոր այն անհատներին և կազմակերպություններին, ովքեր իրենց գիտելիքներով, փորձառությամբ աջակցեցին այս նախաձեռնության իրականացմանը:

Առաջին հերթին շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (ԿԳՄՍՆ) և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնին (ՀՄԿ)՝ հետազոտության կազմակերպման և իրականացման ընթացքում համագործակցության, ինչպես նաև երեխաների պաշտպանության գործում իրենց հետևողական աշխատանքի համար:

Հատուկ երախտագիտություն ենք հայտնում ՀՄԿ հոգեբաններին, ովքեր անմիջականորեն ներգրավված էին տվյալների հավաքագրման փուլում՝ ապահովելով հարցման ողջ ընթացքում երեխաների բարեկեցությունը: Նրանց մասնագիտական մոտեցումը և նվիրվածությունը վճռորոշ դեր ունեցան հետազոտության երեխայակենտրոն և էթիկապես զգայուն միջավայրում իրականացման տեսանկյունից:

Հետազոտական թիմը բարձր է գնահատում նաև Երևանի պետական համալսարանի հետազոտական աշխատանքների էթիկայի հանձնախմբի աջակցությունը՝ հետազոտության մեթոդաբանության և գործիքակազմի մանրակրկիտ փորձաքննության և հաստատման համար: Նրանց մասնագիտական դիտարկումները զգալիորեն բարձրացրել են հետազոտության որակն ու հուսալիությունը:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում այն փորձագետներին, ովքեր անգնահատելի ներդրում են ունեցել հետազոտության մեթոդաբանության, հարցաշարի կառուցվածքի և գործիքակազմի մշակման գործում: Նրանց խորքային գիտելիքները, փորձը և հայաստանյան համատեքստի խոր ըմբռնումը ձևավորեցին սույն հետազոտության գիտական և էթիկական հիմքը՝ այն դարձնելով վստահելի և մշակութային առումով համահունչ:

Շնորհակալություն ենք հայտնում նաև Sexual Violence Research Initiative (SVRI) նախաձեռնությանը՝ ֆինանսական աջակցության և գիտական անկախության ապահովման համար, ինչպես նաև երեխաների նկատմամբ սեռական բռնության կանխարգելման ոլորտում ներդրված անփոխարինելի ջանքերի համար:

Վերջապես, մեր ամենաջերմ շնորհակալությունն ենք հայտնում բոլոր դպրոցներին, տնօրեններին, ուսուցիչներին, ծնողներին և հատկապես՝ երեխաներին, ովքեր իրենց մասնակցությամբ, անկեղծությամբ և քաջությամբ կյանքի կոչեցին այս աշխատանքը: Նրանց ձայները, փորձառություններն ու պատմությունները հետազոտության ամենաարժեքավոր մասն են:

Այս աշխատանքը հնարավոր չէր լինի առանց վերոնշյալ կառույցների, փորձագետների և մասնակիցների համատեղ ջանքերի: Նրանց ներդրումն ամուր հիմք է ստեղծում այն բանի համար, որ Հայաստանում յուրաքանչյուր երեխա մեծանա անվտանգ, աջակցող և պաշտպանված միջավայրում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին «Աստրա» առողջության ամրապնդման և բռնությունից պաշտպանության հիմնադրամը և Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն (ՀՄԿ) պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հետ համատեղ Երևանում և հարակից մարզերում (Արարատ, Արմավիր և Արագածոտն) իրականացրել են 12-17 տարեկան դպրոցականների առցանց հարցում:

ՀՄԿ հոգեբաններն աջակցել են երեխաներին դպրոցներում հարցաշարը լրացնելու ընթացքում՝ որպես հրահանգողներ ապահովելով հարցման գործընթացի անանունությունը և ապահովելով տեխնիկական աջակցություն: Նրանց մասնագիտական աջակցությունը և երեխաների պաշտպանության ուղղությամբ հանձնառությունը վճռորոշ դեր ունեցան տվյալների հավաքագրման էթիկական և զգայուն իրականացումն ապահովելու գործում:

ԵՊՀ հետազոտական աշխատանքների էթիկայի փորձաքննության հանձնախումբը մանրամասն ուսումնասիրել է հետազոտության մեթոդաբանությունը և գործիքակազմը և անհրաժեշտ փոփոխություններից հետո հաստատել է այն (որոշում № [2025-01]):

Հետազոտությունը ֆինանսավորվել է **Սեռական բռնության հետազոտական նախաձեռնության (Sexual Violence Research Initiative - SVRI)** կողմից: Հետազոտության արդյունքների մեկնաբանության համար պատասխանատվությունն ամբողջությամբ կրում են հեղինակները և այն պարտադիր չէ, որ արտացոլի SVRI-ի պաշտոնական դիրքորոշումները:

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության վերաբերյալ համակարգված նպատակային ուսումնասիրությունների մեթոդաբանություն գոյություն չունի: 2015–2016 թթ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունը և Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ 2008 և 2021 թթ. ազգային հետազոտությունները որոշ պատկերացում են տալիս երեխաների նկատմամբ բռնության փորձառությունների մասին, թեև ի սկզբանե նախատեսված չեն եղել երեխաների նկատմամբ սեռական շահագործումը և բռնությունը չափելու համար (ICF International, Ministry of Health [Armenia], & National Statistical Service of the Republic of Armenia, 2017; National Statistical Service of the Republic of Armenia & United Nations Population Fund, 2008; International Center for Human Development & Statistical Committee of the Republic of Armenia, 2021): Այս հարցումների ընթացքում երեխաներ չեն հարցվել և անդրադարձ չի կատարվել տեխնոլոգիաներով միջնորդավորված բռնությանը: Բացի այդ, նշված հետազոտություններում բացակայում են

տվյալներ բռնարարների, բռնության կատարման վայրերի և բացահայտման եղանակների մասին:

Արդյունքում, Հայաստանը, համաշխարհային գնահատականների հետ համեմատած, երեխաների նկատմամբ սեռական բռնության ոչ իրատեսական ցածր հաշվառված ցուցանիշներ ունի: Քեգնին և համահեղինակները (2025) նշում են, որ 20 տարեկան և բարձր տարիքային խմբի տղամարդկանց 7,1 %-ը և կանանց 12,1 %-ը մինչև 18 տարեկանը սեռական բռնության զոհ լինելու փորձառություն են ունեցել: Այս թվերը զգալիորեն ցածր են համաշխարհային միջիններից՝ համապատասխանաբար 15% և 19%: Ամենայն հավանականությամբ այդ գնահատականները թերի են՝ պայմանավորված մի շարք գործոններով, այդ թվում՝ մեթոդաբանական սահմանափակումներով, մշակութային տաբուներով և տարիքին համապատասխան հարցաշարերի բացակայությամբ: Առանց տեղական համատեքստին հարմարեցված երեխաների հետ հարցումների՝ Հայաստանը չի կարող ունենալ երեխաների նկատմամբ սեռական բռնության տարածվածության վերաբերյալ վստահելի գնահատական և, որպես հետևանք, սեռական բռնությունից և շահագործումից երեխաներին պաշտպանելու արդյունավետ քաղաքականություն մշակելու հիմք:

Այդուհանդերձ, Հայաստանը գնալով ավելի ակտիվ է ներգրավվում երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման կանխարգելման գլոբալ և տարածաշրջանային նախաձեռնություններում: 2020թ. Հայաստանը վավերացրել է Եվրոպայի խորհրդի Լանզարոտեի կոնվենցիան՝ ազդարարելով կանխարգելման և պաշտպանության շրջանակների ուժեղացման հանձնառությունը: Ազգային մակարդակում գործարկվել են Բառնահուսի մոդելով «Անվտանգ անկյուններ» երկու կենտրոններ՝ ստեղծելով երեխաների համար հարմարեցված միջավայր բռնության բացահայտման և բազմամասնագիտական աջակցության համար (United Nations Armenia, 2023): Միջազգային մակարդակում Հայաստանի հանձնառությունն ամրագրվել է՝ պաշտպանության և աջակցության ծառայությունների ապահովման վերաբերյալ պարտավորություններով՝ երեխաների նկատմամբ բռնությանը վերջ տալուն նվիրված առաջին Գլոբալ նախարարական համաժողովում (2024), ինչը վկայում է հիմնախնդիրը որպես քաղաքական առաջնահերթություն ճանաչելու մասին (ՀՀ կառավարություն, 2024): Այս զարգացումները ձևավորում են բարենպաստ միջավայր երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման տարածվածության վերաբերյալ հետազոտություններ իրականացնելու: Նոր տվյալները կնպաստեն երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման պրակտիկայի և քաղաքականության զարգացմանը:

Այս հետազոտությունը Հայաստանի դպրոցներում իրականացված երեխաների առաջին առցանց հարցումն է երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման վերաբերյալ:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

ընդհանուր ակնարկ

Սույն ձևավորող հետազոտությունը նպատակաուղղված էր Հայաստանի դպրոցներում դեռահասների շրջանում երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության չափման անվտանգ և հավաստի գործիքակազմի մշակմանը, փորձարկմանը, ինչպես նաև դրա կիրառման արդյունքների արձանագրմանը: Իրականացված հետազոտությունը փաստացի արձագանքել է ուսումնասիրվող երևույթի վերաբերյալ ապացույցների բացակայությանը. փաստացի պաշտոնական վիճակագրությունը գրանցել է երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության միայն մեկ հայտնի դեպք, բացի այդ ՀՀ-ում չկա վավերացված հարցման այնպիսի մոտեցում, որն ուղղված է ուսումնասիրելու երեխաների նկատմամբ սեռական բռնության և/կամ շահագործման այն փորձառությունները, որոնք հազվադեպ են տեսանելի դառնում սոցիալական ծառայությունների կամ արդարադատության համակարգի համար: Հետևաբար, մեր նպատակը մեթոդաբանական էր, այն է, ոչ թե իրականացնել ազգային մակարդակում երևույթի տարածվածության բացահայտում, այլ համատեղ ստեղծել, հարմարեցնել և փորձարկել մեթոդներ, որոնք հետագայում կարող են կիրառվել ուսումնասիրելու երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության երևույթը Հայաստանում:

Ձևավորող հետազոտությունը այսպիսով, հետապնդում էր երեք փոխլրացնող նպատակներ: Նախ, այն քարտեզագրել է համատեքստային գործոնները՝ էթիկական, իրավական, լեզվական, ինստիտուցիոնալ, որոնք ձևավորում են ինչպես երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության նկատմամբ խոցելիությունը, այնպես էլ ստեղծում են նախապայմաններ նման հետազոտության իրագործելիության համար: Հաջորդիվ, այն մշակել է մշակութային առումով զգայուն, հոգեչափական առումով անվտանգ ինքնահաղորդման գործիք դեռահասների համար: Եվ երրորդ, այն փորձարկել է դպրոցում թվային եղանակով ինքնուրույն իրականացվող տվյալների հավաքագրման էթիկական և գործառնական ընթացակարգեր՝ հասկանալու համար, թե ինչն է կիրառելի իրական պայմաններում և ինչպիսի փոփոխություններ է անհրաժեշտ իրականացնել նման ազգային մակարդակով ուսումնասիրությունից առաջ:

Գործիքակազմի մշակումն իրականացվել է հետազոտական մեթոդաբանության հաջորդական նախագծման (դիզայնի) սկզբունքով, ինչը նշանակում է, որ հետազոտական թիմը սկսել է համակարգի ճանաչումից, ապա անդրադարձել մեթոդաբանության և գործիքների մշակմանը, էթիկական վերանայումների իրականացմանը և, ապա դաշտային փորձարկմանը, մասնավորապես. (1) փորձագիտական հարցազրույցներ՝ համատեքստը հասկանալու համար, (2) միջազգային լավագույն փորձի հիման վրա առաջին հարցաթերթիկի կազմում՝ հարմարեցնելով այն հայկական համատեքստին, (3) հետազոտության իրականացման էթիկական կանոնների մշակում, (4) Երևանի պետական համալսարանի էթիկայի հանձնաժողովի կողմից հետազոտության փորձաքննություն, (5) ըստ դիտարկումների և առաջարկությունների՝ վերանայումների իրականացում և ինտեգրում մեթոդաբանությունում և գործիքներում, (6) գործիքի վավերացում Դելֆի ուսումնասիրության միջոցով՝ փորձագետների մասնակցությամբ, և երեխաների հետ անցկացվող ճանաչողական

հարցազրույցների արդյունքներով, և (7) դպրոցում անցկացված փորձնական հարցում՝ համակարգչային օժանդակությամբ ինքնուրույն հարցազրույցի միջոցով՝ ապահովելով երեխաների անվտանգությանն առնչվող բոլոր նկատառումները: Հարցման գործիքի մշակման և վավերացման ընթացքում փորձագիտական խումբը առաջնորդվել է միջազգային լավագույն փորձով (Բոատենգ և այլք, 2018թ.) և Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի չափման ուղեցույցի դրույթներով (Մեյնք և այլք, 2016թ.):

Այս զեկույցի հետ մեկտեղ հրապարակված ուղեցույցները ուղղակիորեն արտացոլում են հետազոտության մշակման ամբողջական ցիկլը:

Հետազոտության շրջանակում կիրառված բոլոր գործիքները, սցենարները, համաձայնությանն առնչվող նյութերը և գործառնական արձանագրությունները հասանելի են էլեկտրոնային հավելվածում (OSF, մշտական հղում՝ **https://osf.io/vx7ky**):

Փորձագիտական հարցում. համատեքստի և սահմանափակումների քարտեզագրում

Հետազոտական թիմի կողմից անցկացվել են կիսակառուցվածքային հարցազրույցներ կրթության, երեխաների պաշտպանության, հոգեբանության/սոցիալական աշխատանքի, հետազոտական և իրավական ոլորտների մասնագետների հետ (N=30): Հարցազրույցները ձայնագրվել են բանավոր համաձայնությամբ, տառադարձվել և անանունացվել: Թեմատիկ վերլուծությունը համատեղել է ինդուկտիվ կոդավորումը ապրիորի ոլորտների հետ՝ ռիսկեր և միջավայրեր, չափման իրագործելիություն, էթիկա և համաձայնություն, դաշտային լոգիստիկա, պաշտպանության կարողություններ:

Այս փուլում ստացված արդյունքները սահմանել են հետազոտության հետագա մշակման պարամետրերը: Մասնագետները զգուշացրել են, որ ծնողական մերժումների թիվը մեծանում է այն դեպքում, երբ համաձայնության նյութերում օգտագործվում է «սեռական բռնության» տերմինաբանությունը. նրանք առաջարկել են հարցումը շրջանակել որպես երեխաների անվտանգությանը/հանրային առողջությանը վերաբերելի հետազոտություն: Փորձագետները քննարկել են ակտիվ և պասիվ ծնողական համաձայնության ձևերը՝ նշելով այս առնչությամբ առաջացող էթիկական բնույթի հարցերը, մասնավորապես, որ ակտիվ համաձայնությունը մեծացնում է մեծահասակների կողմից երեխաների նկատմամբ վերահսկողությունը, սակայն ավելի ռիսկային է երեխաների ձայները լռեցնելու առումով այն դեպքերում, երբ բռնություն գործադրողը ընտանիքի անդամ է: Մասնագետները մշտապես նախապատվությունը տվել են երեխայի կողմից անհատական, թվային գործիքների կիրառմամբ հարցաթերթի լրացմանը՝ թղթային ձևաթղթերի փոխարեն՝ սոցիալական ցանկալիությունը և խարանը նվազեցնելու համար: Նրանք ընդգծել են լեզվական իրողությունները՝ մարմնի մասերի և սեռական վարքագծի համար սահմանափակ, տարիքին համապատասխան բառապաշարի և մեղմացուցիչ արտահայտությունների (Էվֆեմիզմներ) կիրառումը, և կոչ են արել օգտագործել հստակ, անտեղի ազդակներ չառաջացնող ձևակերպումներ՝ կարճ սահմանումներով: Վերջապես, ընգծել են նաև բռնության և/կամ շահագործման դեպքերի բացահայտման համակարգային խոչընդոտները (խարան, վրեժխնդրություն, պատվի պաշտպանման նորմեր, իշխանությունների նկատմամբ ցածր վստահության աստիճան) և բազմամասնագիտական պատասխանատվության և խիստ գաղտնիության անհրաժեշտությունը՝ համայնքում

վստահություն ձևավորելու համար: Այս պատկերացումները անմիջական ազդեցություն են ունեցել թիմի կողմից մշակված հետազոտության շրջանակի, համաձայնության մոդելի, տվյալների հավաքագրման եղանակի և երեխաների պաշտպանության ապահովման մոտեցման մշակման վրա:

Հարցաթերթի մշակում. առաջավոր փորձ, հարմարեցում տեղական համատեքստին

Դեռահասների համար նախատեսված հարցաթերթի առաջին տարբերակը կառուցված էր սոցիալ-էկոլոգիական տրամաբանության շուրջ. չափվում էին երևույթի շրջանակը (բռնության ուղղակի և անուղղակի փորձառություն), բացահայտումը/օգնություն փնտրելը և ռիսկի/պաշտպանության գործոնները տանը, դպրոցում, համայնքում և առցանց: Երեխաների նկատմամբ բռնության չափանիշների ընտրությունը հիմնվել է մի քանի հիմնական նկատառումների վրա, այն է՝ հարցաթերթերը պետք է համապատասխանեին տարիքային խմբին, ունենային ապացուցված վավերականություն և հուսալիություն տարբեր մշակութային համատեքստերում կիրառման տեսանկյունից և հնարավորություն տային ինչպես միջազգային համեմատելիության, այնպես էլ երկրի ներսում մշտադիտարկման համար (Մեյնք և այլք, 2023թ.): Միջազգային գործիքի թարգմանությունն իրականացվել է հետ-առաջ սկզբունքով և թիմային քննարկմամբ՝ հասկացութային ապարատի համարժեքությունն ապահովելու համար, այլ ոչ թե բառացի թարգմանությամբ:

Հարցաթերթիկի աղբյուրների և հղումների վերանայման համար տե՛ս Էլեկտրոնային հավելվածը՝ Հարցման հարցաթերթի ոլորտները և բովանդակության ակնարկը:

2-րդ տարբերակը (վերջնական) մշակվել է ԵՊՀ Էթիկայի հանձնաժողովի կողմից վերանայման և հետագա Դելֆի մեթոդով փորձագիտական ուսումնասիրության միջոցով փորձարկման և երեխաների հետ ճանաչողական հարցազրույցների միջոցով (տե՛ս հետագա բաժինները մանրամասների համար): Հարցաթերթը զգալիորեն կատարելագործվել է: Հատկապես կարևոր էին երկու փոփոխություններ՝ 1) Շերտավոր համաձայնության գործընթացի ներդրումը. այն ներառում էր էկրանին պատկերված նախնական համաձայնության հարց, ապա երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության մոդուլին անմիջապես նախորդող երկրորդ, ներդրված համաձայնության հարցը, հաշվի առնելով թեմայի զգայունությունը: Այս երկրորդ շերտը հստակորեն տեղեկացնում և հիշեցնում էր դեռահասներին՝ ցանկացած հարց կամ ամբողջ բաժինը բաց թողնելու իրենց իրավունքի մասին: 2) Անցումային հարցերի ներդրում: Օգտագործվել են կարճ սքրինինգային հարցեր՝ բռնության փորձառությունը բացահայտելու համար: Միայն այն մասնակիցների համար, ովքեր (ա) համաձայնություն են տվել զգայուն բաժնի համար և (բ) հաստատել են սքրինինգային հարցը: Այս դեպքում հետևել են մանրամասն հարցեր՝ բռնության ժամանակի, բռնարարի, բռնության հաճախականության, բացահայտման և ստացած աջակցության վերաբերյալ: Այս մոտեցումը նվազեցրել է մասնակցի բեռը և հարգել երեխայի ինքնավարությունը:

Վերջնական հարցաթերթիկը հասանելի է Էլեկտրոնային հավելվածում՝ Երեխաների համար նախատեսված փորձնական հարցաթերթիկ և համաձայնության ձևաթուղթ:

Հետազոտության էթիկական կանոնակարգի մշակում

Հետազոտության էթիկական կանոնակարգը սահմանել է հարցման նպատակները, շրջանակը, մեթոդները և դաշտային աշխատանքների իրականացման ընթացակարգերը: Այն նախապատվությունն է տվել անանուն, համակարգչի միջոցով ինքնուրույն հարցման մեթոդին, որն իրականացվում է սենյակներում, որտեղ ուսուցիչներ չկան և որտեղ գտնվում են վերապատրաստված հոգեբաններ, պատրաստված կիրառելու տրավմայի վրա հիմնված արձագանքման մոտեցումներ: Այն մանրամասն ներկայացրել է երեխայի ուղղորդման շղթան՝ ազդակներով, դերերով և ժամկետներով՝ անհետաձգելի և ոչ անհետաձգելի հարցերի համար: Ծնողական համաձայնության համար էթիկայի նախնական կանոնակարգը առաջարկել է պասիվ ծնողական համաձայնություն՝ միջազգային պրակտիկային համահունչ:

Ընդհանուր և նպատակային վերանայումներ ԵՊՀ էթիկայի հանձնաժողովի կողմից

Էթիկայի հանձնաժողովը վերանայել է Էթիկայի կանոնակարգը և գործիքակազմի ամբողջական փաթեթը (հարցաթերթ, երեխայի համար նախատեսված բանավոր ներածական տեքստ, համաձայնության ձևեր, դասարանային ընթացակարգեր): Վերանայումներն անդրադարձել են հանձնաժողովի առաջնահերթ մտահոգություններին և հանգեցրել են ամրապնդված մոդելի ձևավորմանը: Հիմնական փոփոխությունները ներառում էին հետևյալը.

- անցում ակտիվ ծնողական համաձայնության (հարցումից առաջ բոլոր երեխաների համար անհատապես ստորագրված թույլտվություն),
- հարցաթերթում ներառված լրացուցիչ համաձայնություն՝ զգայուն հարցերից առաջ՝ երեխայի որոշում կայացնելու իրավունքը հարգելու համար,
- տվյալների հավաքագրման ավելի հստակ ընթացակարգերի սահմանում, այդ թվում սենյակներում բացառել ուսուցիչների ներկայությունը, ապահովել գաղտնիությունը, ինչպես նաև ներգրավել վերապատրաստված հոգեբանների, այս դեպքում, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հոգեբաններին՝ որպես ֆասիլիտատորներ,
- լիարժեք գործող Երեխայի ուղղորդման ընթացակարգ՝ հստակ սկզբունքներով, և
- հարցաթերթում ներառված հարցերի ու պատասխանների տարբերակների լեզվական/թարգմանչական բարելավումներ:

Այս մոտեցումները դարձել են հետազոտության փորձնական ծրագրի և հետագա ուղեցույցների էթիկական հիմքը:

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ N1.
Դելֆի մեթոդով հարցում փորձագետների հետ

Երեխաների համար ցանկացած թեստավորումից առաջ բովանդակության վավերականությունն ամրապնդելու համար անցկացրել ենք առցանց Դելֆի մեթոդով փորձագիտական հարցում: Հարցաթերթիկի նախագիծը վերանայել է փորձագետների բազմամասնագիտական խումբ (կրթություն, երեխաների պաշտպանություն, կլինիկական հոգեբանություն, հետազոտություն, երեխաների իրավունքներ. շատերը երեխաների կամ մեծահասակների շրջանում բռնության վերաբերյալ հարցումներ անցկացնելու փորձ ունեն) (N=10): Չնայած մասնագիտական տեսակետների բազմազանությանը՝ առաջին փուլում խմբի մոտ գրանցվեց գնահատականների բարձր համընկնում, և հարցաթերթին ընդհանուր դրական գնահատական տրվեց: Հաշվի առնելով այս վաղ համընկնումը՝ հետագա փուլեր չանցկացվեցին: Թարմացումները ներառում էին կոնսենսուսի վրա հիմնված ձևակերպումների, հարցերի կարգի և պատասխանների ձևաչափի վերանայումներ, ինչպես նաև հարցաթերթիկի ծավալի էական կրճատում:

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ N2.
Ճանաչողական հարցազրույցներ դեռահասների հետ

Հետագայում ստուգեցինք հարցաթերթիկի հասկանալիությունը, արդիականությունը և համապարփակությունը դեռահասների (N=10 երեխա՝ 12-17 տարեկան, 5 տղա և 5 աղջիկ) մոտ՝ օգտագործելով Ճանաչողական հարցազրույցի բարձրաձայն մտածելու և հաջորդիվ հարցեր տալու տեխնիկաները: Հարցազրույցները կենտրոնացած էին հիմնական հասկացությունների և սահմանումների պարզության, ինչպես նաև հարցերի ընկալման զգայունության և հուզական բեռի թոթափման վրա: Արդյունքները ցույց տվեցին ընդհանուր առմամբ հստակ ըմբռնում, սակայն նաև բացահայտեցին լեզվին բնորոշ երկիմաստություններ (օրինակ՝ ցուցաբառեր (դեիկտիկ բառեր), ինչպիսին է «անձնական» և «ոչ անձնական» մարմնի մասերի միջև եղած տարբերությունը): Նաև նկատել ենք սեռական վերագրում, որը երեխաների նկատմամբ սեռական բռնությունը հիմնականում ներկայացնում էր որպես «աղջիկների նկատմամբ բռնություն»: Ավելին, նկատվել են ձևաչափի ազդեցությունները. կարճ կոնկրետ նկարագրությունները խիստ գրավիչ էին, մինչդեռ երկար, ավելի ծավալուն հարցերն առաջացնում էին հոգնածություն: Դեռահասները կանխատեսում էին հասակակիցների կողմից ոչ անձնական միջավայրերում թերհաղորդում և խիստ նախընտրում էին մասնավոր, թվային տեխնոլոգիաների միջնորդությամբ հարցումների իրականացումը: Ընդհանուր առմամբ, մասնակիցները հաստատել են հարցաթերթիկի վավերականությունը, և այս արդյունքները կարևոր ուղեցույց են հանդիսացել հարցման ընթացակարգերի, ինչպես նաև արդյունքների քննարկման կատարելագործման համար:

Սույն հաշվետվությունում՝ որպես նշված մեթոդաբանության իրագործելիության ապացույց ներկայացված են դպրոցական հարցման արդյունքները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հարցման նպատակն է հասկանալ 12-17 տարեկան դպրոցականների կարծիքն ու փորձառությունը դպրոցում, տանը, փողոցում և համացանցում երեխաների անվտանգության և պաշտպանության վերաբերյալ և մշակել գործնական առաջարկներ Հայաստանում երեխաների համար սոցիալական միջավայրն ավելի անվտանգ ու ապահով դարձնելու ուղղությամբ:

Հարցման խնդիրներն են՝

01 Գնահատել երեխաների անվտանգությունը համայնքում:

02 Գնահատել երեխաների անվտանգությունը դպրոցում:

03 Գնահատել երեխաների առցանց անվտանգությունը:

04 Պարզել երեխաների ընտանեկան միջավայրում հաղորդակցությունների առանձնահատկությունները:

05 Պարզել ընտանիքում և դպրոցում կանխարգելիչ կրթության թեմաները:

06 Պարզել երեխաների իրազեկվածությունը և վերաբերմունքը սեքսթորշնի և գրումինգի նկատմամբ:

07 Պարզել երեխաների անցանց և առցանց սեռական բռնության և շահագործման փորձառությունը:

08 Գնահատել 12–17 տարեկան դպրոցականների շրջանում երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման դեպքերի տարածվածությունը:

09 Տարանջատել երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման տարածվածության վերաբերյալ տվյալներն ըստ սեռի և տարիքի:

10 Վերլուծել երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման վերաբերյալ զգայուն հարցերին երեխաների պատասխանելու պատրաստակամության վրա ազդող գործոնները՝ հաշվի առնելով հարցվողի սեռը, նախորդ փորձը և կանխարգելիչ ծրագրերին մասնակցությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հետազոտության իրականացումը պաշտոնապես թույլատրվել է ՀՀ ԿԳՄՍՆ կողմից, որի առաջարկով ՀՄԿ ՊՈԱԿ-ը հանդես է եկել որպես հետազոտության դաշտային փուլի պատասխանատու և տվյալների հավաքագրումն իրականացվել է ՀՄԿ ՊՈԱԿ-ի հոգեբանների կողմից:

Տվյալները հավաքագրվել են **դպրոցներում առցանց հարցման մեթոդով՝** օգտագործելով հարցվող երեխաների անձնական սարքերը կամ, անհրաժեշտության դեպքում, հետազոտական թիմի կողմից տրամադրած սարքերը:

ԸՆՏՐԱՆՔԸ. Այս հետազոտության ընթացում կիրառվել է շերտավորված ընտրանքի մեթոդը: Ընտրանքի ծավալը կազմել է 336 երեխա: Հարցվել են 12–17 տարեկան դպրոցականներ Երևանի, Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի 8 դպրոցներում, որոնցից 4-ը ավագ: Ինչպես նաև 12 աղջիկ հարցվել է Երեխաների խնամքի կենտրոններից: Յուրաքանչյուր դպրոցում սովորողներն ընտրվել են պատահական ընտրանքով՝ աշխարհագրական և սոցիալ-տնտեսական բազմազանությունը ապահովելու նպատակով:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ. Կիրառվել է համաձայնության երկաստիճան գործընթաց: Ծնողների գրավոր համաձայնությունն ստացվել է դպրոցների միջոցով՝ ծնողների հետ կապ հաստատելով, իսկ խնամքի կենտրոնների դեպքում համաձայնությունը ձեռք է բերվել տվյալ պահին երեխայի օրինական ներկայացուցիչը հանդիսացող անձից/կառույցից: Երեխաների համաձայնությունը տրվել է բանավոր ձևով, իսկ մինչև սեռական բռնության փորձառությունների վերաբերյալ զգայուն հարցերին անցնելը պահանջվել է նաև հավելյալ էլեկտրոնային համաձայնություն: Այս լրացուցիչ համաձայնությունը նպատակ ուներ հավասարակշռելու Հայաստանում մեծահասակների հեղինակությանը ենթարկվելու մշակութային ակնկալիքները (Graham et al., 2013) և երեխաներին հնարավորություն տալու ինքնուրույն մերժելու կամ ընդունելու զգայուն հարցերին պատասխանելու առաջարկը:

ԳՈՐԾԻՔԸ. Հարցաշարը ներառել է ադապտացված պնդումներ ICAST-C[1] և JVQ-R2[2] առցանց և անցանց սեռական բռնությունների վերաբերյալ միջազգայնորեն ընդունված գործիքներից, ինչպես նաև սցենարների հիման վրա կազմված վինյետներ և հետադարձ կապի հարցեր: Հարցերը պարզեցվել են և հարմարեցվել են հարցվողների տարիքին: Սեռական բռնության

1. **ICAST-C** - Երեխաների նկատմամբ բռնության գնահատման գործիքի մանկական տարբերակն է: Այն մշակվել է Երեխաների նկատմամբ բռնության և անտեսման կանխարգելման միջազգային ընկերակցության կողմից (International Society for the Prevention of Child Abuse and Neglect (ISPCAN) Child Abuse Screening Tool – Children's Version), նպատակ ունենալով ստանդարտացված եղանակով չափելու երեխաների կողմից ինքնահայտարարված բռնության և անտեսման փորձառությունները՝ ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնությունը, անտեսումը, ընտանիքում բռնության ականատես լինելը: Այն նախատեսված է 11–18 տարեկան երեխաների և պատանիների համար: Հարցաշարը պահանջում է մշակութային հարմարեցում և լայնորեն կիրառվում է տարբեր երկրներում համեմատական ուսումնասիրությունների նպատակով:

2. **JVQ-R2** – Երեխաների զոհականացման հարցաշարի վերանայված, 2-րդ տարբերակն է (Juvenile Victimization Questionnaire – Revised, 2nd version): Այն մշակվել է Դեյվիդ Ֆինքելհորի և գործընկերների կողմից Նյու Հեմփշիրի համալսարանի երեխաների նկատմամբ հանցագործությունների հետազոտական կենտրոնում և կիրառվում է երեխաների և պատանիների զոհականացման տարբեր ձևերի փորձառությունը չափելու համար: Այն նախատեսված է 8-17 տարեկան երեխաների և պատանիների համար: Այն ընդգրկում է երեխաների զոհականացման լայն շրջանակ, ներառյալ՝ այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են գողությունը, ֆիզիկական հարձակումը, երեխաների նկատմամբ ֆիզիկական, հուզական, սեռական բռնությունը և անտեսումը, ընկերների և քույր-եղբայրների կողմից զոհականացումը (բուլինգ, հարձակումներ), սեռական զոհականացումը (սեռական ոտնձգություն, շահագործում), բռնության ականատես լինելը, համայնքային բռնությանը ենթարկվելը: Գործիքը լայնորեն օգտագործվում է ազգային և միջազգային հետազոտություններում երեխաների նկատմամբ բռնության տարածվածությունը գնահատելու համար:

հաճախականության, բռնարարի, ժամանակի, բացահայտման և պաշտպանության վերաբերյալ հարցերը զետեղվել են հարցաշարի վերջին բաժնում:

Մշակութային և լեզվական համապատասխանությունն ապահովելու համար իրականացվել է հարցաշարի բազմափուլ փորձաքննություն և փորձարկում՝ ներառյալ տեղական փորձագետների հետ Դելֆի մեթոդով հարցաշարի քննարկումը և երեխաների հետ ճանաչողական հարցազրույցները:

ՍՑԵՆԱՐԱՅԻՆ (ՎԻՆՅԵՏԱՅԻՆ) ՀԱՐՑԵՐԸ մշակվել են ռիսկային իրավիճակների ճանաչումն ու գրումինգի (grooming) կամ սեքսթորշնի (sextortion) անուղղակի ազդեցությունը գնահատելու համար: Սցենարները հնարավորություն են տվել մասնակիցներին անդրադառնալու զգայուն թեմաներին՝ առանց անձնական փորձի ուղիղ բացահայտման, ինչը նվազեցրել է կողմնակալության և սթրեսի մակարդակը (Barter & Renold, 2000; Fagerlund & Ellonen, 2016): Յուրաքանչյուր սցենարից հետո երեխաներին տրվել է հարց՝ արդյո՞ք անձամբ ճանաչում են որևէ մեկին, ով հայտնվել է նման իրավիճակում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ. Դպրոցներին տրամադրվել էր տեղեկություն հետազոտության նպատակների մասին և ձեռք էր բերվել գրավոր կամ բանավոր համաձայնություն: ՀՄԿ մասնագետները դասարաններում աշակերտներին ներկայացրել են հետազոտության նպատակը և ընթացակարգը: Նրանք խնդրել են ուսուցիչներին լքել դասարանը տվյալների հավաքագրման ընթացքում, հարցումների ընթացքում դասարաններում դպրոցի անձնակազմի որևէ ներկայացուցիչ ներկա չի գտնվել: Երեխաների նստեցումը կազմակերպվել է այնպես, որպեսզի ապահովվի երեխաների միջև բավարար տարածություն գաղտնիությունը երաշխավորելու համար: Հարցման համար օգտագործվել է Forms.app հարթակը: Էթիկական նկատառումներից ելնելով երեխաներին տրամադրվել են անհատականացված անվտանգ հղումներ, որոնք հասանելի էին QR-կոդերի կամ հղումների միջոցով երեխաների սարքերում կամ ՀՄԿ հոգեբանների տրամադրած սարքերում: Թույլ կապի պարագայում երեխաներին տրամադրվել է շարժական Wi-Fi: Հոգեբանները գտնվել են մոտակայքում աջակցություն ցուցաբերելու համար, սակայն առանց պատասխանները տեսնելու: Էլեկտրոնային հարցաշարը կիրառվել է անանունությունն ապահովելու, կողմնակալությունը նվազեցնելու և երեխաների համար գործընթացի հարմարավետությունը զգայուն հարցերին պատասխանելիս բարձրացնելու համար (Gnambs & Kaspar, 2015; Meinck et al., 2016): Ի լրումն, երեխաներին տրամադրվել են տեղեկատվական թերթիկներ՝ Երեխաների պաշտպանության թեժ գծի վերաբերյալ, որի միջոցով նաև հետագայում նրանք կկարողանային դիմել աջակցության կամ տեղեկատվության համար:

Երեխաների մասնակցությունը կամավոր էր՝ հարթակը նախատեսում էր ցանկացած պահի մասնակցությունից հրաժարվելու հնարավորություն:

Գծապատկեր 1. Ինչպե՞ս կգնահատեք հարցաշարը լրացնելու Ձեր փորձառությունը:



Հարցաշարը լրացնելու փորձառությունը երեխաների կողմից հիմնականում ընկալվել է դրական. մեծ մասը գնահատել է այն «շատ դրական» (24,7%), շատերը նշել են նաև «մտածելու տեղ տվեց» (14,9%) տարբերակը: Միևնույն ժամանակ, հարցվողների զգալի տոկոսը չեն ցանկացել պատասխանել (19%), հատկապես տղաները (27,2%): Բացասական գնահատականները («խիստ բացասական», «բացասական և շփոթեցնող», «ձանձրալի և անտարբեր») համեմատաբար քիչ են նշվել՝ մոտ 9%-ի սահմաններում:

Սեռերի միջև տարբերությունները զգալի չեն, սակայն նկատվում է, որ աղջիկներն ավելի հաճախ են փորձառությունը դրական համարել: Իսկ հարցվածների 14,9%-ին հարցումը մտածելու տեղիք տվեց (տե՛ս Գծապատկեր 1):

ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման վերաբերյալ դպրոցական առցանց հարցմանը մասնակցել են 336 12-17 տարեկան դեռահասներ, որոնցից 196-ը աղջիկներ (58%), իսկ 125-ը տղաներ (42%): Մնացած 15 հարցվածները չեն ցանկացել սեռը նշել:

Ընտրանքում ներառված երեխաների 31,2%-ը երևանյան դպրոցների աշակերտներ են, 28,7%-ը՝ Արարատի մարզի, 19,9%-ը՝ Արմավիրի մարզի և 16,5%-ը՝ Արագածոտնի մարզի: Հարցվածների ևս 3,7%-ը Երևանում գտնվող ճգնաժամային կենտրոնի սաներ են՝ բոլորն իգական սեռի:

Հարցված աղջիկների և տղաների բաշխումն ըստ տարիքային խմբերի ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Հարցված երեխաների բաշխումն ըստ տարիքային խմբերի:

ՏԱՐԻՔԸ	ԱՂՋԻԿՆԵՐ	ՏՂԱՆԵՐ	ԸՆԴԱՄԵՆԸ
12 տարեկան	10,7%	12,0%	11,0%
13 տարեկան	14,3%	25,6%	18,5%
14 տարեկան	18,9%	15,2%	17,0%
15 տարեկան	18,9%	16,0%	17,9%
16 տարեկան	20,9%	12,0%	17,3%
17 տարեկան	14,8%	16,8%	15,2%
Գերադասում է չպատասխանել	1,5%	2,4%	3,3%
ԸՆԴԱՄԵՆԸ	**100%**	**100%**	**100%**

Հետևյալ հարցին *«Դուք բախվո՞ւմ եք որևէ դժվարության, որը խանգարում է Ձեզ անել այն, ինչ կարող են անել մյուս երեխաները»* պատասխանելիս, երեխաների 8,0%-ը նշել են, որ դպրոցում սովորելու դժվարություններ ունեն, 6,0%-ը՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեն, 3,9%-ը՝ վարքի հետ կապված խնդիրներ ունեն *(այս պատասխանի դեպքում տղաների և աղջիկների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (p = 0,01). տղաները ավելի հաճախ են նշում, որ վարքային դժվարություններ ունեն՝ 8,0%-ը, քան աղջիկները՝ 1,0%-ը)*, 3,0%-ը՝ ֆիզիկական հաշմանդամություն և հիվանդություն ունեն: Երեխաների 13,4%-ը այլ դժվարություններ են նշել: Հարցվածների 43,2%-ը որևէ դժվարությունների հետ չեն բախվում. աղջիկների և տղաների պատասխանների տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է՝ աղջիկների կեսից ավելին (50,5%) նշել է, որ չունի որևէ դժվարություն, մինչդեռ տղաները նման պատասխան են տվել զգալիորեն ավելի հազվադեպ՝ 36,0%-ը: Հարցվածների 31,0%-ը (աղջիկներ 20,4% և տղաներ՝ 42,4%) չեն ցանկացել այս հարցին պատասխանել *(տե՛ս Գծապատկեր 1.)*:

Երեխաները միջինում ունեն 1,86 (ստանդարտ շեղումը = 1,22) քույր կամ եղբայր: Իսկ տան անդամների միջին թիվը կազմում է 5,51 (ստանդարտ շեղումը = 1,79):

Հարցված երեխաների մեծամասնությունն ապրում է մայրերի (86,3%), հայրերի (83,9%) և քույր-եղբայրների (83,6%) հետ: Տատիկների հետ են ապրում հարցվածների 46,1%-ը, պապիկների՝ 24,7%-ը: Խորթ ծնողների հետ են ապրում հարցվածների շուրջ 1,0%-ը. խորթ մայրերի հետ՝ 0,9%-ը, խորթ հայրերի՝ 0,6%-ը: Հարցվածների 4,5%-ը նշել են, որ նրանց հետ ապրում են նաև այլ մարդիկ: Հարցվածների 8,0%-ը չեն ցանկացել պատասխանել այս հարցին: Հրաժարվելու դեպքում տղաների և աղջիկների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (p = 0,05). տղաները ավելի հաճախ են հրաժարվում պատասխանել՝ 8,8%-ը, քան աղջիկները՝ 3,6%-ը:

Հարցված երեխաների 79,2%-ը նշել են, որ նրանց հայրն աշխատում է, ևս 65,8%-ը նշել են, որ նրանց մայրն աշխատում է:

Գնահատելով իրենց ընտանիքների եկամուտների մակարդակը՝ հարցված երեխաների մեծամասնությունը նշել է, որ նրանց ընտանիքի եկամուտը միջին է (33,9%) կամ միջինից բարձր (30,1%) *(տե՛ս Գծապատկեր 2.)*:

Գծապատկեր 2. Ինչպե՞ս կնկարագրեիք Ձեր ընտանիքի եկամուտների մակարդակը:



Հարցվողների 2,7%-ը նշել են, որ անցյալ ամսվա ընթացքում նրանց մայրն ապրել կամ աշխատել է տանից դուրս մեկ ամսից ավելի: Նրանցից 0,9%-ը Հայաստանի այլ վայրում են ապրել կամ աշխատել, իսկ 1,8%-ը՝ այլ երկրում: Էապես ավելի բարձր տոկոսը՝ 14,0%-ը նշել են, որ անցյալ ամսվա ընթացքում նրանց հայրն ապրել կամ աշխատել է տանից դուրս մեկ ամսից ավելի. 5,1%-ը՝ Հայաստանի այլ վայրում, 8,9%-ը՝ այլ երկրում:

Հարցված երեխաների 47,6%-ը նշել են, որ սեփական սենյակ ունեն իրենց տանը, 39,6%-ը՝ կիսում են սենյակն ընտանիքի այլ անդամների հետ, 3,6%-ը՝ այլ պատասխան են տվել, իսկ 9,2%-ը չեն ցանկացել պատասխանել: Այս հարցի պատասխանների բաշխումը տղաների և աղջիկների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություն ունի ($p = 0,05$). տղաները ավելի հաճախ սեփական սենյակ ունեն՝ 51,2%-ը, համեմատած աղջիկների 45,9%-ի հետ և համապատասխանաբար աղջիկներն (46,9%) ավելի հաճախ, քան տղաները (32%) սենյակը կիսում են ընտանիքի այլ անդամների հետ: Տղաներն ավելի հաճախ են հրաժարվում պատասխանել՝ 11,2%, քան աղջիկները՝ 5,1%:

Երեխաների մեծ մասը՝ 39%-ը, որպես այն ընտանիքի անդամ, ում հետ ամենաշատ ժամանակն են անցկացնում, նշել է մայրիկին, ինչը ցույց է տալիս մոր դերի կարևորությունը երեխաների առօրյայում: Երկրորդ ամենահաճախ նշված տարբերակը եղել է եղբայրը կամ քույրը՝ 18,5%: Երեխաների միայն 9%-ն են նշել, որ հայրիկի հետ ամենաշատ ժամանակն են անցկացնում, սակայն տարբերությունը սեռերի միջև զգալի է. տղաները զգալիորեն ավելի հաճախ են նշել հայրիկին (16,8%), քան աղջիկները (4,6%): Սա միակ տարբերակն է, որտեղ արձանագրվել է վիճակագրորեն նշանակալի տարբերություն ($p = 0,001$): Տատիկի հետ ամենաշատ ժամանակ անցկացնելու տարբերակը նշել է մոտ 6,5%, իսկ պապիկի դեպքում որևէ պատասխան չի գրանցվել: Մոտ 11%-ը նշել է «այլ բարեկամ» տարբերակը, ինչը վկայում է, որ որոշ երեխաների կյանքում խնամքի և առօրյա աջակցության գործում ներգրավված են նաև ընտանիքի այլ անդամներ: Վերջապես, 15,8%-ը նախընտրել է չպատասխանել հարցին, և այստեղ ևս

նկատվում է տղաների և աղջիկների պատասխանների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություն՝ տղաներն ավելի հաճախ են ընտրել այս տարբերակը (տե՛ս Գծապատկեր 3.):

Գծապատկեր 3. Ձեր ընտանիքի ո՞ր անդամն է Ձեզ հետ համեմատաբար ավելի շատ ժամանակ անցկացնում:



ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՅՆՔՈՒՄ

Երեխաների մեծ մասը դպրոց են գնում ոտքով (52,4%)՝ դպրոցները հիմնականում գտնվում են հասանելի հեռավորության վրա և քայլելով հասնելը սովորական տարբերակ է: 25,3%-ը դպրոց են գնում հարազատների ավտոմեքենայով, ինչը երկրորդ ամենատարածված տարբերակն է: Հասարակական տրանսպորտով են դպրոց հասնում միայն 12,5%-ը: Տաքսիով դպրոց գնալը հազվադեպ երևույթ է՝ ընդամենը 3%, իսկ այլ կերպ են դպրոց հասնում 4,2%-ը (տե՛ս Գծապատկեր 4.):

Գծապատկեր 4. Սովորաբար ինչպե՞ս եք գնում դպրոց:



Երեխաների մեծամասնությունը դպրոց են գնում մենակ (34,5%), 18,5%-ը դպրոց են գնում այլ երեխաների հետ, իսկ 17,6%-ը՝ մեծահասակի ուղեկցությամբ (ծնող կամ այլ բարեկամ): Հարցվածների համեմատաբար փոքր խումբ՝ 6,3%, դպրոց է գնում մի խումբ երեխաների հետ: Այլ ձևեր նշել են 16,7%-ը: Վերջապես, 6,5% երեխաներ նախընտրել են չպատասխանել այս հարցին:

Դպրոց գնալիս կամ դպրոցից տուն վերադառնալիս երեխաների մեծ մասն իրենց անվտանգ են զգում: Սակայն նկատվում են էական տարբերություններ աղջիկների և տղաների ընկալումների միջև: Շատ անվտանգ են զգում երեխաների մոտ 44%-ը: Տղաների մեծ մասն (61,6%) ընտրել է այս տարբերակը, իսկ աղջիկների՝ միայն 34,2%: Սա վկայում է, որ տղաները շատ ավելի վստահ են իրենց անվտանգության հարցում: Բավական անվտանգ են զգում հարցվածների 30,4%-ը: Միջին մակարդակի անվտանգություն նշել է ընդհանուր 16,7%-ը, որի մեծ մասն աղջիկներ են (21,4%՝ տղաների 9,6%-ի դիմաց): Ոչ այնքան անվտանգ կամ ոչ անվտանգ են նշել միասին 5,4%-ը: Աղջիկների շրջանում այս ցուցանիշը կրկնակի բարձր է (7,2%)՝ համեմատած տղաների (2,4%): Վերջապես, չեն ցանկացել պատասխանել այս հարցին հարցվածների 3,6%-ը (տե՛ս Գծապատկեր 5.):

Գծապատկեր 5. Դպրոց գնալիս կամ դպրոցից տուն վերադառնալիս Ձեզ որքա՞ն անվտանգ եք զգում:



Տվյալները վկայում են, որ տղաները դպրոցի ճանապարհին իրենց զգում են ավելի ապահով, քան աղջիկները. նրանց մոտ գերակշռում է «շատ անվտանգ» պատասխանի տարբերակը: Աղջիկներն զգալիորեն ավելի հաճախ են ընտրում միջին կամ ցածր անվտանգության մասին վկայող պատասխանի տարբերակները, ինչը ցույց է տալիս նրանց անվտանգության զգացողության խոցելիությունը և հետևաբար՝ զգուշավորությունը: Աղջիկների և տղաների միջև տարբերություններն զգալի են և վիճակագրորեն նշանակալի ($p = 0,001$):

Նմանապես հաջորդ հարցի պատասխանները ցույց են տալիս, որ երեխաների մեծ մասը՝ 77,7%-ը, չի զգացել վտանգ դպրոց գնալիս կամ տուն վերադառնալիս, սակայն աղջիկների և տղաների ընկալումների միջև դարձյալ նկատվում են էական տարբերություններ: Երբևէ վտանգ չեն զգացել տղաների 88,8%-ը, մինչդեռ աղջիկների 71,4%-ն են այսպես պատասխանել: Աղջիկների 25%-ը նշել են, որ զգացել են վտանգ, տղաներ 8%-ն են վտանգ զգացել: Սա ցույց է տալիս, որ աղջիկներն ավելի հաճախ են առնչվել իրական կամ ընկալվող վտանգի

իրավիճակների հետ:

Տվյալները վկայում են, որ տղաները զգալիորեն ավելի ապահով են զգում իրենց դպրոցի ճանապարհին, և նրանց գերակշռող մեծամասնությունը երբևէ վտանգ չի զգացել (88,8%): Աղջիկներից յուրաքանչյուր չորրորդը (25%) նշել է, որ դպրոց գնալիս կամ վերադառնալիս վտանգ է զգացել, ինչը զգալիորեն բարձր է տղաների համեմատ (8%): Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (p = 0,001) և ցույց է տալիս գենդերային զգայուն ռիսկերի առկայություն (տե՛ս Գծապատկեր 6.):

Գծապատկեր 6. Դպրոց գնալիս կամ դպրոցից տուն վերադառնալիս երբևէ վտանգ զգացել եք:



Հաջորդ հարցի պատասխանները ցույց են տալիս փողոցում վտանգին արձագանքելու երեխաների տարբեր ռազմավարությունները: Առավել հաճախ ընտրված պատասխանի տարբերակը «անտեսել վտանգի զգացումը և շարունակել ճանապարհը»՝ 34,5%: Սակայն աղջիկների և տղաների մոտ արձագանքման ձևերը զգալիորեն տարբերվում են: Տղաները (39,2%) ավելի հաճախ են ընտրում անտեսման տարբերակը, քան աղջիկները (32,7%): Սա վկայում է, որ տղաները հակված են վտանգի զգացումը թերագնահատել կամ անտեսել: «Զանգահարում կամ գրում եմ ծնողիս» տարբերակն ընտրել է ընդհանուր 22,9%, բայց աղջիկների և տղաների միջև տարբերությունը մեծ է. աղջիկների 31,6%-ը և տղաների 11,2%-ն են ընտրել այս տարբերակը: Սա ցույց է տալիս, որ աղջիկներն ավելի հաճախ են օգնություն խնդրում ծնողներից և բաց են շփումների համար, իսկ տղաները խուսափում են դիմել ծնողների օգնությանը և թույլ թվալ: Անվտանգ տեղ են փնտրում (խանութ, հանրային վայր և այլն)» հարցվածների 14,9%-ը (աղջիկների 17,9% և տղաների 11,2%): Սա ևս խոսում է աղջիկների կողմից պաշտպանական ռազմավարությունների կիրառման ավելի բարձր պատրաստակամության մասին: Մոտակայքում գտնվող մեծահասակից օգնություն են խնդրում հարցվածների 5,1%-ը: Այլ տարբերակներ նշեցին երեխաների 10,1%-ը, տղաների ավելի բարձր տոկոսը (14,4%), քան աղջիկների (6,6%): Հարցվածների 12,5%-ը չցանկացան պատասխանել այս հարցին, սակայն տղաներն էապես ավելի հաճախ (19,2%)՝ համեմատած աղջիկների (5,6%) հետ (տե՛ս Գծապատկեր 7.): Այս հարցին տղաների և աղջիկների պատասխանների տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (p = 0,01): Աղջիկները հակված են պաշտպանական վարքագծի. հաճախ զանգահարում են ծնողներին կամ

փնտրում են անվտանգ վայր: Տղաներն ավելի հաճախ են անտեսում վտանգի զգացումը կամ նշում պատասխանի այլ տարբերակներ, ինչպես նաև խուսափում են հարցին պատասխանելուց: Այսպիսով՝ աղջիկների մոտ գերակշռում են օգնություն ստանալու և պաշտպանվելու ռազմավարությունները, իսկ տղաների մոտ՝ վտանգի զգացումը չընդունելու կամ չբացահայտելու վարքագիծը:

Գծապատկեր 7. Եթե դպրոց գնալիս կամ դպրոցից վերադառնալիս փողոցում վտանգ եք զգում, սովորաբար ի՞նչ եք անում:



Հարցվածների 13,4%-ը նշել են, որ դպրոց գնալու կամ վերադառնալու ճանապարհին կոնկրետ վայրեր կան, որտեղ նրանք անվտանգ չեն զգում: Ընդ որում աղջիկների 18,9%-ն են տվել այսպիսի պատասխան, իսկ տղաների՝ միայն 6,4%-ը: Սա ցույց է տալիս, որ աղջիկներն ավելի հաճախ են դպրոցի ճանապարհին տարբեր վայրեր համարում վտանգավոր: Տղաները դարձյալ ավելի հաճախ, քան աղջիկները չեն ցանկացել պատասխանել այս հարցին՝ 10,4%, համեմատած աղջիկների 3,6%-ի հետ (տե՛ս Գծապատկեր 8.): Աղջիկների և տղաների պատասխանների միջև տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են ($p = 0,01$):

Աղջիկներն ավելի հաճախ են վտանգավոր վայրեր նկատում իրենց ճանապարհին, ինչը վկայում է նրանց անվտանգության ընկալման զգայունության և զգոնության մասին: Տղաները հիմնականում չեն նշում նման վայրեր և ավելի հաճախ են «չեմ ուզում ասել» պատասխանը տալիս, ինչը կարող է արտացոլել նրանց խուսափողական վերաբերմունքը կամ չբացահայտելու ցանկությունը:

Գծապատկեր 8. Դպրոց գնալու կամ վերադառնալու ճանապարհին կոնկրետ վայրեր կա՞ն, որտեղ Ձեզ անվտանգ չեք զգում:



Աղջիկների 46,9%-ը դպրոց գնալու կամ դպրոցից վերադառնալու ճանապարհին վտանգ զգալու մասին երբևէ ասել է մեծահասակներին (ծնողին, ուսուցչին և այլն): Տղաները շատ ավելի հազվադեպ են ասել մեծահասակներին նման բան՝ 18,4% դեպքերում (տե՛ս Գծապատկեր 9.): Տղաների և աղջիկների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (χ^2 = 24,123, p = 0,001):

Աղջիկները շատ ավելի հաճախ են կիսվում մեծահասակների հետ ճանապարհին վտանգի զգացումների մասին: Տղաները հակված են լռել կամ չբացահայտել. նրանց մեծ մասը չի պատմել մեծահասակներին, իսկ որոշ մասը նույնիսկ խուսափել է հարցին պատասխանելուց: Սա ցույց է տալիս ոչ միայն գենդերային տարբերություն վտանգի ընկալման հարցում, այլ նաև վտանգին արձագանքման մշակույթում. աղջիկներն ավելի հաճախ են դիմում աջակցության, մինչդեռ տղաները կարող են փորձել ինքնուրույն հաղթահարել կամ թաքցնել նման փորձառությունները: Աղջիկները վտանգի մասին խոսելը դիտում են որպես բնական վարքագիծ, մինչդեռ տղաների մոտ գերակշռում է չխոսելու կամ չբացահայտելու ռազմավարությունը:

Գծապատկեր 9. Երբևէ դպրոց գնալու կամ դպրոցից վերադառնալու ճանապարհին վտանգ զգալու մասին ասե՞լ եք մեծահասակներին (ծնողի, ուսուցչի և այլն):



Այն դեպքերում, երբ երեխաներն ասել են որևէ մեծահասակի դպրոց գնալու կամ վերադառնալու ճանապարհին զգացած վտանգի մասին, դեպքերի 72%-ի դեպքերում այդ մեծահասակներն ինչ-որ բան են արել, որպեսզի երեխան ավելի անվտանգ զգա (օրինակ՝ փոխել են ճանապարհը, որով դպրոց է գնում երեխան, կամ ուղեկցել են նրան): Միայն 7,6% դեպքերում երեխային լսել են, բայց որևէ բան չեն արել: Երեխաների 2,5% նշել են, որ մեծահասակները լուրջ չեն վերաբերվել, ընդ որում այս պատասխանը շատ ավելի հաճախ տվել են տղաները (8,7%), քան աղջիկները (1,1%):

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Դպրոցում երեխաների անվտանգությունը չափելու համար տվյալ հարցման ընթացքում երեխաներին առաջարկվել է լրացնել «Դպրոցում ընկալվող անվտանգության սանդղակը» (Perceived School Safety Scale): Այս միջազգայնորեն ճանաչված գործիքը գնահատում է, թե որքան անվտանգ են իրենց զգում աշակերտները դպրոցում և դպրոց գնալու կամ վերադառնալու ճանապարհին: Այն օգտագործվում է երեխաների զարգացման, կրթության և հանրային առողջության ոլորտների հետազոտություններում: Սանդղակը ներառում է ֆիզիկական, հուզական, միջավայրային և տեղաշարժման անվտանգության վերաբերյալ դատողություններ, որոնց պատասխանի տարբերակները Լայքերտի սանդղակների[3] ձևաչափով են կառուցված: Այս չափումն արտացոլում է, թե որքան ապահով են իրենց զգում աշակերտները դպրոցում և դրա մոտակայքում:

Գծապատկեր 10-ի սյուները ներկայացնում են դպրոցական անվտանգության ընդհանուր ընկալման միջին գնահատականն ըստ սեռի: Հարցման արդյունքների համաձայն աղջիկները միջինում ավելի բարձր են գնահատել իրենց անվտանգությունը (10,22), քան տղաները (8,26) (տե՛ս Գծապատկեր 10.):

Գծապատկեր 10. Դպրոցում անվտանգության ընկալման միջին միավոր (ըստ սեռի):



3. **Լայքերտի սանդղակը** կարգային (օրդինալ) սանդղակ է, որն արդյունավետ օգտագործվում է վերաբերմունք և կարծիք չափելու համար ըստ պնդումների հետ համաձայնության աստիճանի: Սանդղակը սովորաբար 5 կամ 7 աստիճան ունի՝ «լիովին համաձայն չեմ» → «լիովին համաձայն եմ»: Վերլուծության ժամանակ հաճախ մի քանի պնդումների միավորները գումարվում են ինդեքս ստանալու համար:

Գծապատկեր 11-ը ներկայացնում է աշակերտների դպրոցում անվտանգության ընկալումը և մեծահասակների հետ փոխհարաբերությունների որակը: Տվյալները ցույց են տալիս, որ երեխաների մեծամասնությունը դպրոցում իրենց հիմնականում ապահով է զգում և վստահում է առնվազն մեկ մեծահասակի: Սակայն աղջիկների և տղաների պատասխաններում նկատվում են զգալի տարբերություններ, հատկապես մեծահասակների ուշադրության և երեխաների կարծիքի կարևորության գնահատման հարցերում:

«Իմ դպրոցում մեծահասակների համար կարևոր են երեխաներն ու պատանիները» պնդման հետ համաձայն են հարցվածների 69,6%-ը, ընդ որում աղջիկների՝ 79,6%-ը, իսկ տղաների՝ 57,6%-ը: Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է ($p \leq 0,05$): Աղջիկներն ավելի հաճախ են նշում, որ իրենց կարևորում են, մինչդեռ տղաները հաճախ չեն ցանկանում պատասխանել այս հարցին (15,2%) (տե՛ս Գծապատկեր 11.):

«Մեծահասակները կարևորում են երեխաների կարծիքն ու տեսակետը» պնդման հետ համաձայն են հարցվածների 64,3%-ը, ընդ որում աղջիկների՝ 73,5%-ը, իսկ տղաների՝ 52,8%-ը: Տարբերությունը վիճակագրորեն շատ նշանակալի է ($p \leq 0,01$): Տղաներն ավելի հաճախ են ընտրում «համաձայն չեմ» կամ «չեմ ուզում ասել» պատասխանի տարբերակները (տե՛ս Գծապատկեր 11.):

Գծապատկեր 11. Որքանո՞վ եք համաձայն Ձեր դպրոցի մասին հետևյալ պնդումների հետ:



«Մեծահասակները խոսում են այն թեմաների մասին, որոնք անհանգստացնում են երեխաներին» պնդման հետ համաձայն են հարցվածների 47,9%-ը, ընդ որում աղջիկների՝ 60,7%-ը, իսկ տղաների՝ միայն 32,0%-ը: Տարբերությունը վիճակագրորեն շատ նշանակալի է ($p \leq 0,001$): Աղջիկներն զգալիորեն ավելի հաճախ են նշում, որ մեծահասակները խոսում են իրենց մտահոգող հարցերի մասին: Տղաների մոտ գերակշռում է «համաձայն չեմ» պատասխանի տարբերակը (տե՛ս Գծապատկեր 11.):

«Երեխաներն ավելի շատ հույսը դնում են ընկերների վրա, քան մեծահասակների» պնդման հետ համաձայն են հարցվածների 55,1%-ը: Սեռերի միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ. և՛ տղաները, և՛ աղջիկները դիտարկում են ընկերներին որպես աջակցության կարևոր աղբյուր (տե՛ս Գծապատկեր 11.):

«Մեծահասակներն ուշադրություն են դարձնում երեխաների մտահոգություններին» պնդման հետ համաձայն են հարցվածների 72,3%-ը, ընդ որում աղջիկների՝ 80,1%-ը, իսկ տղաներ՝ 63,2%-ը: Տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ, բայց միտումը հստակ է. աղջիկներն ավելի վստահ են, որ իրենց լսում են (տե՛ս Գծապատկեր 11.):

«Երբ դպրոցում եմ, ինձ հիմնականում ապահով եմ զգում» պնդման հետ համաձայն են հարցվածների 82,4%-ը, ընդ որում աղջիկների՝ 88,3%-ը, իսկ տղաների՝ 76,8%-ը: Տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ, բայց աղջիկներն ավելի բարձր են գնահատում իրենց ապահովությունը (տե՛ս Գծապատկեր 11.):

«Դպրոցում կա մեծահասակ, ում ես վստահում եմ» պնդման հետ համաձայն են հարցվածների 67,6%-ը: Սեռերի միջև տարբերությունը նշանակալի չէ. և՛ տղաները, և՛ աղջիկները դպրոցում ունեն վստահելի մեծահասակ (տե՛ս Գծապատկեր 11.):

Աղջիկներն ավելի բարձր են գնահատում մեծահասակների աջակցությունն ու ուշադրությունը. նրանք ավելի հաճախ են նշում, որ իրենց կարևորում են և խոսում են իրենց մտահոգող թեմաների մասին: Տղաներն ավելի հաճախ են նշում հակառակ տարբերակները կամ խուսափում են պատասխանելուց, ինչը ցույց է տալիս ցածր վստահության մակարդակը և, հնարավոր է, ավելի զգուշավոր վերաբերմունքը դպրոցական միջավայրի նկատմամբ: Ընդհանուր առմամբ, ապահովության զգացումը բավական բարձր է (82,4%), սակայն մոտ մեկ հինգերորդը կամ չի համաձայնում, կամ դժվարանում է պատասխանել սանդղակում ներկայացված պնդումներին: Շատ կարևոր է, որ երեխաների կեսից ավելին հույսը դնում են ընկերների վրա (55,1%), ինչը վկայում է հասակակիցների դերի կարևորության մասին (տե՛ս Գծապատկեր 11.):

Ընդհանուր առմամբ, աղջիկները դպրոցը գնահատում են որպես ավելի անվտանգ և աջակցող միջավայր, մինչդեռ տղաների մոտ զգացվում է դպրոցից հեռացման, բացառման որոշակի միտում և մեծահասակների հանդեպ վստահության ցածր մակարդակ:

Սպիրմանի կարգային կոռելյացիոն գործակիցը (Spearman's $\rho = 0,071$) ցույց է տալիս դրական, բայց շատ թույլ կոռելյացիա տարիքի և դպրոցական միջավայրի անվտանգության ընկալման միջև. տարիքի աճը գրեթե կապված չէ երեխաների մոտ անվտանգության ընկալման մակարդակի փոփոխության հետ:

Դպրոցում երեխաները կարող են վախ կամ անհանգստություն զգալ՝ մեծահասակների հարկադրանքի հետևանքով: Հարցման արդյունքները ցույց են տալիս, թե ում հետ երեխաները կխոսեին այդ մասին: Մայրիկին կդիմեին հարցվածների 46,4%-ը. սա ամենահաճախ նշված պատասխանի տարբերակն է: Աղջիկների պարագայում այս տոկոսն էապես ավելի բարձր է՝ 63,8%, համեմատած տղաների 22,4%-ի հետ: Տղաների և աղջիկների պատասխանների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է ($p \leq 0,001$) (տե՛ս Գծապատկեր 12.):

Հայրիկին կդիմեն հարցվածների 23,2%-ը, ընդ որում աղջիկների՝ 21,4%-ը, իսկ տղաների՝ 26,4%-ը): Տղաների և աղջիկների պատասխանների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ: Հայրը դիտվում է որպես պակաս կարևոր վստահելի անձ, քան մայրը, ինչպես նաև ընկերը, ում կդիմեին հարցվողների 33,9%-ը: Սա երկրորդ ամենահաճախ նշված տարբերակն է. երեխաները շատ են կարևորում հասակակիցների աջակցությունը (տե՛ս Գծապատկեր 12.):

Դպրոցի ուսուցչին կդիմեին հարցվածների 14,6%-ը: Պատասխանի այս տարբերակի դեպքում տղաների և աղջիկների պատասխանների միջև տարբերությունը նույնպես նշանակալի է ($p \leq 0,01$). աղջիկներն էապես ավելի հաճախ կդիմեին ուսուցիչներին (18,4%), քան տղաները (8,0%) (տե՛ս Գծապատկեր 12.):

Դպրոցի հոգեբանին կդիմեին հարցված երեխաների 3,6%-ը: Այս պատասխանի տարբերակն ընտրել են միայն աղջիկները (5,1%): Տարբեր սեռերի հարցվողների միջև տարբերությունը դարձյալ նշանակալի է (տե՛ս Գծապատկեր 12.):

Ոստիկանին, թեժ գիծ կամ երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությանը կդիմեին շատ քչերը՝ 1,5–2%, հիմնականում աղջիկները:

Այս պատկերը ցույց է տալիս, որ ինստիտուցիոնալ օգնության ուղիները երեխաների կողմից գրեթե չեն ընկալվում որպես իրատեսական տարբերակ (տե՛ս Գծապատկեր 12.):

Ոչ ոքի չէին ասի հարցվածների 10,7%-ը, ընդ որում աղջիկների՝ 8,2%-ը, իսկ տղաների երկու անգամ ավելի մեծ չափաբաժինը՝ 16%-ը: Տարբեր սեռերի հարցվողների պատասխանների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է ($p \leq 0,05$). տղաներն ավելի հաճախ են նախընտրում ոչ ոքի չասել (տե՛ս Գծապատկեր 12.):

Չցանկացան պատասխանել այս հարցին հարցվողների 10,7%-ը, դարձյալ տղաների էական գերազանցությամբ՝ 17,6%, համեմատած աղջիկների 4,1%-ի հետ: Այս տարբերությունը վիճակագրորեն շատ նշանակալի է ($p \leq 0,001$). տղաներն ավելի հաճախ են խուսափում պատասխանելուց (տե՛ս Գծապատկեր 12.):

Գծապատկեր 12. Երբեմն երեխաները և պատանիները վախի կամ անհանգստության զգացումներ են ունենում, երբ մեծահասակներն ստիպում են նրանց անել ինչ-որ բաներ, ինչը նրանք չեն ցանկանում: Եթե Ձեզ հետ դպրոցում այդպիսի բան պատահեր, ու՞մ հետ կխոսեիք այդ մասին:



Այլ պատասխաններ են տվել հարցվողների 19,9%-ը, ընդ որում աղջիկների՝ 12,2%-ը, իսկ տղաների՝ 27,2%-ը: Այս տարբերությունը նույնպես վիճակագրորեն նշանակալի է ($p \leq 0,001$). տղաներն ավելի շատ են նշում այլ տարբերակներ (տե՛ս Գծապատկեր 12.):

Այսպիսով՝ աղջիկների համար ամենավստահելի անձը մայրիկն է: Տղաներն ավելի հաճախ լռում են կամ ընտրում են այլ տարբերակներ: Ընկերները կարևոր դեր ունեն և՛ տղաների, և՛ աղջիկների համար՝ հարցվողների մոտ մեկ երրորդը կխոսեր հենց նրանց հետ: Դպրոցի ուսուցիչներն ու հոգեբանները հազվադեպ են դիտվում որպես վստահելի զրուցակից, հատկապես տղաների կողմից: Ինստիտուցիոնալ աջակցությունը (ոստիկան, թեժ գիծ, ՀԿ-ներ) գրեթե չի օգտագործվում:

Երեխաներն ու պատանիները դպրոցում մեծահասակներից օգնություն խնդրելու հարցում կարող են բախվել մի շարք խոչընդոտների հետ: 39,6%-ը մեծահասակների հետ խոսելու

դեպքում անհարմարություն են զգում: 19,6%-ը կվախենային և ոչինչ չէին ասի, ընդ որում աղջիկների՝ 21,4%-ը, իսկ տղաների՝ 16,8%-ը: Տարբեր սեռերի հարցվողների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է ($p \leq 0,01$) հիմնականում «չեմ ուզում ասել» տարբերակի դեպքում (աղջիկներ՝ 2,6%, տղաներ՝ 21,6%): Սա ցույց է տալիս, որ տղաները շատ ավելի հաճախ խուսափում են պատասխանելուց, ինչը կարող է ցույց տալ լռության կամ թաքցնելու վարքագիծ: 14,3%-ը համարում են, որ մեծահասակները չգիտեն, թե ինչ անել նման իրավիճակներում: 61,3%-ը գերադասում են ինքնուրույն զբաղվել նման հարցերով, ընդ որում տղաների՝ 72%-ը, իսկ աղջիկների՝ 54,6%-ը: Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է ($p \leq 0,001$): Տղաներն ավելի հաճախ են նշում, որ կնախընտրեին ինքնուրույն լուծել խնդիրը: Հարցվածների 9,2% մտավախություն ունեն, որ մեծահասակներն իրենց չեն հավատա (տե՛ս Գծապատկեր 13.):

Այսպիսով՝ աղջիկներն ավելի պատրաստակամ են խոսելու և օգնություն խնդրելու հարցում, մինչդեռ տղաները հակված են ինքնուրույն լուծել կամ լռել: Սա արտացոլում է մշակութային և գենդերային դերերի ազդեցությունը երեխաների վարքագծի վրա:

Գծապատկեր 13. Երբեմն լինում են իրավիճակներ, որոնք ետ են պահում երեխաներին և պատանիներին իրենց անհանգստացնող իրավիճակներում դպրոցում օգնության դիմել: Որքանո՞վ եք համաձայն հետևյալ պնդումների հետ:



Երեխաների մեծամասնությունը նշում է, որ իրենց համար դպրոցը շատ (43,2%) կամ բավական (40,8%) անվտանգ է: Սակայն աղջիկների և տղաների պատասխաններում նկատվում են զգալի տարբերություններ: Տղաների զգալիորեն ավելի բարձր տոկոսն են նշել, որ դպրոցում իրենց «շատ անվտանգ» են զգում (54,4%), համեմատած աղջիկների 36,7%-ի հետ: Տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է ($p \leq 0,01$): «Բավական անվտանգ» են զգում ավելի շատ աղջիկները (50%)՝ համեմատած տղաների հետ (30,4%): Միջին մակարդակի անվտանգության մասին նշել են հարցվածների 7,1%-ը, իսկ 4,8% ոչ այնքան անվտանգ և ոչ անվտանգ են զգում: Սա վկայում է, որ երեխաների շատ փոքր հատվածն է դպրոցում իրեն բացահայտ անապահով զգում: Այս հարցին չցանկացան պատասխանել հարցվածների 4,2%-ը (տե՛ս Գծապատկեր 14.):

Այսպիսով՝ տղաներն ավելի հաճախ են նշում, որ դպրոցում շատ անվտանգ են զգում, մինչդեռ աղջիկներն ավելի հակված են ընտրելու «բավական անվտանգ» տարբերակը: Աղջիկների մոտ համեմատաբար ցածր է լիարժեք անվտանգության զգացումը: Ընդհանուր առմամբ, ավելի քան 80% երեխաների համար դպրոցն ընկալվում է որպես ապահով միջավայր, սակայն շուրջ 5%-ը չի կիսում այդ կարծիքը:

Գծապատկեր 14. Ընդհանուր առմամբ Ձեզ որքա՞ն անվտանգ եք զգում դպրոցում:



ԱՌՑԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մեր օրերում համացանցը դպրոցականների առօրյայի անբաժանելի մասն է. երեխաների ավելի քան 90%-ն (և՛ աղջիկները, և՛ տղաները) առցանց են ամեն օր և անգամ օրական մի քանի անգամ: Ընդ որում հարցվածների 72,3%-ը (տե՛ս Գծապատկեր 15.) (26,8%+33,8%+33,6%) առաջին անգամ օգտվել են համացանցից 11 տարեկանում կամ ավելի վաղ տարիքում (տե՛ս Գծապատկեր 16.):

Գծապատկեր 15. Որքա՞ն հաճախ եք օգտվում համացանցից:



Գծապատկեր 16. Քանի՞ տարեկան էիք, երբ առաջին անգամ օգտվեցիք համացանցից:



Հարցվածներն ամենաշատն օգտվում են հետևյալ սոցիալական ցանցերից կամ խաղային հարթակներից՝ Instagram (63,9%), Snapchat (48,9%), TikTok (46,7%) և Telegram (38,4%): TikTok-ից օգտվում են աղջիկների համեմատաբար ցածր տոկոսը (40,6%), իսկ տղաների՝ 56,1%-ը: Snapchat-ից ավելի շատ օգտվում են աղջիկները (56,3%), քան տղաները (37,7%): Այս տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են ($p \leq 0,01$): Discord-ից էապես ավելի շատ տղաներ են օգտվում՝ 10,5%, համեմատած աղջիկների ընդամենը 1%-ի հետ (տե՛ս Գծապատկեր 17.): Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է ($p \leq 0,001$):

Գծապատկեր 17. Սոցիալական ո՞ր ցանցերից կամ խաղային հարթակներից եք ամենաշատն օգտվում:



Հարցվածների 38,8% նշել են, որ նրանց առավել ակտիվ էջում/պրոֆիլում 100-ից ավել կոնտակտ ունեն (տե՛ս Գծապատկեր 18.): Մեծամասնության էջում/պրոֆիլում տեսանելի է նրանց ազգանունը (47,9%) և նկարը, որում հստակ երևում է նրանց դեմքը (35,9%): Վերջինս էապես ավելի հաճախ տեսանելի է աղջիկների էջում/պրոֆիլում (42,7%), քան տղաների (26,3%): Այս տարբերությունը վիճակագրորեն շատ նշանակալի է ($p \leq 0,01$) (տե՛ս Գծապատկեր 19.):

Գծապատկեր 18. Ձեր ամենաակտիվ էջում/պրոֆիլում մոտավորապես քանի՞ կոնտակտ ունեք (օրինակ՝ ընկեր, կապ, հետևորդ):



Գծապատկեր 19. Ձեր էջում/պրոֆիլում հետևյալ ինֆորմացիայից ո՞րն է տեսանելի:



Երեխաների մեծ մասն զգուշավոր է օնլայն ընկերանալու հարցում. գրեթե 60%-ը ընդունում է ընկերանալու առաջարկը միայն այն դեպքում, երբ ճանաչում է մարդուն: Տղաներն ավելի հաճախ են ընդունում բոլոր կամ «ընդհանուր ընկերների» առաջարկները, ինչը վկայում է նրանց ավելի ռիսկային վարքագծի մասին: Աղջիկներն ավելի հաճախ են շեշտում անձնական կամ լավ ծանոթությունը՝ որպես ընկերության առաջարկն ընդունելու նախապայման: Ընդունում են բոլոր առաջարկները հարցվածների 7,0%-ը, ընդ որում՝ տղաների ավելի բարձր տոկոսը (10,5%)՝ համեմատած աղջիկների հետ (5,2%): Ընկերանալու առաջարկն ընդունում են, եթե ընդհանուր ընկերներ ունեն, հարցվածների 15,6%-ը, ընդ որում աղջիկների՝ 14,1%-ը, իսկ տղաների՝ 19,3%-ը: Տարբեր սեռերի հարցվողների պատասխանների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է ($p \leq 0,05$): Ընկերանալու առաջարկն ընդունում է, եթե ճանաչում է այդ մարդուն, հարցվածների ամենամեծ խումբը՝ 38,7%-ը, ընդ որում աղջիկների՝ 44,3%-ը, իսկ տղաների՝ 29,8%-ը: Տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ, բայց միտումը հստակ է. աղջիկներն ավելի զգուշավոր են: Ընկերանալու առաջարկն ընդունում են, եթե շատ լավ են ճանաչում առաջարկ ուղարկողին, հարցվածների 18,4%-ը, ընդ որում աղջիկների տոկոսը կրկնակի բարձր է (22,4% ընդդեմ 11,4%): Ընկերանալու առաջարկն ընդունում են ծնողի/խնամակալի թույլտվությամբ հարցվածների ընդամենը 3,8%-ը: Չեն ընդունում ոչ մի առաջարկ՝ 1,3%-ը: Այլ տարբերակը նշեցին հարցվածների 4,8%-ը: Այս հարցին չցանկացան

պատասխանել 10,5%-ը, ընդ որում պատասխանել չցանկացողների տոկոսը բարձր է հատկապես տղաների մոտ (17,5% ընդդեմ աղջիկների 5,2%) (տե՛ս Գծապատկեր 20.):

Գծապատկեր 20. Սովորաբար ի՞նչ եք պատասխանում օնլայն ընկերանալու առաջարկներին:



Գծապատկեր 21-ը ցույց է տալիս, թե որքան հաճախ են դպրոցականները ռիսկային վարքագիծ դրսևորում առցանց՝ նոր ծանոթներ փնտրել, անձնական տվյալներ կամ լուսանկարներ ուղարկել, առցանց ներկայանալ որպես այլ մարդ: Ընդհանուր պատկերը վկայում է, որ երեխաների մեծամասնությունը երբեք չի դրսևորում վտանգավոր առցանց վարքագիծ, սակայն շուրջ 15–25%–ը գոնե մեկ նման փորձ ունեցել են: Անծանոթներին ընկերների ցանկում ավելացնելը և լուսանկար ուղարկելը ամենատարածված ռիսկային վարքագծերն են: Անձնական տվյալների փոխանցումը քիչ է հանդիպում:

Նոր ընկերներ կամ կոնտակտներ առցանց երբեք չեն փնտրել հարցվածների 52,4%-ը: Միայն մեկ կամ երկու անգամ են փնտրել՝ 26%-ը: Անձնական տվյալներ անծանոթին երբեք չեն ուղարկել հարցվածների 80,6%-ը: Միայն մեկ կամ երկու անգամ են ուղարկել՝ 12,7%-ը: Անծանոթ մարդկանց ընկերների ցանկում երբևէ չեն ավելացրել հարցվածների 61,3%-ը: Միայն մեկ կամ երկու անգամ են ավելացրել՝ 25,7%-ը:

Առցանց այլ մարդ երբեք չեն ձևացել հարցվածների 72,7%-ը: Միայն մեկ կամ երկու անգամ են ձևացել՝ 18,7%-ը: Անծանոթին լուսանկար կամ տեսանյութ երբևէ չեն ուղարկել հարցվածների 74%-ը: Միայն մեկ կամ երկու անգամ են ուղարկել՝ 15,6%-ը (տե՛ս Գծապատկեր 21.):

Գծապատկեր 21. Որքա՞ն հաճախ եք արել հետևյալ բաներն օնլայն կամ հեռախոսով:



Հարցված երեխաների զգալի մասը համացանցում ապահով են զգում և կարծում են, որ գիտեն՝ ինչ անել անհարմար իրավիճակներում, սակայն բարձր է նաև անվստահության և զգուշավորության մակարդակը:

Հարցվածների միայն 20%-ն են կարծում, որ մարդիկ համացանցում հիմնականում բարի են: Սա վկայում է զգուշավոր մոտեցման և ցածր վստահության մասին: 60%-ից ավելին ասում են, որ հիմնականում կամ լիովին գիտեն՝ ինչ անել, եթե ինչ-որ մեկն առցանց անհարմար բան անի: Հարցվածների միայն 19,7%-ն են համաձայն կամ լիովին համաձայն, որ ավելի հեշտ է առցանց իրական դեմքը ցույց տալ: 52,7%-ը բոլորովին համաձայն չեն, որ առցանց ավելի շատ են անձնական բնույթի թեմաներից խոսում: Միայն 17,2%-ն են ընդունում, որ առցանց անդարադառնում են անձնական թեմաների: Տղաներն ավելի հաճախ են խուսափում պատասխանելուց, քան աղջիկները (տե՛ս Գծապատկեր 22.):

Գծապատկեր 22. Որքանո՞վ եք համաձայն հետևյալ պնդումների հետ:



Այդուհանդերձ, հարցվածների 31,7%-ն երբևէ հանդիպել է դեմ առ դեմ ինչ-որ մեկին, ում հետ սկզբում համացանցով է ծանոթացել:

Երեխաների մեծամասնությունը (86,4%) միշտ կամ հիմնականում կարող են օգտվել համացանցից, երբ ուզում են կամ երբ կարիքն ունեն (տե՛ս Գծապատկեր 23.): Իսկ երեխաների 74,9%-ին միշտ թույլ են տալիս օգտվել համակարգչից և սմարթֆոնից, երբ նրանք իրենց սենյակում մենակ են (տե՛ս Գծապատկեր 24.):

Գծապատկեր 23. Դուք կարո՞ղ եք օգտվել ինտերնետից, երբ ուզեք կամ երբ կարիքն ունենաք:



Գծապատկեր 24. Ձեզ թույլ տալի՞ս են օգտվել Ձեր համակարգչից և սմարթֆոնից, երբ Ձեր սենյակում մենակ եք:



Հարցման արդյունքները վկայում են, որ դեռահասների մեծամասնությունն առցանց վնասի փորձառություն չեն ունեցել, սակայն մոտ մեկ քառորդը (23,5%) գոնե մեկ անգամ բախվել են քննարկված իրավիճակներից որևէ մեկին (տե՛ս Գծապատկեր 25.): Ամենատարածված խնդիրը սարքերի վարակումն է՝ երեխաների 12,7%-ի դեպքում սարքը վարակվել է վիրուսով կամ լրտեսող ծրագրով: 5,4%-ի անձնական տվյալներն օգտագործվել են իրենց ցանկությանը հակառակ: Եվս 5,4%-ի գաղտնաբառն ինչ-որ մեկն օգտագործել է՝ իր տեղեկություններին հասանելիություն ստանալու համար կամ ձևացնելու, որ նա տվյալ անձնավորությունն է: 3,2%-ը գումար են կորցրել խաբեության պատճառով: Եվս 3,2%-ի մասին թշնամական կամ վիրավորական էջ/պատկեր են ստեղծել (տե՛ս Գծապատկեր 26.): Աղջիկների և տղաների

պատասխանների միջև էական տարբերություններ չկան: Սակայն տղաները համեմատաբար ավելի հաճախ չեն ցանկացել պատասխանել այս հարցին:

Գծապատկեր 25. Առցանց վնասի փորձառություն:



Գծապատկեր 26. Ձեզ հետ ինտերնետում հետևյալ բաներից որևէ մեկը պատահե՞լ է:



Երբ առցանց կամ հեռախոսով տեղի ունեցածը երեխաներին տխրեցնում կամ անհանգստացնում է, նրանք կիսվում են հիմնականում ընկերների կամ մայրիկի հետ, սակայն բավականին մեծ տոկոսն ընդհանրապես ոչ ոքի չի պատմում: Ընկերների հետ են խոսում երեխաների 48,6%-ը, ընդ որում՝ տղաների 40,7%-ը, իսկ աղջիկների 56,8%-ը: Սա ամենատարածված պատասխանի տարբերակն է: Մայրիկին են դիմում երեխաների 29,7%-ը, բայց տարբեր սեռերի երեխաների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերությամբ ($p \leq 0,001$)՝ աղջիկների 45,5%, իսկ տղաների՝ ընդամենը 3,7%: Հայրիկին են դիմում հարցվածների միայն 8,1%-ը, ընդ որում տղաների ավելի բարձր տոկոսը՝ 11,1%, քան աղջիկների՝ 6,8%: Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ, բայց ցույց է տալիս տղաների կողմից նույն սեռի ծնողի՝ հայրիկի, հետ կիսվելու ձգտումը: Դպրոցի ուսուցչին կամ հոգեբանին են դիմում

երեխաների շատ ցածր տոկոսը՝ 4%: Ոստիկանին երեխաներից որևէ մեկը չի դիմել: Ոչ ոքի չեն դիմում հարցվածների 27%-ը, ընդ որում՝ տղաների 48,1%-ը, իսկ աղջիկների՝ 13,6%-ը: Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (p ≤ 0,01) (տե՛ս Գծապատկեր 27.):

Այսպիսով՝ աղջիկների մեծ մասը նախընտրում է կիսվել մայրիկի կամ ընկերների հետ, իսկ տղաների մեծ մասը՝ ոչ ոքի չի պատմում: Ընկերները կարևոր աջակցություն են երկու սեռերի երեխաների համար: Դպրոցական անձնակազմի՝ ուսուցիչների կամ հոգեբանների դերը շատ թույլ է. երեխաները գրեթե չեն դիմում նրանց: Տղաները հակված են լռել կամ խուսափել պատասխանելուց, ինչը վկայում է ոչ միայն վստահության պակասի, այլև մշակութային և գենդերային նորմերի ազդեցության մասին: Աղջիկներն օգնություն են փնտրում ընտանիքի ներսում (հատկապես մայրիկից) և ընկերներից, մինչդեռ տղաների զգալի մասը նախընտրում է լռել՝ ոչ ոքի չասելով իրենց անհանգստացնող փորձառությունների մասին:

Գծապատկեր 27. Վերջին անգամ, երբ ինչ-որ բան է տեղի ունեցել օնլայն կամ հեռախոսով, որն անհանգստացրել կամ տխրեցրել է Ձեզ, այս մարդկանցից ու՞մ հետ եք խոսել դրա մասին:



Երբ առցանց միջավայրում ինչ-որ բան անհանգստացրել կամ տխրեցրել է, երեխաների մեծ մասն արգելափակում են այդ անձին (25,7%), գաղտնիության կարգավորումներն են փոփոխում (17,6%), ինչպես նաև ինտերնետից ժամանակավոր հեռանում են (13,5%): Հարցվածների բավականին մեծ տոկոսը չեն ցանկացել պատասխանել այս հարցին (40,5%): Խնդիրն անտեսում են հարցվածների 10,8%-ը, ընդ որում աղջիկների ավելի մեծ տոկոսը՝ 15,9%, համեմատած տղաների 3,7%-ի հետ: Մեղավոր են զգում հարցվածների 18,9%-ը, կրկին աղջիկներն ավելի հաճախ (25%), համեմատած տղաների 11,1%-ի հետ: Ստիպում են դիմացինը նրանց հանգիստ թողնի հարցվածների 8,1%-ը, բայց տարբերությունը սեռերի միջև մեծ է. տղաները ավելի հաճախ են ընտրել այս տարբերակը (18,5%), համեմատած աղջիկների 2,3%-ի հետ: Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (p ≤ 0,05): Համացանցի օգտագործումը ժամանակավոր դադարեցնում են աղջիկների կրկնակի ավելի բարձր տոկոսը

(18,2% ընդդեմ 7,4%-ի): Հաղորդագրությունները ջնջում են հարցվածների 20,3%-ը, տղաներն ավելի հաճախ (29,6%), քան աղջիկները՝ 15,9%: Առցանց համակարգերում զեկուցում են (report) հարցվածների ընդամենը 5,4%-ը (տե՛ս Գծապատկեր 28.):

Այսպիսով՝ աղջիկներն ավելի հաճախ են իրենց մեղավոր զգում և ժամանակավորապես հեռանում համացանցից, ինչպես նաև ավելի հաճախ են դիմում արգելափակման ռազմավարությանը: Տղաները հակված են ավելի ակտիվ արձագանքել՝ ջնջելով հաղորդագրությունները կամ փորձելով ստիպել դիմացինին իրենց հանգիստ թողնել: Աղջիկներն ավելի շատ են ընտրում պաշտպանական և խուսափողական ռազմավարություններ, մինչդեռ տղաներն ավելի հաճախ արձագանքում են գործողությամբ: Առցանց միջավայրում զեկուցման գործիքը գրեթե չի օգտագործվում (միայն 5%), ինչը ցույց է տալիս առցանց վարքի մշակույթի, առցանց գործիքների վերաբերյալ տեղեկացվածության կամ վստահության պակասի մասին:

Գծապատկեր 28. Դրանից հետո, երբ ինչ-որ բան է տեղի ունեցել օնլայն կամ հեռախոսով, որն անհանգստացրել կամ տխրեցրել է Ձեզ, ստորև նշվածներից ինչ-որ բան արե՞լ եք:



ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ծնողի ու դեռահասի հաղորդակցության սանդղակը (Parent–Adolescent Communication Scale PACS) լայնորեն կիրառվում է հոգեբանական և սոցիալական հետազոտություններում՝ գնահատելու ծնող–երեխա հարաբերությունների որակը: Այն տարբեր լեզուներով միջազգայնորեն ստուգված և վավերացված գործիք է, որը սովորաբար կիրառվում է ինքնագնահատման հարցաշարի ձևաչափով (Լիկերտի սանդղակներով): Այն օգնում է համեմատել տարբեր սեռերի ու տարիքային խմբերի դեռահասների ծնողների հետ հաղորդակցման առանձնահատկությունները: Սանդղակը ներառում է երկու չափում.

1 **Անկեղծության աստիճան (Openness)** որքանով են ծնողներն ու դեռահասներն անկեղծ, ազատ և վստահելի մթնոլորտում կիսվում մտքերով ու զգացմունքներով:

2 **Հիմնախնդիրների խորություն (Problems)** որքան հաճախ են ծնողի և դեռահասի հաղորդակցության մեջ առաջանում թյուրիմացություններ, տարաձայնություններ կամ հաղորդակցման խոչընդոտներ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ անկեղծության բարձր աստիճանը կապված է բարձր վստահության, լավ ինքնագնահատականի և ավելի քիչ ռիսկային վարքագծերի հետ, մինչդեռ հիմնախնդիրների բարձր մակարդակը վկայում է ծնող-դեռահաս հաղորդակցական դժվարությունների և կոնֆլիկտների մասին:

Ծնող-երեխա հաղորդակցության (PACS) սանդղակի կիրառման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում ծնողների հետ աղջիկների հաղորդակցության որակն ավելի բարձր մակարդակի վրա է: Տղաների և աղջիկների պատասխանների միջև տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են ($p \leq 0{,}01$; $p \leq 0{,}001$): Աղջիկներն ավելի հաճախ են պատրաստ կիսվելու իրենց մտքերով և զգացմունքներով ծնողների հետ և ավելի հաճախ են քննարկում իրենց խնդիրները և մտահոգությունները, մինչդեռ տղաների մոտ նման հաղորդակցությունն զգալիորեն սահմանափակ է: Տղաներն ավելի քիչ են կիսվում դժվարություններով և մտահոգություններով ծնողների հետ, ինչը մատնանշում է գենդերային տարբերությունները հաղորդակցական ոճում և ընտանեկան փոխհարաբերություններում:

Ծնողների հետ դեռահասների հաղորդակցությունը համեմատաբար սահմանափակ է հիմնախնդիրների խորության մասով (միջին միավորը 5,17), սակայն ավելի բարձր է անկեղծության մակարդակով (միջին միավորը 9,93) (տե՛ս Գծապատկեր 29.):

Գծապատկեր 29. Ծնողի և դեռահասի հաղորդակցության սանդղակի (PACS) արդյունքները:



PACS սանդղակի առանձին դատողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ երեխաների մեծամասնությունը ծնողների հետ հարաբերությունները գնահատում է դրական, սակայն առկա են նաև վախ, լռություն, վիրավորվածության փորձառություններ:

Ծնողներից ինչ-որ բան խնդրելիս՝ հարցվածների 48,8% չեն վախենում: Սակայն տղաների 20,8% և աղջիկների ընդամենը 1,5% չեն ցանկացել պատասխանել այս հարցին, ինչը մատնանշում է տղաների զգուշավորությունը կամ դժկամությունն այս թեմայի շուրջ խոսելիս (տե՛ս Գծապատկեր 30.):

Աղջիկների և տղաների մեծամասնությունը շատ գոհ են ծնողի հետ շփումից (ընդհանուր 48,2%): Միայն 11,9%-ը բոլորովին համաձայն չեն այս պնդման հետ (տե՛ս Գծապատկեր 30.): Հարցվածների 18,2%-ը հիմնականում համաձայն չեն, որ ասում են բաներ, որոնք ավելի լավ է չասել: Միևնույն ժամանակ 15,5% հիմնականում համաձայն են այս պնդման հետ (տե՛ս Գծապատկեր 30.):

Հարցվածների 59,2%-ը կարծում են, որ ծնողները հիմնականում կամ լիովին փորձում են հասկանալ իրենց տեսակետը: 13,1%-ը չի ցանկացել պատասխանել այս հարցին, հիմնականում տղաները (տե՛ս Գծապատկեր 30.):

Հարցվածների 28,9%-ը լիովին համաձայն են, որ հեշտ է քննարկել խնդիրները ծնողի հետ: Միևնույն ժամանակ 12,2%-ը չեն ցանկացել պատասխանել այս հարցին, տղաները կրկին գերակշռում են (տե՛ս Գծապատկեր 30.):

Հարցվածների 49,1%-ը բոլորովին համաձայն չեն, որ ծնողը բարկանալիս վիրավորում է նրանց: Սակայն մոտ 11,6%-ը (7,7% + 3,9%) ընդունում են նման փորձառության առկայությունը (տե՛ս Գծապատկեր 30.):

Այսպիսով՝ ծնող-դեռահաս հարաբերությունների հիմնական պատկերը դրական է. մեծամասնությունը գոհ են շփումից և զգում են, որ ծնողը փորձում է հասկանալ իրենց տեսակետը: Ծնողների հետ խնդիրների քննարկման հարցում աղջիկներն ավելի բաց են, մինչդեռ տղաների մոտ ավելի բարձր է լռության կամ խուսափման միտումը: Վախի և վիրավորվածության փորձառություններ առկա են, թեև փոքր խմբի մոտ (մոտ 10–15%): Տղաներն զգալիորեն ավելի հաճախ են ընտրում «չեմ ուզում պատասխանել» տարբերակը, ինչը կարող է վկայել ծնող-երեխա հարաբերություններում անհարմարության կամ դժվարությունների մասին:

Գծապատկեր 30. Հետևյալ պնդումները Ձեր հարաբերությունների մասին են Ձեր ծնողի կամ այն ընտանիքի անդամի հետ, ով Ձեր մասին ամենից շատ է հոգ տանում: Խնդրում ենք ուշադիր կարդալ յուրաքանչյուր պնդումը և ընտրել Ձեր իրավիճակը բնութագրող լավագույն պատասխանը:



Ծնողական վերահսկողության ցուցիչը (Parental Monitoring Index - PMI) կիրառվում է դեռահասների և ծնողների հարաբերություններում ծնողական վերահսկողության տարբեր ձևերը գնահատելու համար: Գործիքը բաղկացած է մի շարք հարցերից կամ պնդումներից, որոնք գնահատվում են Լիկերտի սանդղակով: Ստացված տվյալների վերլուծության արդյունքում ստացվում են միջին միավորներ՝ ըստ վերահսկողության տարբեր ձևերի: Բարձր միավորները նշանակում են ավելի շատ վերահսկողություն, ցածրերը՝ ավելի քիչ: Գործիքը ներառում է ծնողական վերահսկողության հետևյալ բաղադրիչները.

1. **Անուղղակի վերահսկողությունը** ներառում է երեխայի զբաղվածության, ընկերների, առօրյա միջավայրի մասին ծնողի տեղեկացվածության վերաբերյալ դատողություններ:
2. **Ուղղակի վերահսկողությունը** ներառում է դատողություններ ծնողի կողմից երեխայի վարքի վերաբերյալ բացահայտ հարցումների, ստուգումների, հարցաքննությունների մասին:
3. **Դպրոցական վերահսկողությունը** ներառում է դատողություններ դպրոցական երեխայի առաջադիմության, դասերի այցելության նկատմամբ ծնողի հետաքրքրության և վերահսկողության մասին:
4. **Առողջության վերահսկողությունը** ներառում է դատողություններ ծնողի կողմից երեխայի առողջական վիճակի և բժշկական հարցերի վերաբերյալ ուշադրության մասին:
5. **Համակարգչի ու հեռախոսի վերահսկողությունը** ներառում է դատողություններ ծնողի կողմից համացանցում և տարբեր սարքերում երեխայի գործունեությունը սահմանափակելու կամ ստուգելու մասին:
6. **Արգելող վերահսկողությունը** ներառում է դատողություններ ծնողի կողմից երեխայի ժամանցի, ընկերների կամ առօրյա որոշումների հետ կապված սահմանափակումների և արգելքների մասին:

Ծնողական վերահսկողության ցուցիչը (PMI) ցույց է տալիս, որ Հայաստանում ծնողական վերահսկողությունն աղջիկների և տղաների նկատմամբ գրեթե հավասար մակարդակի վրա է, և միայն արգելող վերահսկողության դեպքում է տարբերությունը վիճակագրորեն նշանակալի:

Անուղղակի վերահսկողությունը (օր.՝ ծնողի տեղեկացվածություն երեխայի զբաղվածությունից) ցածր միջին մակարդակի վրա է (1,59), ուղղակի վերահսկողությունը (օր.՝ բացահայտ ստուգումներ, հարցաքննություններ) համեմատաբար բարձր է (3,03): Ընդ որում, աղջիկների մոտ ավելի բարձր (3,16)՝ համեմատած տղաների հետ (2,76), սակայն տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ: Դպրոցական վերահսկողությունը միջին մակարդակի վրա է (3,02): Տղաների մոտ փոքր-ինչ ավելի բարձր (3,21): Առողջության վերահսկողությունը բավական բարձր է (3,2): Համակարգչից օգտվելու վերահսկողությունը

համեմատաբար ցածր է (1,49): Հեռախոսից օգտվելու վերահսկողությունը նույնպես ցածր է (1,3): Արգելող վերահսկողությունը (օր.՝ արգելքներ, սահմանափակումներ) միջին է՝ 1,71, աղջիկների մոտ ավելի բարձր (1,78), քան տղաների մոտ (1,57) (տե՛ս Գծապատկեր 31. և 32.): Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (p ≤ 0,05):

Այսպիսով՝ ծնողական վերահսկողությունը միջինից ցածր է թվային տեխնոլոգիաներից (համակարգիչ, հեռախոս) երեխաների օգտագործման նկատմամբ, ինչը մատնանշում է ծնողների սահմանափակ վերահսկողությունը թվային հարթակներում երեխաների ակտիվության նկատմամբ: Առողջության և դպրոցական վերահսկողությունը համեմատաբար բարձր է, ինչը ցույց է տալիս ծնողների ուշադրությունը երեխայի կրթությանը և առողջությանը: Աղջիկների նկատմամբ ավելի ուժեղ է արգելող վերահսկողությունը, ինչը վկայում է գենդերային տարբերությունների մասին. աղջիկների վարքագծի նկատմամբ ծնողները դրսևորում են ավելի շատ սահմանափակող մոտեցում:

Գծապատկեր 31. Ծնողական վերահսկողություն ցուցիչ (PMI միջինը 1-4):



Երեխայի տարիքի և ծնողական վերահսկողության տարբեր ձևերի միջև կապը գնահատելու համար կիրառվել է Սպիրմանի կարգային կոռելյացիան (Spearman's ρ), որն արտացոլում է հարաբերությունների ուղղությունն ու ուժգնությունը: Անուղղակի վերահսկողության դեպքում թույլ բացասական կապ է գրանցվել (ρ = -0,171, p ≤ 0,05). երեխայի տարիքի աճին զուգահեռ ծնողներն ավելի քիչ են տեղեկանում երեխայի առօրյա զբաղվածության մասին: Ուղղակի վերահսկողության դեպքում թույլ դրական կապ է գրանցվել (ρ = 0,160, p ≤ 0,05). ավելի մեծ տարիքում ծնողները հաճախ ավելի բացահայտ կերպով են վերահսկում՝ հարցերով կամ ստուգումներով: Դպրոցի/դասերի վերահսկողության դեպքում թույլից միջին բացասական կապ է առկա (ρ = -0,216, p ≤ 0,001). երեխայի մեծանալուն զուգահեռ ծնողների ուշադրությունը դպրոցական հարցերին պակասում է: Առողջության վերահսկողության դեպքում կապը գրեթե զրոյական է (ρ = 0,053, ոչ նշանակալի). երեխայի տարիքը մեծ ազդեցություն չի ունենում ծնողների կողմից առողջության վերահսկողության վրա: Համակարգչի վերահսկողության դեպքում կապը միջին բացասական է (ρ = -0,226, p ≤ 0,001). ավելի բարձր տարիքում ծնողները պակաս են վերահսկում երեխայի համակարգչային գործունեությունը: Նմանապես հեռախոսի վերահսկողության դեպքում կապը թույլից միջին բացասական է (ρ = -0,198, p ≤ 0,001). երեխայի մեծանալու հետ հեռախոսի նկատմամբ վերահսկողությունը նվազում է: Իսկ արգելող վերահսկողության դեպքում ամենաուժեղ բացասական կապն է հայտնաբերվել (ρ = -0,301, p

≤ 0,001). տարիքի հետ ծնողների կողմից սահմանված արգելքներն ու սահմանափակումներն էապես նվազում են (տե՛ս Աղյուսակ 2.):

Այսպիսով՝ տարիքի աճին զուգահեռ ծնողական վերահսկողությունը հիմնականում նվազում է, հատկապես՝ դպրոցի հետ կապված հարցերում, համակարգչի ու հեռախոսի օգտագործման նկատմամբ, ինչպես նաև սահմանափակումների և արգելքների կիրառման տեսանկյունից: Միակ դրական կապը ուղղակի վերահսկողության հետ է կապված, ինչը նշանակում է, որ ծնողները մեծ տարիքում ավելի հաճախ են դիմում բաց հարցերին կամ ստուգումներին: Առողջության նկատմամբ վերահսկողությունը գրեթե չի փոփոխվում տարիքի հետ, ինչը վկայում է այս ոլորտի նկատմամբ ծնողների կայուն ուշադրության մասին:

Աղյուսակ 2. Երեխայի տարիքի և ծնողական վերահսկողության (PMI) միջև կոռելյացիան:

ՍԱՆԴՂԱԿ / ՏԱՐԻՔ	SPEARMAN'S P	P ≤
Ուղղակի վերահսկողություն	0,160	0,05
Առողջության վերահսկողություն	0,053	n/s
Անուղղակի վերահսկողություն	-0,171	0,05
Հեռախոսի վերահսկողություն	-0,198	0,001
Դպրոցի/Դասերի վերահսկողություն	-0,216	0,001
Համակարգչի վերահսկողություն	-0,226	0,000
Արգելող վերահսկողություն	-0,301	0,000

Գծապատկեր 32. Ծնողական վերահսկողություն ցուցիչ (PMI միջինը): Կուզեինք տեղեկանալ, թե Ձեր ընտանիքը որքանով է տեղյակ Ձեր հետաքրքրություններից: Վերջին 4 ամսում Ձեր ծնողը կամ ընտանիքի անդամը, ով ամենաշատ ժամանակն է հատկացնում Ձեզ, քանի՞ անգամ է արել հետևյալը՝



Երեխաների կարծիքով ծնողները բավական լավ տեղեկացված են իրենց դպրոցական կյանքի մասին, որոշ չափով տեղեկացված են երեխաների արտադպրոցական գործունեության և ընկերների մասին, սակայն ամենաքիչը տեղեկացված են համացանցում երեխաների վարքագծից:

Հարցվածների 24,4%-ը նշել են, որ ծնողները դպրոցական կյանքի մասին գիտեն ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ, ընդ որում՝ այս պատասխանը տվել են աղջիկների 32,1%-ը, իսկ տղաների միայն 13,6%-ը: Աղջիկների ծնողներն ավելի տեղեկացված են նրանց դպրոցական կյանքից (տե՛ս Գծապատկեր 33.):

Դպրոցից դուրս գործունեության մասին ծնողները գիտեն ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ հարցվածների 23,2%-ի կարծիքով, կրկին աղջիկների մոտ այս ցուցանիշն ավելի բարձր է (32,1%), համեմատած տղաների հետ (10,4%): Աղջիկների ծնողներն զգալիորեն ավելի շատ են տեղյակ իրենց զավակների ազատ ժամանցի մասին (տե՛ս Գծապատկեր 33.):

Ընկերների մասին ծնողները գիտեն ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ հարցվածների 16,7%-ի կարծիքով, աղջիկների տոկոսը կրկին ավելի բարձր է (23%): Աղջիկների ծնողներն ավելի շատ են տեղյակ իրենց ընկերական շրջապատից, քան տղաների ծնողները (տե՛ս Գծապատկեր 33.): Համացանցում երեխաների գործողությունների մասին ծնողները գիտեն ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ հարցվածների 13,7%-ի կարծիքով, աղջիկների կողմից այսպիսի պատասխանները կրկնակի ավելի հաճախ են հնչել (18,9%): Սակայն տղաների 20%-ը ասել է, որ ծնողը ոչինչ չգիտի իրենց առցանց վարքագծի մասին, իսկ աղջիկների միայն 8,7%-ն են նման բան ասել (տե՛ս Գծապատկեր 33.):

Այսպիսով՝ ծնողներն ամենից շատ տեղեկացված են երեխաների դպրոցական կյանքի մասին, սակայն ավելի քիչ գիտեն արտադպրոցական գործունեության և հատկապես՝ ընկերների ու համացանցում երեխաների վարքագծի մասին: Աղջիկների ծնողները բոլոր ոլորտներում ավելի տեղեկացված են, քան տղաների ծնողները: Երեխաների առցանց գործունեությունը ծնողների համար ամենաթաքնված ոլորտն է. երեխաների միայն 13–14% են ասում, որ ծնողը լիովին տեղյակ է իրենց գործողություններից: Տղաները շատ ավելի հաճախ չեն ցանկացել հարցերին պատասխանել, ինչը կարող է վկայել կամ ծնողական վերահսկողության պակասի, կամ տղաների ավելի խուսափողական վարքի և փակվածության մասին:

Գծապատկեր 33. Ձեր ծնողը/խնամակալը որքա՞ն բան գիտի հետևյալի մասին:



ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Դեռահասների հետ կանխարգելիչ թեմաներ քննարկվում են ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ այնպիսի թեմաներ, ինչպիսիք են անծանոթներից նվերներ չընդունելը, օտար մարդկանց մեքենա չնստելը, համեմատաբար հաճախ են քննարկվում երեխաների հետ, սակայն ավելի զգայուն թեմաները (օր.՝ ինտիմ մարմնի մասերը, համացանցում վարքագիծը) էապես ավելի հազվադեպ են քննարկվում:

Դպրոցում դասերի կամ խմբակների ժամանակ ամենից շատ քննարկված թեմաներն են՝ անծանոթներից նվերներ չընդունելը (40,2%), անծանոթի մեքենա չնստելը (40,2%), անծանոթների հետ չխոսելը (38,1%): Մութ ժամանակ մենակ չքայլելը համեմատաբար քիչ է քննարկվում (19%): Աղջիկները կրկնակի ավելի հաճախ են նշում, որ նրանց հետ քննարկվել են նշված թեմաները (տե՛ս Գծապատկեր 35.):

Մարմնի ինտիմ և ոչ ինտիմ մասերի տարբերությունները քննարկվել են հարցվածների 14,6%-ի հետ: Ներքնազգեստի կանոններն ընդհանրապես չեն քննարկվել: Սա վկայում է դպրոցում դասերի կամ խմբակների ժամանակ զգայուն թեմաների անբավարար ընդգրկման մասին

(տե՛ս Գծապատկեր 35.):

Համացանցային անվտանգության թեմաները համեմատաբար քիչ են քննարկվել դպրոցում՝ անձնական լուսանկարներ չուղարկել (29,8%), առցանց ծանոթի հետ անձամբ չհանդիպել (19,9%), անպատշաճ (մեծահասակների համար նախատեսված) նյութերից խուսափել (14,6%): Դարձյալ աղջիկների հետ այս թեմաները կրկնակի անգամ ավելի հաճախ են քննարկվում, քան տղաների հետ (տե՛ս Գծապատկեր 35.):

Վտանգավոր իրավիճակներում արձագանքելու հմտությունները դպրոցում քննարկվել են ընդամենը յուրաքանչյուր հինգերորդի հետ՝ վտանգավոր իրավիճակների նախազգուշական նշանները (33,3%), ինչպես «ոչ» ասել անհարմար իրավիճակում (21,1%), վտանգավոր և անվտանգ գաղտնիքների տարբերությունը (19,6%) (տե՛ս Գծապատկեր 35.):

Օգնություն ստանալու ուղիների վերաբերյալ դարձյալ շատ քչերի հետ են զրուցել՝ որտեղ դիմել, եթե ապահով չես զգում կամ բռնության ես ենթարկվում գիտեն հարցված երեխաների 22,6%: Այս թեմաներն աղջիկների հետ կրկնակի ավելի հաճախ են քննարկվում (32,1%), քան տղաների հետ (8,8%) (տե՛ս Գծապատկեր 35.):

Հարցվածների 18,5%-ը չեն հիշում, որ դպրոցում քննարկվել են նման թեմաներ, իսկ 6%-ը վստահաբար նշում են, որ դասերի ժամանակ նման թեմաներ չեն քննարկվել (տե՛ս Գծապատկեր 35.):

Այսպիսով՝ աղջիկներն ավելի շատ են հիշում կանխարգելիչ կրթության մասին, ինչը վկայում է կամ նրանց ավելի բարձր ուշադրության, կամ ուսուցման ավելի ընդգծված հասցեականության մասին: Ավանդական վտանգների վերաբերյալ թեմաները (անծանոթներ, նվերներ, մեքենա) դպրոցներում ավելի հաճախ են ընդգրկվում, մինչդեռ համացանցում անվտանգության և ինտիմ սահմանների վերաբերյալ թեմաները քիչ են ներկայացված: Տղաները շատ ավելի հաճախ չեն ցանկանում պատասխանել: Ամենազգայուն բացը վերաբերում է այն գիտելիքին, թե որտեղ դիմել բռնության կամ անապահովության դեպքում. ընդամենը յուրաքանչյուր հինգերորդ երեխան է այդ մասին տեղեկություն ստացել դպրոցում:

Ինչ վերաբերում է վստահելի մեծահասակի հետ (ծնող, հարազատ կամ այլ մեծահասակ) անվտանգության և կանխարգելման թեմաների քննարկմանը, տվյալները հստակ ցույց են տալիս, որ աղջիկներն զգալիորեն ավելի շատ են նման թեմաներ քննարկում մեծահասակների հետ, քան տղաները: Իսկ տղաները շատ ավելի հաճախ չեն ցանկանում պատասխանել այս հարցին, ինչը խոսում է տղաների փակվածության կամ անհարմարության մասին:

Դարձյալ ավանդական անվտանգության թեմաներն ամենահաճախ քննարկվածների շարքում են՝ անծանոթ մարդկանց մեքենա չնստելը (53,6%), ընդ որում՝ աղջիկների 67,9%-ի հետ են քննարկել այս թեման, իսկ տղաների՝ միայն 35,2%: Անծանոթներից քաղցրավենիք կամ նվերներ չընդունելը քննարկել են երեխաների 51,5%: Անծանոթների հետ չխոսելը՝ 45,5%, մութ ժամանակ մենակ չքայլելը՝ 31%: Աղջիկների պատասխաններում տոկոսները կրկնակի բարձր են:

Մարմնի ինտիմ և ոչ ինտիմ մասերի տարբերությունը վստահելի մեծահասակի հետ քննարկվել են հարցվածների միայն 15,8%-ը, իսկ ներքնազգեստի կանոններն ընդհանրապես չեն քննարկվել:

Նախազգուշական նշանների մասին վստահելի մեծահասակների հետ խոսել են հարցվածների 32,4%-ը, վտանգավոր և անվտանգ գաղտնիքների տարբերության մասին՝ 26,8%-ը, ինչպես «ոչ» ասել անհարմար կամ ոչ անվտանգ իրավիճակներում՝ 31,3%-ը: Թեև բոլոր դեպքերում տղաների և աղջիկների պատասխանների տարբերությունների միջև տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են՝ աղջիկների գրեթե կրկնակի առավելությամբ, սակայն «ոչ» ասելու հետ կապված տարբերությունն ավելի կտրուկ է՝ աղջիկների մոտ՝ 43,9%, իսկ տղաների մոտ՝ միայն 12,8%:

Համացանցում անվտանգության վերաբերյալ երեխաների 36,9%-ը խոսել են առցանց ծանոթներին լուսանկարներ չուղարկելու մասին, 28%-ը առցանց ծանոթի հետ անձամբ չհանդիպելու մասին, 20,8%-ը՝ անպատշաճ բովանդակությունից խուսափելու մասին:

Որտեղ դիմել բռնության կամ անապահովության դեպքում վստահելի մեծահասակի հետ քննարկել են հարցվածների ընդամենը 22,3%-ը (տե՛ս Գծապատկեր 35.):

Այսպիսով՝ աղջիկներն զգալիորեն ավելի հաճախ են քննարկում անվտանգության և կանխարգելման թեմաները մեծահասակների հետ, մինչդեռ տղաները հիմնականում խուսափում են նման զրույցներից: Ավանդական վտանգների թեմաները (անծանոթներ, նվերներ, մեքենա, մենակ չքայլել) առավել հաճախ են քննարկվում ինչպես վստահելի մեծահասակի հետ ընտանիքում, այնպես էլ դպրոցում: Մինչդեռ համացանցային և սեռական անվտանգության թեմաները քիչ են քննարկվում: Օգնություն ստանալու ուղիների մասին խոսակցությունները շատ հազվադեպ են, հատկապես տղաների շրջանում: Տղաներն զգալիորեն ավելի հաճախ չեն ուզում պատասխանել հարցերին, ինչը վկայում է թեմայի զգայունության կամ վստահության պակասի մասին:

Գծապատկեր 34. Կանխարգելիչ կրթություն դպրոցում և տանը (միջին միավորներ 1-9):



Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ կանխարգելիչ կրթության մակարդակն ընդհանուր առմամբ շատ ցածր է, բայց ընտանիքում այն ավելի հաճախ է իրականացվում, քան դպրոցում: **Դպրոցում կանխարգելիչ կրթության** ընդհանուր միջին ցուցիչը կազմում է 1,76, ընդ որում աղջիկների մոտ ավելի բարձր (2,28), քան տղաների մոտ (0,98): Տարբերությունը վիճակագրորեն շատ նշանակալի է ($p \leq 0,001$): Սա ցույց է տալիս, որ աղջիկները դպրոցում ավելի շատ են տեղեկություն ստանում կանխարգելման վերաբերյալ, մինչդեռ տղաները զգալիորեն պակաս: **Ընտանիքում կանխարգելիչ կրթության** ընդհանուր միջին ցուցիչը կազմում է 2,14, ընդ որում աղջիկների մոտ այն կրկնակի ավելի բարձր է (2,92), քան տղաների մոտ (0,98): Տարբերությունը կրկին նշանակալի է ($p \leq 0,001$) (տե՛ս Գծապատկեր 34.):

Գծապատկեր 35. Սրանցից ինչ-որ բան երբևէ քննարկե՞լ եք դպրոցում դասերի կամ խմբակների ժամանակ:



Գծապատկեր 36. Ո՞ւմ հետ եք քննարկել այս թեմաները դպրոցում:



Գծապատկեր 37. Ո՞ւմ հետ եք քննարկել այս թեմաները տանը:



Հատկանշական է, որ երեխաներն ու պատանիները դպրոցում կանխարգելիչ և անվտանգության թեմաները հիմնականում քննարկել են դասղեկի հետ (56,5%), ընդ որում աղջիկները շատ ավելի հաճախ են քննարկել այս թեմաները դասղեկի հետ (64,8%), քան տղաները (38,3%): Տարբեր սեռերի հարցվածների պատասխանների միջև տարբերությունը վիճակագրորեն շատ նշանակալի է ($p \leq 0,001$): Մյուս մասնագետների ներգրավվածությունն անհամեմատ ավելի ցածր է: Թեև ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ այս թեմաները քննարկել են հարցվածների միայն 8,2%-ը, բայց տղաների համեմատաբար բարձր տոկոսն է այս պատասխանն ընտրել՝ 11,7%, քան աղջիկների՝ 6,3%: Միևնույն ժամանակ տղաների զգալի մասն ընդհանրապես չի ցանկացել պատասխանել այս հարցին՝ 38,3%, համեմատած աղջիկների 12% հետ (տե՛ս Գծապատկեր 36.):

Այսպիսով՝ դասղեկը դպրոցում կանխարգելիչ թեմաների քննարկման առումով առանցքային դեր ունի, մինչդեռ մնացած մասնագետների (հոգեբան, բուժքույր, ֆիզկուլտուրայի ուսուցիչ) դերը շատ սահմանափակ է: Աղջիկներն զգալիորեն ավելի շատ են դասղեկի հետ քննարկում նման հարցեր, իսկ տղաները համեմատաբար պակաս: Տղաները համեմատաբար ավելի հաճախ նման թեմաներ քննարկում են ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ. այս պաշտոնը հայաստանյան դպրոցներում հիմնականում դասավանդում են տղամարդիկ: Սա վկայում է նույն սեռի մեծահասակի հետ նման թեմաները քննարկելու երեխաների ձգտման մասին: Իսկ տղամարդ մասնագետները հայաստանյան դպրոցներում քիչ են, որը սահմանափակում է տղաների համար նման թեմաները քննարկելու հնարավորությունները:

Իսկ տանը կանխարգելիչ և անվտանգության թեմաների շուրջ երեխաների ու դեռահասների ամենավստահելի զրուցակիցը մայրիկն է (77,2%), այնուհետև հայրիկը (43,8%) և տատիկը (27,7%): Պապիկներն ու այլ բարեկամները համեմատաբար քիչ են ներգրավված: Աղջիկներն ընդհանուր առմամբ ավելի շատ են կիսվում մայրիկի (86,5%) և տատիկի (32,7%) հետ, մինչդեռ տղաները՝ հայրիկի (43,8%) հետ կամ այլ տարբերակներ (14,1%) են նշում (տե՛ս Գծապատկեր 37.):

Տարբեր սեռի հարցվողների պատասխանների համեմատությունը վկայում է այն մասին, որ աղջիկները, ընդհանուր առմամբ, ավելի ծանոթ են նման թեմաներին, քան տղաները, ինչը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ աղջիկները մայրիկների և դպրոցում իգական սեռի ուսուցիչների և այլ մասնագետների հետ ավելի հաճախ են շփվում: Իսկ տղաներն ավելի դժվարությամբ են կիսվում իգական սեռի ծնողի և մասնագետի հետ, իսկ հայրիկների և դպրոցում արական սեռի մասնագետների հետ շփման հնարավորությունները սահմանափակ են:

Գծապատկեր 38. Ձեզ համար որո՞նք են անվտանգ մնալու և բռնությունից ինքնապաշտպանվելու վերաբերյալ տեղեկություններ ստանալու ամենահարմար և վստահելի տարբերակները:



Անվտանգության և բռնությունից ինքնապաշտպանության վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար դեռահասների համար մայրիկը (48,2%) մնում է ամենահիմնական վստահելի տեղեկատվության աղբյուրը, բայց կան էական տարբերություններ աղջիկների և տղաների միջև. աղջիկներն ավելի հաճախ են ընտրում մայրիկին (63,3%), տղաների համար մայրիկի դերը շատ ավելի թույլ է (28%): Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է: Տղաները շատ ավելի հաճախ տեղեկություններն ստանում են գրքերից (42,4%), համեմատած աղջիկների (12,2%) հետ կամ ընդհանրապես խուսափում են պատասխանելուց: Հայրիկը համեմատաբար հավասարապես դիտարկվում է երկու սեռերի երեխաների կողմից որպես տեղեկություններ ստանալու աղբյուր, աղջիկների 40,3% և տղաների 35,2%: Դպրոցի մասնագետները (ուսուցիչ, հոգեբան, բուժքույր) ու ոստիկանությունը գրեթե չեն ընկալվում որպես վստահելի աղբյուրներ, ինչը վկայում է կրթական համակարգի և այլ ծառայությունների նկատմամբ վստահության պակասի մասին (տե՛ս Գծապատկեր 38.):

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման վերաբերյալ հետազոտություններում հաճախ օգտագործվում են **վինյետները**: Դրանք կարճ, հիպոթետիկ պատմություններ կամ սցենարներ են, որոնք նկարագրում են հնարավոր վտանգավոր կամ սահմանային իրավիճակներ:

Երեխաներին իրենց սեփական փորձառությունների մասին ուղղակի հարցնելը կարող է ծանր լինել: Վինյետների դեպքում երեխան արձագանքում է երևակայական իրավիճակին, ինչն ավելի անվտանգ է և պակաս անձնական: Վինյետների միջոցով գնահատվում է՝ արդյոք երեխաները կարող են ճանաչել անապահով կամ բռնարար վարքագիծը: Պրոյեկտիվ հարցերի միջոցով, օրինակ՝ «Ի՞նչ պետք է անի պատմության հերոսը» կամ «Ի՞նչ կանեիր դու նման իրավիճակում», հետազոտողը հասկանում է բռնության բացահայտման հավանական ձևերը, վստահությունը մեծահասակների հանդեպ և հաղթահարման ռազմավարությունները: Քանի որ սեռական բռնությունը հայաստանյան հասարակության մեջ չափազանց զգայուն թեմա է, տվյալ հարցման մեջ վինյետները ծառայել են որպես էթիկական մեխանիզմ. երեխաները կարողացել են կարծիք արտահայտել՝ առանց անձնական փորձի բացահայտման: Երեխաների իրազեկվածությունն ու վերաբերմունքը բռնության նկատմամբ պարզելու համար երեխաներին առաջարկվել էր երկու վինյետ, որոնք նկարագրում էին երեխաների սեռական շահագործման և նրանց նկատմամբ բռնության տարբեր իրավիճակներ: Առաջին սցենարում ներկայացված էր առցանց սեքսթորշնի[4] դեպք, իսկ երկրորդում՝ մարզչի կողմից գրումինգի[5]:

Հարցաշարում երեխաներին ներկայացված սեքսթորշնի սցենարը հետևյալն էր. «Ձեր հասակակից Ա-ն ծանոթացել է Լ-ի հետ օնլայն խաղերի հարթակում և նրանք ընկերացել են: Սկսել են հաղորդագրություններ փոխանակել Տելեգրամի միջոցով: Ա.-ն Լ.-ին ուղարկել է իր իրական նկարը: Մի քանի օր անց Լ.-ն Ա-ին ուղարկել է նրա կեղծ նկարը՝ խմբագրված մերկ մարմնի մասերով: Նա սպառնացել է նկարը կիսել Ա.-ի ծնողների և դասընկերների հետ, եթե վերջինս գումար չուղարկի: Ա.-ն վախեցել է և չգիտի՝ ինչ անել»:

Իսկ հարցաշարում երեխաներին ներկայացված գրումինգի սցենարը հետևյալն էր՝ «Մ-ն՝ Ձեր հասակակիցն է, դասերից հետո հաճախում է լողի: Նա միշտ սիրել է լողալը և հաճույքով է պարապում ավելի լավ լողալու համար: Սակայն ժամանակի ընթացքում մարզիչն սկսում է հատուկ ուշադրություն դարձնել նրա արտաքին տեսքին, հավելյալ մասնավոր դասեր տալ և հեռախոսով հաղորդագրություններ ուղարկել: Սկզբում նա իրեն շոյված է զգում, բայց շուտով հաղորդագրություններն ու մեկնաբանությունները դառնում են ավելի անձնական

4. **Սեքսթորշնը** (sex - սեքս և extortion - շորթում) առցանց սեռական սպառնալիքի տեսակ է, երբ բռնարարը ստանում է զոհի ինտիմ լուսանկարներ կամ տեսագրություններ և ապա սպառնում է տարածել դրանք, եթե զոհը չկատարի իր պահանջները: Պահանջները կարող են լինել՝ ավելի շատ լուսանկար ուղարկել, գումար փոխանցել կամ այլ գործողություններ կատարել:

5. **Գրումինգը** (անգլ. groom - մաքրել, խնամել, նախապատրաստել) մանիպուլյացիայի ձև է, երբ մեծահասակն աստիճանաբար ընկերանում է երեխայի կամ դեռահասի հետ՝ նրա վստահությունը շահելու (նվերների, ուշադրության, գաղտնի զրույցների միջոցով) և հետագայում սեռական շահագործման նպատակով: Օրինակ՝ ինտիմ թեմաներով հարցեր կամ հանդիպման առաջարկներ: Այս դեպքում բռնարարները «պատրաստում են» երեխային՝ աստիճանաբար կոտրելով նրա պաշտպանությունը, շահելով վստահությունը և սովորեցնելով, որ ոչ պատշաճ վարքագիծը «նորմալ» է կամ պետք է պահել գաղտնի: «Գրումինգ» բառով նկարագրվում է հենց այդ պատրաստման և մանիպուլյացիայի գործընթացը:

բնույթի և նրան անհարմար դրության մեջ դնում: Մի օր մարզիչը խնդրում է նրան գալ իր տուն՝ սպորտի մասին մի քանի տեսանյութ դիտելու: Մ.-ն իրեն անհանգիստ է զգում և չգիտի ինչ պատասխանել»:

336 հարցվողներից 145-ը (43,2%) պատասխանել են երկու վիճակներին էլ:

Սեքսթորշնի օրինակը քննարկելիս հարցվածների 20,5%-ը նշել են, որ անձամբ գիտեն ինչ-որ մեկին, ով այսպիսի կամ նման իրավիճակում է հայտնվել: 64%-ի կարծիքով վերը նկարագրված պատմությունը հանցագործության օրինակ է, ընդ որում աղջիկների շատ ավելի բարձր տոկոսն են այն որակել որպես հանցագործություն (76%), քան տղաների (49,6%) (տե՛ս Գծապատկեր 39.): Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (p ≤ 0,01):

Գրումինգի օրինակը քննարկելիս հարցվածների 5,7%-ը նշել են, որ անձամբ գիտեն ինչ-որ մեկին, ով այսպիսի կամ նման իրավիճակում է հայտնվել: 50,3%-ի կարծիքով վերը նկարագրված պատմությունը հանցագործության օրինակ է, ընդ որում աղջիկների շատ ավելի բարձր տոկոսն են այն որակել որպես հանցագործություն (64,3%), քան տղաների (31,2%) (տե՛ս Գծապատկեր 39.): Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (p ≤ 0,001):

Թե՛ սեքսթորշնը, թե՛ գրումինգն աղջիկների կողմից շատ ավելի հաճախ է համարվել հանցագործություն:

Գծապատկեր 39. Երեխաների անձնական իրազեկվածությունը և բռնության ընկալումն ըստ վիճակների (% ըստ սեռի):



Հարցված երեխաների 35,7%-ը նշել են, որ գիտեն, թե ում է պետք դիմել և ուր գնալ. եթե նրանց ծանոթի հետ վիճակներում նկարագրված դեպք պատահի: Ընդ որում՝ աղջիկներն ավելի շատ են տեղեկացված օգնության հնարավորությունների մասին (40,3%), համեմատած տղաների 30,4%-ի հետ, բայց ընդհանուր իրազեկվածության մակարդակը դեռ բավական ցածր է: 12,8%-ը լսել են ծառայությունների մասին, բայց վստահ չեն՝ թե ինչպես դիմել նրանց: 10,1%-ը չգիտեն՝ որտեղից կարելի է օգնություն ստանալ նման իրավիճակում, 18,8%-ը վստահ չեն, իսկ երեխաների 22,6%-ը չեն ցանկացել պատասխանել: Ամենամեծ տարբերությունը երևում է այստեղ. աղջիկների միայն 8,2%-ը չեն ցանկացել պատասխանել, մինչդեռ տղաների 41,6%-ը խուսափել են պատասխանելուց (տե՛ս Գծապատկեր 40.):

Գծապատկեր 40. Գիտե՞ք՝ ում է պետք դիմել և ուր գնալ, եթե Ձեր ծանոթի հետ այնպիսի մի դեպք պատահի, ինչպես Ա-ի կամ Մ-ի հետ էր:



Սեքսթորշնի և գրումինգի վերաբերյալ վինյետների հաջորդող «Խնդրում եմ կիսվեք ձեր մտքերով այն մասին, թե ինչ կարելի է անել նման իրավիճակում երեխաների համար օգնություն ստանալը հեշտացնելու համար» բաց հարցի պատասխանների վերլուծությունն իրականացվել է Բրաունի և Քլարքի (2006, 2021) վեցփուլանոց մեթոդաբանական շրջանակի տրամաբանությամբ: Պատասխանները թույլ տվեցին բացահայտել զգացմունքային, բարոյական և ռազմավարական արձագանքների լայն շրջանակ: Երեխաները նկարագրել են աջակցության որոնման վարքագծեր, թվային անվտանգության պրակտիկաներ, շփոթություն և հանցագործների գործողությունների ակտիվ մերժում:

Երեխաների բոլոր պատասխաններն ընթերցվել են սկզբնական կոդեր ձևավորելու նպատակով: Այդ կոդերը խմբավորվել են ավելի լայն կատեգորիաների մեջ՝ արտացոլելու համար թե՛ մակերեսային, և թե՛ խորքային իմաստները: Կատեգորիաները կազմակերպվել են ըստ վինյետների՝ ցույց տալու համար նարատիվի տոնի և ռազմավարությունների փոփոխությունները: Թեմաները վերանայվել և հստակեցվել են՝ ապահովելու համար դրանց համահնչությունն ու երեխաների պատասխանների ամբողջ ծավալը ներկայացնելու հնարավորությունը.

1. Վստահելի մեծահասակին պատմել
2. Մերժել բռնարարին
3. Ահազանգել ոստիկանություն
4. Վտանգից դուրս գալ (կապը խզել/լքել)
5. Էմոցիոնալ աջակցություն
6. Շփոթություն, ժխտում կամ խուսափում
7. Գրումինգի կամ մանիպուլյացիայի ճանաչում

Յուրաքանչյուր կատեգորիա սահմանվել է ըստ հաճախականության և երեխաների ներկայացուցչական մեջբերումների՝ կապված տարիքի, սեռի և տարածաշրջանի հետ:

145 երեխաների պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ՝

83% խորհուրդ են տվել տեղեկացնել վստահելի մեծահասակին, հատկապես ծնողներին. *«Տեղյակ պահել ծնողներին տվյալ իրավիճակի մասին» (տղա, 16 տ., Երևան)*

64% հստակ կմերժեին բռնարարի հրավերը կամ պահանջը, նշելով, որ պետք չէ մենակ գնալ. *«Չգնալ միայնակ կամ ընդհանրապես չգնալ» (աղջիկ, 16 տ., Արարատ)*

28% անհրաժեշտ են համարել դիմել ոստիկանությանը կամ իրավապահ մարմիններին. *«Կդիմեի ոստիկանություն» (աղջիկ, 15 տ., Երևան)*

22% առաջարկել են արգելափակել կամ թվային ձևով դուրս գալ իրավիճակից. *«Խորհուրդ կտայի դուրս գալ այդտեղից ու արգելափակել նրան» (աղջիկ, 14 տ., Երևան)*

10% արտահայտել են հուզական աջակցություն կամ կարեկցանք ընկերոջը, մեղադրելով բռնարարին. *«Նա մեղավոր չէ... բռնության մեջ մեղավորը միայն բռնարարն է» (աղջիկ, 17 տ., Արմավիր)*

7% արտահայտել են շփոթմունք կամ հրաժարվել են պատասխանել:

3-րդ աղյուսակը ցույց է տալիս պատասխանների բաշխումն ըստ սցենարների:

Աղյուսակ 3. Ի՞նչ կանեիք, եթե լինեիք Ա-ի/Մ-ի փոխարեն, կամ ի՞նչ խորհուրդ կտայիք նրան:

ՊԱՏԱՍԽԱՆ	ՍԵՔՍԹՈՐՇՆ	ԳՐՈՒՄԻՆԳ
Վստահելի մեծահասակին պատմել	38%	36%
Մերժել բռնարարին	0%	20%
Ահազանգել ոստիկանություն	17%	4%
Վտանգից դուրս գալ (կապը խզել/լքել)	2%	6%
Էմոցիոնալ աջակցություն	4%	1%
Շփոթմունք	2%	4%

Սեքստորշնի վերաբերյալ հարցերի դեպքում ավելի շատ երեխաներ են նշել, որ կդիմեին ոստիկանություն (17%), քան գրումինգի վերաբերյալ վինյետի դեպքում (4%): Ծնողներին դիմելու առաջարկը տարածված է երկու դեպքում էլ (38%՝ սեքսթորշն, 36%՝ գրումինգ): Երեխաները բացահայտ կմերժեին բռնարարին միայն գրումինգի դեպքում (20%), ինչը ցույց է տալիս, որ գրումինգն ավելի հեշտ է ճանաչել որպես ոչ պատշաճ վարք, քան սեքսթորշնը:

Թվային արգելափակումը կամ իրավիճակից դուրս գալը համեմատաբար քիչ հանդիպած պատասխանի տարբերակ է, բայց ավելի հաճախ նշվել է գրումինգի դեպքում (6% ընդդեմ 2%): Ավելի փոքր տարիքային խմբի երեխաներն (≤14) ավելի շատ են դրսևորել շփոթմունք կամ խուսափում: Ավելի մեծ տարիքային խմբի դեռահասները (15–17) ավելի հաճախ են նշել օգնությանը դիմելու կամ մերժելու վարքագիծ:

Աղջիկներն ավելի հաճախ կտեղեկացնեին մեծահասակներին, էմոցիոնալ աջակցություն կցուցաբերեին և կմերժեին բռնարարին: Տղաներն ավելի հաճախ են շփոթվում կամ լռում և ավելի քիչ են կարեկցանք արտահայտում:

Երևանում գտնվող երեխաների խնամքի կենտրոններում արձանագրվել են օգնություն հայցելու և ոստիկանությանը դիմելու ամենաբարձր ցուցանիշները: Արագածոտնի և Արմավիրի դպրոցներում ամենաուժեղը դրսևորվել է գրումինգի մերժումը: Իսկ Երևանի դպրոցներում ավելի հաճախ է նկատվել շփոթմունք և թվային սահմանների պահպանման ավելի ցածր մակարդակ:

Վինյետների վերաբերյալ հարցերին չպատասխանելու օրինաչափությունները նույնպես վեր են լուծվել: 336 երեխաներից՝ 163-ը (48,5%) պատասխանել են սեքստորշնի վերաբերյալ սցենարին, իսկ 168-ը (50,1%)՝ գրումինգի վերաբերյալ: Ավելի փոքր տարիքի երեխաները (≤14) ավելի հաճախ են բաց թողել մեկ կամ երկու սցենարները: Ավելի մեծ դեռահասները (15–17) տվել են ավելի ամբողջական պատասխաններ: Տղաներն ավելի հաճախ չեն պատասխանել գրումինգի վերաբերյալ սցենարին, քան աղջիկները: Երկու սցենարների դեպքում էլ իգական սեռի հարցվողները փոքր-ինչ ավելի հաճախ են պատասխանել:

Երեխաները ձևակերպել են մի շարք առաջարկներ օգնություն ստանալու հնարավորություն-ների բարելավման ուղղությամբ: «Ի՞նչ կարելի է անել, որպեսզի երեխաներին ավելի հեշտ լինի օգնություն ստանալ նման իրավիճակում» հարցին տրվել են 126 վավեր պատասխաններ: 11% նշել են, որ չգիտեն ինչ անել: Մնացած պատասխանների թեմատիկ կոդավորումը կատարվել է ըստ Բրաունի և Քլարքի վեցփուլային մեթոդաբանության: Վերլուծվել են հիմնական օրինաչափություններն ըստ տարիքային խմբերի, տարածաշրջանի, սցենարների ներգրավվածության և զոհին ճանաչելու փորձառության: Վերլուծությունը թույլ տվեց առանձնացնել առաջարկությունների հետևյալ հիմնական ուղղությունները՝

1

Ծնողների հետ կիսվելը (16%) – ընտանիքում բաց երկխոսության խրախուսում. *«Ավելի շատ պետք է խոսենք ընտանիքում նման դեպքերի մասին» (տղա, 17 տ., Երևան)*

2

Կրթություն ու իրազեկում (12%) – դպրոցական քննարկումների և իրազեկման միջոցառումների անհրաժեշտություն. *«Տեղեկատվական դասեր պետք է անցկացվեն դպրոցներում» (աղջիկ, 14 տ., Երևան)*

3

Վստահություն մեծահասակների նկատմամբ (5%) – անվտանգ և վստահելի մեծահասակների կամ խորհրդատուների առկայություն. *«Պետք է վստահելի մեծահասակ լինի, ում կարելի է պատմել» (աղջիկ, 16 տ., Արմավիր)*

4

Համակարգային փոփոխություններ (5%) – ոստիկանության կամ վստահելի ինստիտուտների ներգրավում. *«Ոստիկանությունը պետք է խիստ պատժի նման մարդկանց» (17 տ., Երևան)*

13 և ավելի ցածր տարիքի հարցվողները շեշտը դնում են ծնողական օգնության վրա (22%) և չեն կարողանում պատասխանել (17%): 14 տարեկաններն ավելի վստահ են առաջարկում կրթություն (19%) և ծնողական/ընկերական աջակցություն: 15–16 տարեկաններն ավելի հաճախ են նշում դպրոցի պատասխանատվությունը և համակարգային աջակցությունը (10%): 17–18 տարեկաններն ավելի շատ են հիշատակում վստահելի մեծահասակներին և կրթության կարիքը, ինչը վկայում է քննադատական մտածողության զարգացման մասին:

Երևանի դպրոցներում առավել բազմազան պատասխաններն են հնչել. 25% նշել են ծնողներին դիմելու անհրաժեշտությունը, 13%՝ կրթությունը, մի մասը՝ ոստիկանության կամ իշխանությունների ներգրավումը: Արարատի մարզի դպրոցականների շրջանում ամենահաճախն է հնչել «Չգիտեմ» պատասխանի տարբերակը (15%): Արագածոտնի և Արմավիրի մարզերում առավել հաճախ հնչել են իրազեկման վերաբերյալ առաջարկները (19%), սակայն քիչ են հիշատակել դպրոցը կամ այլ մասնագետներին: Երեխաների խնամքի կենտրոններում գրեթե բացակայում են դպրոցին կամ վստահելի մեծահասակներին վերաբերող առաջարկները, փոխարենն ավելի շեշտադրված է համակարգային փոփոխությունը, ինչը կարող է մատնանշել ոչ ֆորմալ ցանցերի հանդեպ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների անվստահությունը:

Բռնության իրավիճակում օգնություն ստանալու համար հարցված երեխաների մեծամասնությունը (49,7%) կդիմեին մայրիկին, ընդ որում աղջիկների 65,3%-ը, իսկ տղաների՝ միայն 28,0%-ը: Տղաների և աղջիկների պատասխանների միջև տարբերությունը վիճակագրորեն շատ նշանակալի է ($p \leq 0,001$): Հայրիկին կդիմեին հարցվածների 44,6%-ը: Տղաներն ավելի հաճախ են դիմում ընկերներին (29,6%), քան աղջիկները (19,9%): Այս տարբերությունը նույնպես նշանակալի է ($p \leq 0,05$): Ուսուցիչներին դիմելու ցուցանիշները շատ ցածր են (5%): Դպրոցի հոգեբանին կդիմեր ընդամենը 3–4%-ը: Ոստիկանությանը կդիմեին աղջիկների 40,8%-ը, իսկ տղաների՝ միայն 12,0%-ը: Այս տարբերությունը վիճակագրորեն շատ նշանակալի է ($p \leq 0,001$): Աղջիկները ոստիկանությանն ավելի շատ են դիտարկում որպես պաշտպանության աղբյուր: Մասնագիտացված թեժ գծեր կամ կազմակերպություններ կդիմեին աղջիկների 27,6%-ը, իսկ տղաների միայն 4,8%-ը: Այս տարբերությունը նույնպես վիճակագրորեն նշանակալի է ($p \leq 0,001$): Սա վկայում է, որ աղջիկներն ավելի շատ են տեղեկացված կամ պատրաստ դիմել մասնագիտացված ծառայություններին: Ոչ ոքի չեն դիմի աղջիկների միայն 2%-ը, իսկ տղաների՝ 16,0%-ը: Եվ դարձյալ տղաների շատ բարձր տոկոսը չեն ցանկացել պատասխանել այս հարցին՝ 22,4% (տե՛ս Գծապատկեր 41.):

Գծապատկեր 41. Ու՞մ կամ ի՞նչ ծառայության կդիմեիք օգնության համար:



Այսպիսով՝ երեխաների միայն մեկ երրորդն ունի հստակ պատկերացում, թե ուր դիմել բռնության դեպքում: Աղջիկներն ավելի շատ են տեղեկացված, իսկ տղաները ավելի հաճախ են լռում կամ խուսափում պատասխանից: Կա անհրաժեշտություն ոչ միայն ծառայությունների մասին տեղեկություն տարածելու, այլև վստահություն կառուցելու՝ հատկապես տղաների շրջանում: Մայրիկները, հայրիկները և ոստիկանությունը ամենավստահելի աջակցության աղբյուրներն են, հատկապես աղջիկների համար: Տղաներն ավելի հաճախ դիմում են ընկերներին կամ լռում են (չեն ասում ոչ ոքի, կամ հրաժարվում են պատասխանել): Դպրոցական ռեսուրսները՝ ուսուցիչն ու հոգեբանը, գրեթե չեն դիտարկվում որպես աջակցության վստահելի աղբյուր: Աղջիկներն ավելի տեղեկացված և պատրաստ են դիմելու ինչպես հատուկ թեժ գծերին, այնպես էլ իրավապահ մարմիններին, մինչդեռ տղաներն ավելի հաճախ են խուսափում կամ ընտրում ոչ ֆորմալ ուղիներ:

ԲՌՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

Բռնության փորձառությունն ուսումնասիրելու համար հարցման ընթացքում երեխաներից լրացուցիչ համաձայնություն է ստացվել: Համաձայնություն են տվել հարցված երեխաների 42,6%-ը (139 երեխա՝ 101 աղջիկ, 38 տղա): Աղջիկների 48,5%-ն են հրաժարվել պատասխանել բռնության փորձառությանը վերաբերող հարցերին, իսկ տղաների՝ 69,6%-ը:

Գծապատկեր 42. Բռնության տարածվածությունը (% ըստ սեռի):



Երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման տարածվածության հաշվարկը կատարվել է միայն այն երեխաների թվից, որոնք լրացուցիչ համաձայնություն են տվել պատասխանելու զգայուն հարցերին (n=139): Հարցաշարում թվարկված էին անցանց (օֆլայն) և առցանց (օնլայն) բռնության հնգական տեսակներ: Երեխաները պետք է նշեին արդյոք մեծահասակները կամ այլ դեռահասները երբևէ ստիպել են նրանց սեռական բնույթի բաներ անել: Հարցվածներից 18-ը (12,9%) առնվազն մեկ նման դեպքի հետ բախվել են[6]: Աղջիկների 8,9%-ը հայտնել են, որ առնչվել են սեռական բռնության կամ շահագործման առնվազն մեկ ձևի հետ: Տղաների մոտ այս ցուցանիշը շուրջ երեք անգամ ավելի բարձր է՝ 23,7% (տե՛ս Գծապատկեր 42.): Աղջիկների և տղաների պատասխանների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է:

Անցանց սեռական բռնության ու շահագործման տարբեր ձևերի տարածվածությունը երեխաների շրջանում պարզելու համար, այն երեխաներին, որոնք համաձայնել են բռնության վերաբերյալ առավել զգայուն հարցերին պատասխանել, առաջարկվել է պատասխանել արդյոք նրանց կյանքում երբևէ պատահել է բռնության հետևյալ 5 տեսակներից որևէ մեկը՝ ա) երեխային ստիպել են դիտել սեռական բնույթի տեսանյութ կամ նայել սեռական բնույթի նկարներ, բ) երեխային ստիպել են նայել որևէ մեկի մարմնի ինտիմ մասերին կամ ցանկացել են նայել երեխայի մարմնի ինտիմ մասերին, գ) երեխայի մարմնի ինտիմ մասերին սեռական նպատակով դիպչել են կամ ստիպել են դիպչել նրանց մարմնի մասերին, դ) միայն երեխայի հետ կամ այլ մարդկանց հետ սեռական գործողություններ կատարելիս տեսահոլովակ են նկարահանել կամ լուսանկարել, ե) ստիպել են սեռական հարաբերություններ ունենալ կամ փորձել են սեռական հարաբերություն ունենալ երեխայի հետ՝ իր կամքին հակառակ:

6. Բռնության հանգամանքների վերաբերյալ պատասխանների քանակը (n = 19) գերազանցում է բռնության դեպքի մասին հաղորդած հարցվողների քանակը (n = 18), քանի որ հարցվողներից մեկը նախընտրել է չհայտնել բռնության մասին, սակայն պատասխանել է բռնության հանգամանքների մասին հարցերին:

Սեռական հարաբերության հարկադրման դեպքերի մասին նշել են հարցվածների 3,6%-ը, ընդ որում աղջիկների 3%-ը, իսկ տղաների՝ 5,3%-ը: Աղջիկների և տղաների պատասխանների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ, բայց տղաների նման բռնության ենթարկվելու միտումն ավելի բարձր է:

3,6%-ի դեպքում, ընդ որում աղջիկների 2%-ի, իսկ տղաների՝ 7,9%-ի, դիպչել են երեխայի ինտիմ մասերին կամ երեխային են ստիպել դիպչել իրենց ինտիմ մասերին : Աղջիկների և տղաների պատասխանների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ, սակայն տղաների նման բռնության ենթարկվելու միտումն ավելի բարձր է:

Ստիպել են սեռական բնույթի նյութեր դիտել հարցված երեխաների 2,2%-ին, ընդ որում աղջիկների շրջանում նման դեպքեր չեն եղել, իսկ տղաների 7,9%-ն նշում են այս տեսակի բռնության փորձառության մասին: Տղաների և աղջիկների պատասխանների միջև այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (χ^2=8,15, $p \leq 0,01$): Սա ցույց է տալիս, որ տղաներն ավելի շատ են ենթարկվել նման փորձառության:

Երեխային ստիպել են նայել որևէ մեկի մարմնի ինտիմ մասերին կամ ցանկացել են նայել երեխայի մարմնի ինտիմ մասերին 2,9% դեպքերում, ընդ որում աղջիկների 2%-ի, իսկ տղաների՝ 5,3%-ի:

Սեռական գործողությունների տեսա- կամ լուսանկարահանման պարտադրանքի ոչ մի դեպք չի արձանագրվել:

Հարցին չեն ցանկացել պատասխանել հարցվածների 13,7%-ը, ընդ որում աղջիկների 7,9%-ը, իսկ տղաների՝ 28,9%-ը: Աղջիկների և տղաների պատասխանների միջև այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (χ^2=10,34, $p \leq 0,01$):

Տղաները խուսափում են պատասխանելուց, ինչը կարող է վկայել ինչպես գենդերային վարքի առանձնահատկությունների, այնպես էլ վստահության պակասի մասին (տե՛ս Գծապատկեր 42.):

Այսպիսով՝ անցանց սեռական բռնության ընդհանուր տարածվածությունը կազմում է 2–4%, անցանց բռնության բոլոր ձևերն ավելի հաճախ հիշատակում են տղաները: Միակ վիճակագրորեն նշանակալի տարբերությունը արձանագրվել է սեռական բնույթի նյութեր դիտելու պարտադրանքի դեպքում. տղաների մոտ այս փորձառությունը ավելի բարձր է: Տղաների կողմից պատասխանել չցանկանալու դեպքերի բարձր տոկոսը կարող է թաքցնել իրական տարածվածության մակարդակը, և փաստացի բռնության փորձառությունն ավելի բարձր կարող է լինել:

Գծապատկեր 43. Երբեմն մեծահասակները կամ այլ դեռահասները ստիպում են երեխաներին սեռական բնույթի բաներ անել, ինչը նրանց ստիպում է անհարմար զգալ: Ձեր կյանքում երբևէ պատահե՞լ է հետևյալներից որևէ մեկը:



Առցանց սեռական բռնության ու շահագործման տարբեր ձևերի տարածվածությունը երեխաների շրջանում պարզելու համար, այն երեխաներին, որոնք համաձայնել են բռնության վերաբերյալ առավել զգայուն հարցերին պատասխանել, առաջարկվել է պատասխանել արդյոք նրանց կյանքում երբևէ պատահել է առցանց բռնության հետևյալ 5 տեսակներից որևէ մեկը՝ ա) երեխան ստացել է սեռական բնույթի հաղորդագրություն (օրինակ՝ բառեր, նկարներ կամ տեսանյութեր), բ) երեխան տեսել է սեռական բնույթի հաղորդագրություն (օրինակ՝ բառեր, նկարներ կամ տեսանյութեր) տեղադրված այնտեղ, որտեղ այլ մարդիկ կարող էին տեսնել այն, գ) ինտերնետում ինչ-որ մեկը խնդրել է երեխային իր մասին սեռական բնույթի տեղեկատվություն տրամադրել (օրինակ՝ թե ինչպիսին է իր մարմինն առանց հագուստի կամ սեռական բնույթի գործողությունների վերաբերյալ, որոնք երեխան արել է), դ) երեխայի վրա ճնշում է գործադրել իր հասակակիցը, որպեսզի նրան ուղարկի սեռական բնույթի նկարներ կամ տեսանյութեր, ե) երեխան տեսել է ուրիշի մերկ նկարները կամ տեսանյութերը (որտեղ երևում է նրանց կուրծքը, սեռական օրգանները կամ հետույքը):

Սեռական բնույթի հաղորդագրություններ ստացել են երեխաների 7,9%-ը, ընդ որում աղջիկների 5,8%-ը, իսկ տղաների 15,8%-ը: Աղջիկների և տղաների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (χ^2=4,45, $p \leq 0,05$): Տղաներն ավելի հաճախ են ստանում սեռական բնույթի հաղորդագրություններ:

Սեռական բնույթի անձնական տվյալներ են պահանջել հարցվածների 3,6%-ից, ընդ որում աղջիկների 2%-ից, իսկ տղաների 7,9%-ից: Տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ, սակայն միտումը ցույց է տալիս ավելի բարձր ռիսկ տղաների համար:

Սեռական բնույթի նկար կամ տեսանյութ ուղարկելու ճնշման փորձառություն են ունեցել հասակակիցների կողմից հարցվածների 3,6%-ը, ընդ որում աղջիկների 4%-ը, իսկ տղաների 2,6%-ը:

Հանրային տարածքում սեռական բնույթի հաղորդագրությունների կամ հրապարակումների, ինչպես նաև ուրիշների մերկ նկարների կամ տեսանյութերի դիտման փորձառություն հարցված երեխաներից որևէ մեկը չի ունեցել:

Այս հարցին չեն ցանկացել պատասխանել հարցվածների 12,9%-ը, ընդ որում աղջիկների 7,9%-ը, իսկ տղաների 26,3%-ը: Աղջիկների և տղաների պատասխանների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է (χ^2=8,28, p ≤ 0,01): Տղաներն զգալիորեն ավելի շատ են խուսափում պատասխանելուց (տե՛ս Գծապատկեր 44.):

Գծապատկեր 44. Հաջորդ հարցերը վերաբերում են ցանկացած փորձի. որը դուք կարող էիք ունենալ օնլայն կամ հեռախոսով: Դուք ստացե՞լ եք այս բաներից որևէ մեկը օնլայն կամ հեռախոսով:



Այսպիսով՝ առցանց սեռական բռնության ամենատարածված ձևը սեռական բնույթի հաղորդագրություններն են: Տղաներն ավելի հաճախ են սեռական բնույթի հաղորդագրություններ ստանում: Բացի այդ, տղաներն ավելի հաճախ չեն ցանկանում պատասխանել: Աղջիկների մոտ առցանց բռնության փորձառությունը համեմատաբար ցածր է, սակայն վստահության պակասը և լռելու միտումը նկատելի են երկու սեռերի մոտ:

Սեռական բռնության կամ շահագործման փորձառություն ունեցած հարցվածներից հինգ հոգին 12-14 տարեկան էին, երբ դա տեղի ունեցավ, չորս հոգին՝ 9-11 տարեկան, երկու հոգին՝ 15-17 տարեկան և մեկը՝ 0-5 տարեկան էր: Սա ցույց է տալիս, որ առավել բարձր ռիսկային տարիքային խումբը 12–14 տարեկան դեռահասներն են, երբ դեռահասներն արդեն ինտենսիվ շփումների և ինքնության որոնման փուլում են: հարցվածներից երեքը չկարողացան հիշել՝ երբ է դա տեղի ունեցել, իսկ չորսը՝ չցանկացան պատասխանել:

Հարցված երեխաների մեծամասնությունը (վեց հոգի) նշել են, որ նրանց նկատմամբ բռնություն կամ շահագործում իրականացրած անձն այլ երեխա է կամ դեռահաս: Եվս վեց հոգի նշել են, որ բռնարարը մեծահասակ էր, ընդ որում դեպքերից երեքում երեխաներն այդ մեծահասակին ճանաչում էին, իսկ մնացած երեք դեպքերում՝ ոչ: Այլ պատասխան են տվել երկու հարցվող: Իսկ հինգ հարցվող չեն ցանկացել պատասխանել այս հարցին:

Դեպքերի 31,6%-ը տեղի են ունեցել վերջին 12 ամսվա ընթացքում, 47,4%-ը՝ ավելի քան 12 ամիս առաջ: Եվս 21%-ը չեն ցանկացել պատասխանել:

Հարցվածների 42,1%-ը տեղի ունեցածի մասին պատմել են որևէ մեկին, ևս 42,1%-ը՝ ոչ մեկին չեն պատմել, իսկ 12,8%-ը՝ չեն ցանկացել պատասխանել: Այն ինը հոգին, որոնք ոչ ոքի չեն պատմել տեղի ունեցածի մասին պարզաբանել են, որ վախենում էին (երեք հոգի), չգիտեին, թե ում հետ կարելի է խոսել (երեք հոգի), շատ էին ամաչում ու չէին կարող նկարագրել, թե ինչ է տեղի ունեցել (երեք հոգի), կարծում էին, որ նրանց ոչ ոք չի հասկանա (երկու հոգի), չէին ուզում ամոթալի վիճակի մեջ դնել իրենց ընտանիքը (երկու հոգի), մեկ հոգի նշեց, որ ապացույցներ չի ունեցել:

Այդուհանդերձ, հարցվածների մեծամասնությունը (յոթ հոգի) նշել են, որ նրանց օգնել են ընկերները, հինգը հոգի նշել են, որ օգնել է մայրիկը, երեք հոգուն օգնել է հայրիկը, երկուսին՝ ոստիկանը, եվս երկուսին՝ ուսուցիչը, և մեկ հոգու օգնել է հոգեբանը: Այլ պատասխան են տվել երկու հոգի: Հարցվածներից հինգը նշել են, որ նրանց ոչ ոք չի օգնել: Եվս մեկը չի ցանկացել պատասխանել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին «Աստրա» առողջության ամրապնդման և բռնությունից պաշտպանության հիմնադրամը և Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն (ՀՄԿ) պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հետ համատեղ Երևանում և հարակից մարզերում (Արարատ, Արմավիր և Արագածոտն) իրականացրել են 12-17 տարեկան 336 դպրոցականների առցանց հարցում:

ԵՊՀ հետազոտական աշխատանքների էթիկայի փորձաքննության հանձնախումբը մանրամասն ուսումնասիրել է հետազոտության մեթոդաբանությունը և գործիքակազմը և անհրաժեշտ փոփոխություններից հետո հաստատել է այն (որոշում № [2025-01]):

Հետազոտությունը ֆինանսավորվել է Սեռական բռնության հետազոտական նախաձեռնության (Sexual Violence Research Initiative - SVRI) կողմից: Հետազոտության արդյունքների մեկնաբանության համար պատասխանատվությունն ամբողջությամբ կրում են հեղինակները, և այն պարտադիր չէ, որ արտացոլի SVRI-ի պաշտոնական դիրքորոշումները: Հարցման նպատակն էր հասկանալ 12-17 տարեկան դպրոցականների կարծիքն ու փորձառությունը դպրոցում, տանը, փողոցում և համացանցում երեխաների անվտանգության և պաշտպանության վերաբերյալ և մշակել գործնական առաջարկներ Հայաստանում երեխաների համար սոցիալական միջավայրն ավելի անվտանգ ու ապահով դարձնելու ուղղությամբ: Տվյալները հավաքագրվել են դպրոցներում առցանց հարցման մեթոդով: Այս հետազոտությունը Հայաստանի դպրոցներում իրականացված երեխաների առաջին առցանց հարցումն է երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման վերաբերյալ:

Հարցման ընթացքում քննարկված մի շարք հարցերում աղջիկների և տղաների պատասխանների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություններ են բացահայտվել:

- Հարցման արդյունքների համաձայն հարցված երեխաների ընտանիքները բազմանդամ են, նրանք հիմնականում ապրում են ծնողների ու քույր-եղբայրների հետ, իսկ ավելի հազվադեպ նաև ընդլայնված ընտանիքով, մասնավորապես տատիկների հետ:
- Տանը նկատվում է գենդերային տարբերություն՝ տղաներն ավելի հաճախ ունեն առանձին սենյակ, մինչդեռ աղջիկները հաճախ կիսում են սենյակը ընտանիքի այլ անդամների հետ:
- Երեխաների մեծ մասն ամենաշատ ժամանակն անցկացնում են մայրիկի հետ, ինչը ցույց է տալիս մոր դերի կարևորությունը երեխաների առօրյայում: Երկրորդ ամենահաճախ նշված տարբերակը՝ եղբայրներն ու քույրերն են: Երեխաների միայն 9%-ն են նշել, որ հայրիկի հետ ամենաշատ ժամանակն են անցկացնում, սակայն տղաները զգալիորեն ավելի հաճախ են նշել հայրիկին (16,8%), քան աղջիկները (4,6%):
- Դպրոց գնալիս կամ դպրոցից տուն վերադառնալիս երեխաների մեծ մասն իրենց անվտանգ են զգում: Տղաները շատ ավելի վստահ են համայնքում իրենց անվտանգության հարցում: Աղջիկներից յուրաքանչյուր չորրորդը նշել է, որ դպրոց

գնալիս կամ վերադառնալիս վտանգ է զգացել: Տղաները հակված են վտանգի զգացումը թերագնահատել կամ անտեսել: Աղջիկներն ավելի հաճախ են օգնություն խնդրում ծնողներից և ունեն շփման պատրաստակամություն, իսկ տղաները խուսափում են դիմել ծնողների օգնությանը և թույլ թվալ: Աղջիկները հակված են պաշտպանական վարքագծի. հաճախ զանգահարում են ծնողներին կամ փնտրում են անվտանգ վայր: Տղաներն ավելի հաճախ են անտեսում վտանգի զգացումը, ինչպես նաև խուսափում են պատասխանելուց:

- Տվյալները վկայում են, որ երեխաների մեծամասնությունը դպրոցում իրենց հիմնականում ապահով է զգում և վստահում է առնվազն մեկ մեծահասակի: Սակայն աղջիկների և տղաների պատասխաններում նկատվում են զգալի տարբերություններ: Աղջիկները դպրոցը գնահատում են որպես ավելի անվտանգ և աջակցող միջավայր, մինչդեռ տղաների մոտ զգացվում է դպրոցից հեռացման, բացառման որոշակի միտում և ցածր վստահություն մեծահասակների հանդեպ:
- Դպրոցում կամ առցանց տհաճ իրավիճակների մասին աղջիկները պատմում են մայրիկին: Ընկերները կարևոր դեր ունեն և՛ տղաների, և՛ աղջիկների համար՝ հարցվողների մոտ մեկ երրորդը կխոսեր հենց նրանց հետ: Դպրոցի ուսուցիչներն ու հոգեբանները հազվադեպ են դիտվում որպես վստահելի զրուցակից, հատկապես տղաների շրջանում: Ինստիտուցիոնալ աջակցությունը (ոստիկան, թեժ գիծ, ՀԿ-ներ) գրեթե չի օգտագործվում:
- Երեխաների ավելի քան 90%-ն (և՛ աղջիկները, և՛ տղաները) առցանց են ամեն օր և անգամ օրական մի քանի անգամ: Ընդ որում հարցվածների 72,3%-ն առաջին անգամ օգտվեցին համացանցից 11 տարեկանում կամ ավելի վաղ տարիքում: Երբեք չեն օգտվում համացանցից հարցվածների ընդամենը 1,5%-ը: Հարցվածներն ամենաշատն օգտվում են հետևյալ սոցիալական ցանցերից կամ խաղային հարթակներից՝ Instagram (63,9%), Snapchat (48,9%), TikTok (46,7%) և Telegram (38,4%): Մեծամասնության էջում/պրոֆիլում տեսանելի է նրանց ազգանունը և նկարը, ընդ որում հստակ երևում է նրանց դեմքը: Վերջինս էապես ավելի հաճախ տեսանելի է աղջիկների էջում/պրոֆիլում, քան տղաների:
- Երեխաների մեծամասնությունը միշտ կամ հիմնականում կարող են օգտվել համացանցից, երբ ուզեն կամ երբ կարիքն ունենան: Իսկ երեխաների 74,9%-ին միշտ թույլ են տալիս օգտվել համակարգչից և սմարթֆոնից, երբ նրանք իրենց սենյակում մենակ են:
- Երեխաների մեծ մասն զգուշավոր է առցանց ընկերանալու հարցում: Տղաներն ավելի հաճախ են ընդունում բոլոր կամ «ընդհանուր ընկերների» առաջարկները, ինչը ցույց է տալիս նրանց ավելի ռիսկային վարքագիծը:
- Երեխաների մեծամասնությունը երբեք չի դրսևորում վտանգավոր առցանց վարքագիծ, սակայն շուրջ 15–25%–ը գոնե մեկ անգամ փորձել են նոր ծանոթներ փնտրել, անձնական տվյալներ կամ լուսանկարներ ուղարկել, ներկայանալ ցանցում որպես այլ մարդ: Անծանոթներին ավելացնելը ընկերների ցանկում և լուսանկար ուղարկելը ամենատարածված փորձարկվող ռիսկային վարքագծերն են: Անձնական տվյալների փոխանցումը քիչ է հանդիպում: Հարցված երեխաների զգալի մասը համացանցում

իրենց ապահով են զգում և կարծում են, որ գիտեն՝ ինչ անել անհարմար իրավիճակներում, սակայն բարձր է նաև անվստահության և զգուշավորության մակարդակը:

- Հարցման արդյունքները վկայում են, որ դեռահասների մեծամասնությունը առցանց վնասի փորձառություն չեն ունեցել, սակայն մոտ մեկ քառորդը գոնե մեկ անգամ բախվել սարքերի վարակման, իրենց ցանկությանը հակառակ անձնական տվյալների օգտագործման, այլ մարդու կողմից գաղտնաբառի օգտագործման, խաբեության արդյունքում գումար կորցնելու, թշնամական կամ վիրավորական էջ/պատկեր ստեղծելու հետ:
- Տղաները հակված են լռել կամ խուսափել պատասխանելուց, ինչը վկայում է ոչ միայն վստահության պակասի, այլև մշակութային և գենդերային նորմերի ազդեցության մասին:
- Երբ առցանց միջավայրում ինչ-որ բան անհանգստացնում կամ տխրեցնում է, աղջիկներն ավելի հաճախ են իրենց մեղավոր զգում և ժամանակավորապես հեռանում համացանցից, ինչպես նաև ավելի հաճախ են դիմում արգելափակման ռազմավարությանը: Տղաները հակված են ավելի ակտիվ արձագանքել՝ ջնջելով հաղորդագրությունները կամ փորձելով ստիպել դիմացինին իրենց հանգիստ թողնել: Աղջիկներն ավելի շատ են ընտրում պաշտպանական և խուսափողական ռազմավարություններ, մինչդեռ տղաները ավելի հաճախ արձագանքում են գործողությամբ: Առցանց միջավայրում զեկուցման գործիքը գրեթե չի օգտագործվում:
- PACS սանդղակը ցույց է տալիս, որ Հայաստանում ծնողների հետ աղջիկների հաղորդակցության որակը ավելի բարձր մակարդակի վրա է: Աղջիկներն ավելի հաճախ են պատրաստ կիսվելու իրենց մտքերով և զգացմունքներով ծնողների հետ և ավելի հաճախ են քննարկում իրենց խնդիրները և մտահոգությունները: Տղաներն ավելի քիչ են կիսվում խնդիրներով և մտահոգություններով ծնողների հետ, ինչը կարող է մատնանշել գենդերային տարբերությունները հաղորդակցական ոճում և ընտանեկան փոխհարաբերություններում:
- Հայաստանում աղջիկների և տղաների նկատմամբ ծնողական վերահսկողության մակարդակը գրեթե հավասար է: Միայն արգելող վերահսկողության դեպքում է տարբերությունը վիճակագրորեն նշանակալի:
- Առողջության և դպրոցական վերահսկողությունը համեմատաբար բարձր է, ինչը ցույց է տալիս ծնողների հատուկ ուշադրությունը երեխաների կրթության և առողջության նկատմամբ:
- Ծնողական վերահսկողությունը բավական ցածր է թվային տեխնոլոգիաներից (համակարգիչ, հեռախոս) երեխաների օգտագործման նկատմամբ:
- Աղջիկների նկատմամբ ավելի ուժեղ է արգելող վերահսկողությունը, ինչը վկայում է գենդերային տարբերությունների մասին:
- Երեխայի տարիքի աճին զուգահեռ ծնողական վերահսկողությունը հիմնականում նվազում է, հատկապես՝ դպրոցական հարցերում, համակարգչի ու հեռախոսի օգտագործման նկատմամբ, սահմանափակումների և արգելքների կիրառման մեջ:

- Ընտանիքն ավելի մեծ դեր ունի կանխարգելիչ կրթության մեջ, քան դպրոցը: Աղջիկներն զգալիորեն ավելի շատ են ընդգրկված կանխարգելիչ կրթության մեջ, թե՛ դպրոցում և թե՛ տանը: Տղաների պարագայում համակարգային բացեր կան: Վստահելի մեծահասակի, հիմնականում ծնողի, հետ զգայուն թեմաները մի քիչ ավելի հաճախ են քննարկվում, քան դպրոցում: Սակայն զգայուն թեմաների դեպքում տարբերությունն էական չէ:
- Դասղեկը դպրոցում կանխարգելիչ թեմաների քննարկման առումով առանցքային դեր ունի, մինչդեռ մնացած մասնագետների (հոգեբան, բուժքույր, ֆիզկուլտուրայի ուսուցիչ) դերը շատ սահմանափակ է: Աղջիկներն զգալիորեն ավելի շատ են դասղեկի հետ քննարկում նման հարցեր: Տղաները նման թեմաներ համեմատաբար ավելի հաճախ քննարկում են ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ, որը շատ հաճախ տղամարդ է: Սա վկայում է նույն սեռի մեծահասակի հետ նման թեմաները քննարկելու երեխաների ձգտման մասին: Իսկ տղամարդ մասնագետները հայաստանյան դպրոցներում քիչ են, որը սահմանափակում է տղաների համար նման թեմաները քննարկելու հնարավորությունները:
- Անվտանգության և բռնությունից ինքնապաշտպանության վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար դեռահասների համար մայրիկը մնում է ամենահիմնական վստահելի տեղեկատվության աղբյուրը, բայց աղջիկներն ավելի հաճախ են ընտրում մայրիկին, տղաների համար մայրիկի դերը շատ ավելի թույլ է: Տղաները շատ ավելի հաճախ տեղեկությունները ստանում են գրքերից: Հայրիկը հավասարապես երկու սեռերի երեխաների կողմից էլ դիտարկվում է որպես տեղեկություններ ստանալու աղբյուր: Դպրոցի մասնագետներն ու ոստիկանությունը գրեթե չեն ընկալվում որպես վստահելի աղբյուրներ, ինչը վկայում է կրթական համակարգի և այլ ծառայությունների նկատմամբ վստահության պակասի մասին:
- Սեքսթորշնի օրինակը քննարկելիս՝ հարցվածների 20,5%-ը նշել են, որ անձամբ գիտեն ինչ-որ մեկին, ով այսպիսի կամ նման իրավիճակում է հայտնվել: 64%-ի կարծիքով դա հանցագործության օրինակ է, ընդ որում աղջիկների շատ ավելի բարձր տոկոսն են այն որակել որպես հանցագործություն (76%), քան տղաների (49,6%):
- Գրումինգի օրինակը քննարկելիս՝ հարցվածների 5,7%-ը նշել են, որ անձամբ գիտեն ինչ-որ մեկին, ով այսպիսի կամ նման իրավիճակում է հայտնվել: 50,3%-ի կարծիքով դա հանցագործության օրինակ է, ընդ որում աղջիկների շատ ավելի բարձր տոկոսն են այն որակել որպես հանցագործություն (64,3%), քան տղաների (31,2%):
- Երեխաների միայն մեկ երրորդն ունի հստակ պատկերացում, թե ուր դիմել բռնության դեպքում: Աղջիկներն ավելի շատ են տեղեկացված:
- Բռնության իրավիճակում մայրիկները, հայրիկները և ոստիկանությունը ամենավստահելի աջակցության աղբյուրներն են, հատկապես աղջիկների համար: Տղաներն ավելի հաճախ դիմում են ընկերներին կամ լռում են (չեն ասում ոչ ոքի, կամ հրաժարվում են պատասխանել): Դպրոցական ռեսուրսները՝ ուսուցիչն ու հոգեբանը, գրեթե չեն դիտարկվում երեխաների կողմից որպես վստահելի աջակցության աղբյուր: Աղջիկներն ավելի տեղեկացված և պատրաստ են դիմելու ինչպես հատուկ թեժ գծերին, այնպես էլ իրավապահ մարմիններին, մինչդեռ տղաները ավելի հաճախ են խուսափում կամ ընտրում ոչ ֆորմալ ուղիներ:

- Սեռական շահագործման և բռնության փորձառությունն արձանագրվել է յուրաքանչյուր ութերորդ երեխայի մոտ: Տղաներն զգալիորեն ավելի շատ են հայտնել նման դեպքերի մասին, քան աղջիկները: Հարցվածներից 18-ը (12,9%) առնվազն մեկ անցանց կամ առցանց բռնության դեպքի հետ են բախվել: Այս երեխաներից 16-ը հարցված դպրոցականների թվից են, իսկ 2-ը՝ Երեխաների խնամքի կենտրոններից: Աղջիկների 8,9%-ը (9 հոգի, որոնցից երկուսը Երեխաների խնամքի կենտրոններից) հայտնել են, որ առնչվել են սեռական բռնության կամ շահագործման առնվազն մեկ ձևի հետ: Տղաների մոտ այս ցուցանիշը մոտ երեք անգամ ավելի բարձր է՝ 23,7% (9 հոգի):
- Անցանց սեռական բռնության բոլոր ձևերն ավելի հաճախ հիշատակում են տղաները:
- Առցանց սեռական բռնության ամենատարածված ձևը սեռական բնույթի հաղորդագրություններն են: Տղաներն ավելի հաճախ են սեռական բնույթի հաղորդագրություններ ստանում: Աղջիկների մոտ առցանց բռնության փորձառությունը համեմատաբար ցածր է:
- Սեռական բռնության կամ շահագործման փորձառության տեսանկյունից առավել բարձր ռիսկային տարիքային խումբը 12–14 տարեկան դեռահասներն են:
- Երեխաների նկատմամբ սեռական բռնություն կամ շահագործում իրականացրած անձը հիմնականում այլ երեխա է կամ դեռահաս (6 դեպք): Եվս վեց դեպքում բռնարարը մեծահասակ էր, ընդ որում դեպքերից երեքում երեխաներն այդ մեծահասակին ճանաչում էին, իսկ մնացած երեք դեպքերում՝ ոչ:
- Բռնության ենթարկված երեխաների մոտ կեսը տեղի ունեցածի մասին պատմել են որևէ մեկին, մյուս կեսը ոչ մեկին չեն պատմել:
- Այն երեխաները, որոնք ոչ ոքի չեն պատմել տեղի ունեցածի մասին պարզաբանել են, որ վախենում էին, չգիտեին, թե ում հետ կարելի է խոսել, շատ էին ամաչում ու չէին կարող նկարագրել, թե ինչ է տեղի ունեցել, կարծում էին, որ նրանց ոչ ոք չի հասկանա, չէին ուզում ամոթալի վիճակի մեջ դնել իրենց ընտանիքը, ապացույցներ չեն ունեցել:
- Սեռական բռնության փորձ ունեցողներից յոթ հոգին նշել են, որ նրանց օգնել են ընկերները, հինգ հոգին նշել են, որ օգնել է մայրիկը, երեք հոգուն օգնել է հայրիկը, երկուսին՝ ոստիկանը, ևս երկուսին՝ ուսուցիչը, և մեկ հոգու օգնել է հոգեբանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

- 1 -

Մշակել երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման կանխարգելման և արձագանքման ընթացակարգ, տալով հստակ սահմանումներ, նշելով պատասխանատուներին, պատասխանատվության ենթարկելու ընթացակարգեր, երեխայի կողմից կամ երեխայի նկատմամբ սեռական բռնության կասկածի դեպքում տեղեկացման, արձագանքման և ուղղորդման հստակ շղթա, փաստաթղթավորում և ժամկետներ սահմանելով: **Ընթացակարգը պետք է ներառի նաև հստակ ժամկետներ արձագանքման համար (24-48 ժամ), անմիջական աջակցության ցուցաբերման մեխանիզմներ և մեկ պատուհանի սկզբունքով աշխատող համակարգվող գործողությունների շրջանակ: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել տղաների համար ապահով և ոչ-դատապարտող միջավայր ստեղծելուն՝ խնդիրները բարձրաձայնելու համար:**

- 2 -

Մշակել և ներդնել թվային միջադեպերի (գրումինգ, սեքստորշն և այլն) պարագայում արձագանքման կարգին: **Կարգը պետք է հաշվի առնի նոր տեխնոլոգիական զարգացումները, ինչպիսիք են վտանգ ներկայացնող կեղծիքները և արհեստական բանականության միջոցով ստեղծված մանիպուլյացիաները: Ներառել համագործակցություն տեխնոլոգիական ընկերությունների, ինչպես նաև Ներքին գործերի նախարարության կիբեռ-հանցագործությունների դեմ պայքարի վարչության հետ՝ վտանգավոր բովանդակության արագ հեռացման նպատակով և ստեղծել հատուկ աշխատանքային խումբ՝ նոր առաջ եկող թվային սպառնալիքներին արձագանքելու համար:**

- 3 -

Ստեղծել միասնական հաղորդման համակարգ՝ կարճ հղումով (URL), QR կոդով, Telegram բոթով և հեռախոսահամարով՝ նախատեսված դեռահասների և ծնողների համար: **Համակարգը պետք է լինի բազմալեզու (առնվազն հայերեն, ռուսերեն, անգլերեն), հասանելի լինի 24/7 ռեժիմով և ունենա հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի տարբերակներ (տեսողական, լսողական, մտավոր խնդիրներ ունեցողների համար): Համակարգը պետք է թույլ տա նաև անանուն հաղորդումների ներկայացման և կիրառի «բոթեր», որոնք կարող են նախնական աջակցություն ցուցաբերել մինչև մասնագետի հետ կապի հաստատումը:**

- 4 -

Մշակել համապատասխան ձևաթղթեր՝ 1) Երեխայի բողոքի գրանցման ձևաթուղթ, 2) Ռիսկերի գնահատման գործիք, 3) Երեխայի ուղղորդման ձևաթուղթ: **Ձևաթղթերը պետք է ներառեն երեխայի հուզական վիճակի գնահատում, երեխայի կարծիքը հաշվի առնելու հնարավորություն, արագ արձագանքման կարիքների բաժին, և կազմվեն երեխայակենտրոն մոտեցմամբ՝ պարզ, հասկանալի և ոչ տրավմատիկ ձևակերպումներով: Բացի այդ, ավելացնել 4) Հետադարձ կապի ձևաթուղթ՝ ծառայությունների որակի գնահատման համար, և 5) Երկարաժամկետ աջակցության**

պլանավորման ձևաթուղթ: Նշված փաստաթղթերը անհրաժեշտություն կա դարձնել դպրոցական փաստաթղթաշրջանառության պարտադիր մաս:

- 5 -

Մշակել մեկ էջանոց ուղեցույց երեխաների համար. «Ի՞նչ անել, եթե...» թեմայով հակիրճ տեղեկանք՝ QR կոդերով և դիմելու համար անհրաժեշտ կոնտակտային տվյալներով: **Ուղեցույցը պետք է լինի տարբերակված ըստ տարիքային խմբերի (12-14, 15-17), պարունակի ինֆոգրաֆիկաներ և պատկերազարդումներ, ներառի կարճ հիշեցումներ հիմնական քայլերի մասին, և լինի հասանելի ինչպես թղթային, այնպես էլ թվային տարբերակներով: Ուղեցույցի դիզայնը պետք է մշակվի երեխաների մասնակցությամբ՝ ապահովելու համար դրա գրավչությունը և մատչելիությունը:**

- 6 -

Մշակել տեղեկատվական թերթիկներ ծնողների համար, որոնք կպարունակեն երեխայի նկատմամբ սեռական բռնության և շահագործման ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական ախտանիշների նույնականացման ուղենիշեր, երեխայի հետ զգայուն թեմայով զրույցի վարման կանոններ, աջակցող կառույցների օգնությանը դիմելու համար կոնտակտային տվյալներ: **Տեղեկատվական թերթիկները պետք է ներառեն նաև տարբերակված ուղեցույց աղջիկների և տղաների ծնողների համար, հաշվի առնելով գենդերային առանձնահատկությունները, ինչպես նաև տարիքային փուլերին համապատասխան մոտեցումներ: Ներառել հատուկ մաս հատկապես հայրերի համար՝ տղաների հետ բաց երկխոսություն ունենալու մոտեցումների վերաբերյալ: Կցել նաև ինքնախնամքի պարզ ձևեր ծնողների համար՝ երեխայի տրավմայի հետ աշխատելու ընթացքում:**

- 7 -

Մշակել անցանց և առցանց գաղտնիության պահպանման ուղեցույց ծնողների, մանկավարժների և երեխաների համար: **Ուղեցույցում ներառել թվային ինքնության կառավարման վերաբերյալ գործնական խորհուրդներ, անձնական տվյալների պաշտպանության գործիքներ և տարբեր առցանց հարթակների, հատկապես, երեխաների շրջանում լայն կիրառություն ունեցող հարթակների, դեպքում անձնական էջերի գաղտնիության կարգավորումների վերաբերյալ մանրամասն ուղեցույցներ:**

- 8 -

Երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման դեպքերի ճանաչման, կանխարգելման և երեխաներին օգնության տրամադրամն ուղղությամբ վերապատրաստումների մոդուլ մշակել դասղեկների, դպրոցի հոգեբանների, առողջ ապրելակերպի և ֆիզկուլտուրայի ուսուցիչների, ոստիկանության անչափահասների բաժնի աշխատակիցների և առողջության պահպանման առաջնային օղակների աշխատակիցների համար: **Մոդուլը պետք է ներառի տրավմա-իրազեկ մոտեցումների ուսուցում, երկրորդային տրավմատիզացիայի կանխարգելում, միջմշակութային զգայունության զարգացում, դեպքի ուսումնասիրման հմտություններ՝ էթիկապես զգայուն և երեխայակենտրոն մոտեցումների կիրառմամբ, բարձր ռիսկային գործոնների վաղ նույնականացում և բազմամասնագիտական համագործակցության մոդելներ և ուղենիշներ: Մոդուլում հատուկ ուշադրություն դարձնել տղաների հետ աշխատանքի առանձնահատկություններին և մշակութային կամ ենթամշակութային արգելքների հաղթահարմանը:**

- 9 -

Իրականացնել վերապատրաստումներ դասղեկների, դպրոցի հոգեբանների, առողջ ապրելակերպի և ֆիզկուլտուրայի ուսուցիչների, ոստիկանության անչափահասների բաժնի աշխատակիցների և առողջության պահպանման առաջնային օղակների աշխատակիցների համար: Վերապատրաստումները պետք է լինեն շարունակական բնույթի (ոչ մեկանգամյա), ներառեն պրակտիկ վարժանքներ, դերային խաղեր և իրական դեպքերի վերլուծություններ: **Վերապատրաստման մասնակիցների համար խթանել փոխօգնության խմբերի ձևավորումը, ինչպես նաև կազմակերպել կանոնավոր սուպերվիզիաներ մասնագետների համար, հաշվի առնելով , որ թեման հեշտ քննարկման թեմաներից չէ: Ստեղծել առցանց ուսուցման հարթակ՝ անընդհատ թարմացվող նյութերով, ռեսուրսներով և վեբինարներով: Վերապատրաստումներում ներգրավել նաև վերապրածների պատմությունները, եթե հնարավոր է նաև վիդեո վկայությունները՝ պահպանելով գաղտնիության և անհրաժեշտ այլ էթիկական սկզբունքները:**

- 10 -

Մշակել երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման կանխարգելման արդյունավետության չափման ցուցիչներ: **Ցուցիչները պետք է ներառեն ինչպես քանակական** (բացահայտված դեպքերի թիվ, դիմումների քանակ, ուղղորդումների թիվ), **այնպես էլ որակական գնահատման տարրեր (երեխաների և ծնողների բավարարվածության մակարդակ, ծառայությունների հասանելիություն, արձագանքման արագություն): Մշակել ցուցիչների մոնիտորինգի համակարգ՝ եռամսյակային հաշվետվություններով և տարեկան ամփոփագրերով: Ներառել նաև համեմատական վերլուծություն նախորդ տարիների և միջազգային փորձի հետ:**

- 11 -

Ապահովել դպրոցում երեխաների նկատմամբ սեռական բռնության և շահագործման դեպքերի վերաբերյալ տվյալների հավաքագրում, մոնիտորինգ և գնահատում: **Ստեղծել կենտրոնացված, անվտանգ և գաղտնի տվյալների բազա, որը հնարավորություն կտա վիճակագրություն վարել՝ ըստ տարիքի, սեռի, աշխարհագրական տարածքի, բռնության տեսակի և այլ կարևոր փոփոխականների: Տվյալների հավաքագրումը պետք է ներառի նաև դեպքի վարման և արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ արդյունավետությունը գնահատելու համար: Ապահովել տվյալների անվտանգությունը և անձնական տեղեկատվության գաղտնիությունը՝ միջազգային չափանիշների համաձայն:**

- 12 -

Տարին մեկ անգամ իրականացնել դպրոցական համացանցային հարցումներ 12-17 տարեկան դեռահասների շրջանում տվյալ հետազոտության ընթացքում փորձարկված հարցաթերթի կիրառմամբ: **Հարցումները պետք է ներառեն նաև ոչ առցանց մեթոդներ՝ ֆոկուս խմբերի քննարկումներ և խորին հարցազրույցներ՝ որակական տվյալներ ստանալու համար: Հարցաթերթը պարբերաբար թարմացնել՝ արտացոլելու երեխաների վնասման նոր առաջ եկող ձևերը: Հարցումների արդյունքները պետք է հրապարակվեն և հասանելի լինեն մասնագետների, քաղաքականություն մշակողների և հանրության համար՝ թափանցիկություն ապահովելու և երևույթի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Մասնակցային մեթոդների կիրառմամբ երեխաներին ուղղակիորեն ներգրավել և հնարավորություն տալ մասնակցելու իրենց պաշտպանությանը վերաբերող մոտեցումների և համապատասխան ընթացակարգերի**

մշակման աշխատանքներին:

- 13 -

Երեխաների հետ աշխատող կրթական, մշակութային և սպորտային հաստատություններում ներդնել երեխաների անվտանգության ապահովման քաղաքականություն-ընթացակարգ՝ ապահովելու երեխաների նկատմամբ բռնության, հատկապես սեռական բռնության դեպքերի կանխարգելման և արձագանքման ներքին մեխանիզմներ: **Քաղաքականությունը պետք է ներառի նաև պարտադիր ստուգումներ անձնակազմի անդամների համար, վարքագծի կանոններ, երեխաների հետ մեկ-առ-մեկ շփման կանոնակարգեր, ինչպես նաև երեխաների ապահով մասնակցության ուղեցույցներ: Մշակել քաղաքականության ներդրման ստուգաթերթիկներ և մոնիտորինգի գործիքներ՝ հաստատությունների ինքնագնահատման և արտաքին գնահատման համար: Ստեղծել համապատասխանության ստուգման մեխանիզմներ և պարբերական աուդիտի ընթացակարգեր: Հաստատությունների համար մշակել երեխաների պաշտպանության քաղաքականության գնահատման համակարգ՝ Վարկանիշավորման մոտեցմամբ, որի արդյունքները տեսանելի կլինեն հաստատության մուտքի մոտ և կայքում: Մանրամասն տես՝ Երեխաների անվտանգության ապահովման քաղաքականություն-ընթացակարգի մշակման ուղեցույցը:**

- 14 -

Ստեղծել և իրականացնել հատուկ ծրագիր 12-14 տարեկան դեռահասների համար՝ որպես բարձր ռիսկային խմբի, որը կներառի ուժեղացված պաշտպանության և կանխարգելիչ կրթական միջոցառումներ, այդ թվում հասակակիցների աջակցության ցանցեր, դպրոցում հատուկ նշանակված մենթորներ և անվտանգության ուսուցման շաբաթներ:

- 15 -

Ստեղծել միասնական մեթոդաբանություն և գործիքակազմ երեխաների հոգեբանական վիճակի գնահատման համար՝ ներառելով ստանդարտացված թեստեր (WHO-5, PHQ-9, GAD-7, PCL-5) տարբեր տարիքային խմբերի համար՝ հարմարեցված հայկական մշակութային համատեքստին: Գործիքները պետք է հնարավորություն տան վաղ հայտնաբերել տրավմայի նշանները և ռիսկային վարքագիծը:

- 16 -

Մշակել միասնական էլեկտրոնային համակարգ երեխաների պաշտպանության դեպքերի համար՝ հիմնված Բրեդշոուի սոցիալական կարիքների տաքսոնոմիայի[7] և Հարդիքերի մոդելի[8]

---

7. **Բրեդշոուի սոցիալական կարիքների տաքսոնոմիան** սոցիալական քաղաքականության և սոցիալական ծառայությունների պլանավորման գործիք է, որը մշակվել է Ջոնաթան Բրեդշոուի կողմից 1972 թվականին: Այն առանձնացնում է կարիքների չորս հիմնական տեսակներ. **1: Նորմատիվ կարիքներ** - մասնագետների կամ փորձագետների կողմից սահմանված չափանիշներին համապատասխան կարիքներ, **2: Սուբյեկտիվ ընկալման կարիքներ** - մարդկանց կողմից սուբյեկտիվորեն զգացվող կարիքներ, **3: Արտահայտված կարիքներ** - զգացվող կարիքներ, որոնք վերածվել են գործողության կամ պահանջի և **4: Համեմատական կարիքներ** - այն կարիքները, որոնք ի հայտ են գալիս տարբեր խմբերի համեմատության արդյունքում. Երեխաների պաշտպանության համատեքստում այս տաքսոնոմիան օգնում է հասկանալ, թե ինչպես երեխաների իրական կարիքները կարող են տարբերվել պաշտոնապես սահմանված չափանիշներից կամ ծնողների/խնամակալների ընկալումներից:

8. **Հարդիքերի մոդելը** կամ "Կարիքների բուրգը" մշակվել է Փոլ Հարդիքերի կողմից 1990-ականներին և ներկայացնում է սոցիալական ծառայությունների մատուցման քառամակարդակ համակարգ՝ **Մակարդակ 1 - Համընդհանուր ծառայություններ** - բոլոր երեխաների համար նախատեսված կանխարգելիչ ծառայություններ (օրինակ՝ դպրոցներ, առողջապահական հիմնական ծառայություններ), **Մակարդակ 2 - Թիրախային ծառայություններ** - ռիսկի խմբում գտնվող երեխաների համար (օրինակ՝ վաղ միջամտության ծրագրեր), **Մակարդակ 3 - Մասնագիտացված ծառայություններ** - արդեն խնդիրներ ունեցող երեխաների համար (օրինակ՝ երեխայի պաշտպանության ծառայություններ), **Մակարդակ 4 - Ինտենսիվ/լուրջ միջամտության ծառայություններ** - բարդ կամ ծանր իրավիճակներում գտնվող երեխաների համար (օրինակ՝ ընտանիքից երեխայի հեռացում, խնամատար ընտանիքներ) Երեխաների պաշտպանության համակարգում այս մոդելն օգտագործվում է ռեսուրսների

վրա, որը կապահովի միջգերատեսչական տեղեկատվության անվտանգ փոխանակում և կհամակարգի միջամտությունները՝ սկսած կանխարգելումից մինչև մասնագիտացված աջակցություն:

- 17 -

Ներդնել համայնքահեն հոգեբանասոցիալական աջակցության (MHPSS) ծառայությունների շարունակական համակարգ՝ IASC ուղեցույցների համաձայն, որը կընդգրկի դպրոցները, առողջապահական հաստատությունները և սոցիալական ծառայությունները՝ ապահովելով բազմամակարդակ աջակցություն երեխաներին:

- 18 -

Մշակել միջմասնագիտական համագործակցության մոդել մանկավարժների, հոգեբանների և սոցիալական աշխատողների միջև, որը կապահովի համակարգված աջակցություն երեխաների անվտանգության հարցերում: Մոդելը պետք է ներառի հստակ դերեր, պատասխանատվություններ և հաղորդակցության ուղիներ: Նրանց համար մշակել «Տրավմայի ազդեցություն» հատուկ ուսումնական մոդուլ, որը կբացատրի տրավմայի ազդեցությունը երեխայի ուղեղի զարգացման և գործառնման վրա, և թե ինչպես է դա ազդում երեխաների վարքի և ուսուցման վրա: Մոդուլը պետք է ներառի գործնական մոտեցումներ տրավմայի ազդեցության մեղմացման համար:

- 19 -

Մշակել և ներդնել երեխաների համար անվտանգ «AI-ով աշխատող մոնիտորինգի համակարգ», որը կկարողանա հայտնաբերել առցանց ռիսկային վարքագիծը և սպառնալիքները (գրուումինգ, սեքստորշն, կիբերհետապնդում)՝ պահպանելով երեխաների տվյալների գաղտնիությունը: Համակարգը պետք է մշակվի էթիկական ուղեցույցների խիստ պահպանմամբ և ներառի մարդու միջամտության մեխանիզմներ:

- 20 -

Ստեղծել «Թվային պաշտպանության խաղային հավելված» (gamified app), որը երեխաներին և դեռահասներին կսովորեցնի առցանց անվտանգության հմտություններ խաղային ձևաչափով: Հավելվածը պետք է հարմարեցված լինի տարբեր տարիքային խմբերի համար, լինի հայերեն լեզվով և արտացոլի տեղական իրականությունը:

արդյունավետ բաշխման, կարիքների համաչափ գնահատման և համապատասխան միջամտությունների պլանավորման համար: Այն շեշտադրում է կանխարգելման կարևորությունը և ցույց է տալիս, որ ավելի վաղ միջամտություններն ավելի արդյունավետ են, քան բարդացած խնդիրների լուծումը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- 1 -

Յուրաքանչյուր դպրոցում երեխաների պաշտպանության թիմերը և երեխաների պաշտպանության հարցերով պատասխանատուն **պետք է լինեն հատուկ վերապատրաստում անցած և աշխատանքի հստակ նկարագիր ունեցող մասնագետներ: Նրանք պետք է ունենան ուղղակի հասանելիություն դպրոցի տնօրինությանը և արտաքին աջակցության ցանցերին: Պետք է ապահովել պատասխանատուի համար մասնագիտական զարգացման շարունակական հնարավորություններ, ներառյալ տրավմա-իրազեկ մոտեցումների վերաբերյալ վերապատրաստումներ: Պատասխանատուն պետք է ունենա նաև սուպերվիզոր, որը կաջակցի և կփոխարինի նրան անհրաժեշտության դեպքում: Պատասխանատուի հետ կապվելու տվյալները պետք է հասանելի լինեն և փակցված լինեն դպրոցի տարածքում՝ տեսանելի վայրում և առցանց հարթակներում: Երեխաների պաշտպանության թիմերը և պատասխանատուն պետք է ունենան ՏՄԱԿ-ների (Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների) հետ համակարգված համագործակցություն:**

- 2 -

Պատրաստել բռնության դեպքում արագ արձագանքման փաթեթներ, ներառել քայլ առ քայլ հրահանգներ՝ ապացույցների պահպանում, մեղավոր անձի արգելափակում և հաղորդում, ապացույցների փոխանցում իրավասու մարմնին, անհապաղ հոգեբանական աջակցության կազմակերպում, հարկադիր գործողության դեպքում՝ արագ հաղորդում ոստիկանությանը: **Փաթեթները պետք է լինեն թե՛ ֆիզիկական, թե՛ թվային տարբերակներով և ներառեն նաև բազմամասնագիտական թիմի կոնտակտային տվյալներ, հոգեբանական առաջին օգնության ուղեցույց, երեխաների և ծնողների աջակցության թեժ գծերի հեռախոսահամարներ, և հետագա քայլերի ժամանակացույց: Փաթեթում ներառել նաև տեղեկատվություն երեխաների իրավունքների մասին, ներառյալ գաղտնիության իրավունքը և պաշտպանության հնարավորությունները: Ստեղծել առցանց դեպքերի համար առանձնահատուկ արձագանքման փաթեթ՝ էլեկտրոնային ապացույցների հավաքագրման, պահպանման և փոխանցման վերաբերյալ մանրամասն քայլերով:**

- 3-

Սահմանել հաղորդման անանուն համակարգ փոստարկղի, QR կոդի կամ Telegram բոթի կամ այլ նախընտրելի հարթակի միջոցով: **Համակարգը պետք է լինի բազմազանեցված՝ հաշվի առնելով երեխաների տարբեր նախասիրություններն ու մատչելիության կարիքները: Ապահովել համակարգի երկլեզու (հայերեն և ռուսերեն) տարբերակներ, ինչպես նաև ձայնային գրառումներ ստանալու հնարավորություն այն երեխաների համար, ովքեր դժվարանում են գրավոր ձևակերպել իրենց մտքերը: Հաղորդման համակարգի գոյության մասին տեղեկացնել բոլոր երեխաներին և ծնողներին տարին առնվազն երկու անգամ և ապահովել դրա շուրջօրյա հասանելիությունը: Ներդնել հատուկ մեխանիզմներ երեխաների անանունությունը և տվյալների գաղտնիությունը պաշտպանելու համար և կազմել պարզ, 5 քայլի ուղեցույց, թե ինչպես օգտվել համակարգից:**

- 4 -

Իրազեկել երեխաներին սոցիալական ցանցերի գաղտնիության կարգավորումների վերաբերյալ (Instagram, Snap, TikTok, Telegram): **Կազմակերպել կանոնավոր «Թվային անվտանգության» շաբաթներ՝ գործնական վարժանքներով և մրցույթներով: Ստեղծել տեղեկատվական պաստառներ և ինֆոգրաֆիկաներ՝ դպրոցներում տեղադրելու համար:**

Մշակել դեպքից հետո ուսուցողական մոդուլներ, որոնք կօգտագործվեն միջադեպերից հետո՝ համադասարանցիներին իրազեկելու համար (առանց կոնկրետ դեպքերի մանրամասները բացահայտելու): Թվային անվտանգությունը դարձնել ուսումնական ծրագրի պարտադիր մաս և ներգրավել ոլորտի մասնագետների (էթիկական հաքերներ, կիբեռանվտանգության փորձագետներ)՝ ուսումնական նյութերը թարմացնելու և դասախոսություններ անցկացնելու համար: Ձևավորել «Թվային անվտանգության դեսպաններ»-ի խումբ դասարանում՝ համադասարանցիներին աջակցելու համար:

- 5 -

Մշակել դասարանային անվտանգության համաձայնագրեր երեխաների, ծնողների և ուսուցիչների համար՝ հարգանքի, առանց համաձայնության պատկերներ չկիսելու և ատելության խոսքի ու վրեժխնդրության բացակայության սկզբունքների ամրագրմամբ: **Համաձայնագրերը պետք է մշակվեն երեխաների ակտիվ մասնակցությամբ՝ հաշվի առնելով նրանց կարծիքները և առաջարկները: Համաձայնագիրը պետք է ներառեն նաև արձագանքման մեխանիզմներ, այդ թվում պետք է կազմվեն արձագանքման թիմեր՝ կազմված աշակերտներից և ուսուցչից: Համաձայնագրերը ստորագրվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում և պարբերաբար (ամիսը մեկ անգամ) անդրադարձ է կատարվում դրանց դասղեկական ժամերի ընթացքում, քաջալերելով այդ սկզբունքների արտացոլումը դասարանային նախագծերում, պատի թերթերում և դպրոցական միջոցառումներում:**

- 6 -

Ստեղծել անվտանգ մեծահասակների քարտեզ՝ փակցնելով այն դպրոցի մուտքի մոտ և դասարաններում. քարտեզում ընդգրկել առնվազն մեկ տղամարդ աշխատակից՝ տղաների համար և, առնվազն մեկ կին աշխատակից՝ աղջիկների համար: **Քարտեզը պետք է ներառի մասնագետների լուսանկարներ, կոնտակտային տվյալներ և աշխատանքային ժամերը, ինչպես նաև կարճ բնութագրեր՝ երեխաների համար հասկանալի լեզվով: Յուրաքանչյուր «անվտանգ մեծահասակ» պետք է անցնի հատուկ վերապատրաստում և պարբերաբար թարմացնի իր հմտությունները: Քարտեզը պետք է հասանելի լինի նաև առցանց՝ դպրոցի կայքում կամ հատուկ բջջային հավելվածում: Ստեղծել «անվտանգ մեծահասակների» առցանց զրուցարան կամ թեժ գիծ՝ դպրոցից դուրս ժամերին երեխաների համար հասանելի լինելու համար: Քաջալերել «անվտանգ մեծահասակներին» պարբերաբար այցելել դասարաններ և ներկայացնել իրենց դերը, ինչը կնպաստի երեխաների վստահության ձևավորմանը:**

- 7 -

Ապահովել տեսանելի օգնության տարբերակներ՝ փակցնելով պաստառներ թեժ գծերի և QR կոդերի վերաբերյալ, ինչպես նաև բաժանելով «Ի՞նչ անել, եթե...» բրոշյուրներ՝ յուրաքանչյուր ուսումնական կիսամյակում: **Օգնության տարբերակները պետք է տեղադրված լինեն դպրոցի միջանցքներում, դասարաններում, զուգարաններում (խցիկների ներսում), մարզասրահում և ճաշարանում: Տեղեկատվությունը պետք է լինի ինչպես տպագիր, այնպես էլ թվային տարբերակներով: Ստեղծել և տեղադրել տեսաուղերձներ, որոնցում մասնագետները կամ նախկինում օգնություն ստացած դեռահասները (անանուն կամ դերասանների միջոցով) կխոսեն օգնության համար դիմելու և օգնություն ստանալու կարևորության մասին: Օգնության տարբերակները պետք է թարմացվեն ամեն եռամսյակ և ներառեն նաև նոր ծառայություններ կամ ռեսուրսներ, որոնք հասանելի են դարձել: Մշակել ապահով վայրերի ցանկ համայնքում, որտեղ երեխաները կարող են**

դիմել անհապաղ օգնության համար դպրոցի ժամերից դուրս:

- 8 -

Ծնողական ժողովների ժամանակ քննարկել հետևյալ թեմաները՝ակտիվ լսելու հմտություններ, ինչպես արձագանքել հանգիստ կերպով և չվախեցնել երեխային, ապացույցների (սկրինշոթ, հաղորդագրություն) պահպանման եղանակներ, հաղորդման և դիմելու քայլերի բացատրություն, երեխայի առցանց ակտիվության էթիկական վերահսկողություն, հաղորդման գործիքներ: **Ծնողական ժողովները պետք է լինեն ինտերակտիվ և ներառեն գործնական վարժանքներ, դերային խաղեր և փորձի փոխանակում: Ներգրավել հաջողված պատմություններ ունեցող ծնողների՝ որպես «փորձառու դեսպաններ»: Ստեղծել ծնողների աջակցության խմբեր, որոնք հանդիպում են ամիսը մեկ անգամ՝ քննարկելու երեխաների անվտանգության հարցերը և փոխադարձ աջակցություն ապահովելու համար: Առաջարկել ծնողներին մասնակցել ուսումնական «սիմուլյացիաների»՝ թվային վտանգների և նրանց հետ գործ ունենալու հմտությունները զարգացնելու համար: Ստեղծել ծնողական ռեսուրսների առցանց գրադարան՝ հոդվածներով, տեսանյութերով և ինքնագնահատման գործիքներով:**

- 9 -

Ծնողական ժողովներ կազմակերպել հատուկ հայրերի և տղամարդ խնամակալների համար ներառելով հետևյալ լրացուցիչ թեմաները՝ ինչպես խոսել տղաների հետ, օրինակ հանդիսանալ օգնություն խնդրելու հարցում, իրականացնել թվային վերահսկողություն առանց ամոթի զգացում առաջանցելու կամ պատժի մեթոդների: **Այս ժողովները պետք է վարեն տղամարդ մասնագետները՝ ստեղծելու համար ավելի անմիջական միջավայր: Ներառել հայտնի տղամարդկանց (սպորտսմենների, արվեստագետների, բիզնեսմենների) տեսաուղերձներ՝ «իրական տղամարդիկ օգնություն են խնդրում» ուղերձով: Կազմակերպել հայր-որդի միջոցառումներ, որոնց ընթացքում կքննարկվեն առողջ հաղորդակցության և վստահության կառուցման թեմաներ: Ստեղծել «Հայրերի ակումբ»՝ փորձի փոխանակման և աջակցության համար: Մշակել պրակտիկ ուղեցույցներ հայրերի համար՝ տղաների հետ զգայուն թեմաներով զրուցելու վերաբերյալ՝ տարիքային առանձնահատկություններին համապատասխան:**

- 10 -

Մշակել ծնողների և երեխաների համար տանը թվային հիգիենայի պահպանման ձևանմուշ հետևյալ կանոնների ընդգրկմամբ՝ մինչև 14 տարեկանների սարքերը պահել ընդհանուր տարածքներում, ապահովել գաղտնիության համապատասխան կարգավորումներ, արգելել անծանոթ անձանց հետ անձնական նամակագրությունը, լուսանկար կամ տեղեկություն տարածելուց առաջ խորհրդակցել ընտանիքի ավագ անդամների հետ: **Ձևանմուշը պետք է լինի ստորագրման ենթակա «ընտանեկան համաձայնագիր», որը կպարունակի նաև երեխայի իրավունքները և մեծահասակների պարտավորությունները: Մշակել թվային հիգիենայի տարբերակված մոտեցումներ տարբեր տարիքային խմբերի համար (12-14, 15-17): Ներառել «Ընտանիքում թվային հանգստի ժամեր», երբ բոլոր անդամները հանձնում են իրենց էլեկտրոնային սարքերը: Կազմել ընտանեկան «Թվային արտակարգ իրավիճակների պլան»՝ թվային վտանգների կամ միջադեպերի դեպքում: Ստեղծել «Ընտանիքում թվային անվտանգության ստուգաթերթիկ», որը կօգտագործվի ամեն ամիս՝ երեխաների և ծնողների կողմից միասին: Առաջարկել բջջային հավելվածներ, որոնք կօգնեն ծնողներին մոնիտորինգ իրականացնել երեխաների հեռախոսների և այլ թվային միջոցների նկատմամբ էթիկապես ընդունելի և հարգալից ձևով:**

- 11 -

Ներդնել ամսական WhatsApp/Telegram հիշեցումներ ծնողների համար: Արձակուրդներից առաջ ուղարկել հիշեցումներ՝ անվտանգության և առցանց վերահսկման վերաբերյալ: **Ստեղծել ծնողական խմբեր՝ ըստ տարիքային խմբերի և ապահովել տարբերակված հաղորդակցություն: Հիշեցումներում ներառել սեզոնային ռիսկերի և դրանց կանխարգելման մասին ինֆորմացիա (օրինակ՝ ամառային արձակուրդների ժամանակ առցանց ժամանակի ավելացում): Պատրաստել «Ամսվա թվային անվտանգության խորհուրդներ»՝ կարճ, հստակ և պրակտիկ ցուցումներով: Ստեղծել ինտերակտիվ բովանդակություն, ինչպիսիք են կարճ տեսանյութերը, ինֆոգրաֆիկաները և թեստերը՝ ծնողների ներգրավվածությունը բարձրացնելու համար: Մշակել փուլային մոտեցում, որը աստիճանաբար կզարգացնի ծնողների գիտելիքներն ու հմտությունները: Պարբերաբար հարցումներ անցկացնել ծնողների շրջանում՝ պարզելու համար, թե որ թեմաներն են առավել հետաքրքրություն ներկայացնում:**

- 12 -

Քարտեզագրել համայնքում և մարզում գործող ծառայությունները՝ ներառելով ոստիկանության անչափահասների բաժինները, առողջության առաջնային պահպանման օղակները, ճգնաժամային կենտրոնները և հասարակական կազմակերպությունները: Մշակել բրոշյուրներ կամ դպրոցի սոցիալական ցանցերում էջերում կիսվել տեղեկատվությամբ՝նշելով գործող հեռախոսահամարները և պատասխանատու անձանց անունները: **Կազմակերպել տարին մեկ անգամ «Բաց դռների օր»՝ աջակցող ծառայությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Պատրաստել «Ծառայությունների անձնագիր» յուրաքանչյուր կազմակերպության մասին՝ մանրամասն նկարագրելով, թե ինչ օգնություն կարող է ստանալ երեխան և ծնողը այդ ծառայություններից: Մշակել «Երեխայի ճանապարհային քարտեզ»՝ ցույց տալով, թե ինչ քայլերով և ինչ ծառայություններով կարող է անցնել բռնության զոհ դարձած երեխան: Այս քարտեզը պետք է լինի երեխայակենտրոն և տարիքին համապատասխան լեզվով կազմված:**

- 13 -

Ներդնել «Համադասարանցիների աջակցության խմբեր»՝ հասակակիցների կողմից աջակցություն ապահովելու համար: Պատրաստել և վերապատրաստել երեխաներից կազմված «Դեսպանների» թիմեր, որոնք կիրազեկեն իրենց համադասարանցիներին անվտանգության հարցերի մասին և կկարողանան ցուցաբերել նախնական աջակցություն խնդրի դեպքում՝ մինչև մասնագետի միջամտությունը:

- 14 -

Կազմակերպել «Թվային իրազեկման» շաբաթներ, որի ընթացքում կանցկացվեն բազմաթիվ միջոցառումներ՝ անվտանգ առցանց վարքագծի, թվային էթիկայի և պատասխանատու համացանցային հաղորդակցության թեմաներով: Ներառել մրցույթներ, տեսանյութերի նկարահանում, պաստառների ստեղծում և այլ ստեղծագործական նախագծեր:

- 15 -

Մշակել «Երեխաների հոգեհուզական դիմադրողականության ամրապնդման ուսումնական մոդուլ», որը կզարգացնի երեխաների հոգեկան ճկունությունը, սթրեսի կառավարումը, զգացմունքային ինքնակարգավորումը և խնդիրների լուծման հմտությունները՝ ինտեգրելով այն ուսումնական ծրագրում: Պլանը պետք է հարմարեցված լինի տարբեր տարիքային խմբերի համար և ներառի գործնական վարժություններ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԼՄ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- 1 -

Պատրաստել կարճ տեղեկատվական հաղորդումներ և տեսահոլովակներ՝ միտված բռնության անցանց և առցանց տեսակների բացահայտմանը, կանխարգելիչ վարքագծին, ինչպես օգնություն խնդրել, ինչպես անվտանգ արձագանքել և ինչպես աջակցել հասակակիցներին: **Ստեղծել կարճ (1-2 րոպեանոց) տեսահոլովակներ՝ ուղղված տարբեր թիրախային խմբերի՝ երեխաներ, դեռահասներ, ծնողներ, մասնագետներ: Օգտագործել ազդեցիկ մարդկանց և հայտնիների (ինչպես տղամարդ, այնպես էլ կին) որպես «անվտանգության դեսպաններ»: Մշակել սոցիալական գովազդների շարք, որը կօգտագործվի հեռուստատեսությամբ, ռադիոյով և սոցիալական մեդիայով: Ստեղծել «Անվտանգության պատմություններ» հեռուստա կամ ռադիոհաղորդումների շարք՝ հաջողության պատմություններով և փորձագետների մասնակցությամբ: Մշակել պոդքասթներ ծնողների համար՝ մասնագետների հյուրընկալությամբ՝ քննարկելու երեխաների անվտանգությանն առնչվող թեմաները: Օգտագործել սոցիալական մեդիան՝ իրականացնելու մրցույթներ, մարտահրավերներ և ինտերակտիվ արշավներ՝ երիտասարդների ներգրավման համար: Ստեղծել հեշթեգեր և վիրուսային քարոզարշավներ՝ խթանելու իրազեկվածությունը երեխաների անվտանգության թեմաների վերաբերյալ:**

- 2 -

Վերապատրաստել լրագրողներին՝ տարիքին համապատասխան լեզու օգտագործելու, գենդերային ներառական լեզու օգտագործելու, երեխայի ինքնությունը պաշտպանելու (երբեք չհրապարակել անուն, լուսանկար, դպրոց կամ գտնվելու վայրի տվյալներ), չեզոք, չմեղադրող ձևակերպումներ օգտագործելու, սենսացիոն ներկայացումից խուսափելու, փաստերի վրա, ոչ թե շոկային մանրամասների կամ էմոցիոնալ շահարկման վրա կենտրոնանալու, մինչ հրապարակելը տեղեկատվությունը մանրակրկիտ ստուգելու ուղղությամբ: **Մշակել «Երեխաների մասին լուսաբանման էթիկական ուղեցույց», որը կընդգրկի բոլոր լրատվամիջոցները: Ստեղծել առցանց դասընթացներ լրագրողների համար՝ երեխաների իրավունքների և անվտանգության լուսաբանման վերաբերյալ: Կազմակերպել մրցանակաբաշխություն լրագրողների համար՝ խրախուսելու երեխաների պաշտպանության էթիկական լուսաբանումը: Ստեղծել լրագրողների համար ոճական ուղեցույց՝ ճիշտ տերմինաբանություն օգտագործելու և զգայուն թեմաները լուսաբանելու համար: Կազմակերպել մասնագիտական «Կլոր սեղաններ»՝ լրատվամիջոցների ներկայացուցիչների, երեխաների պաշտպանության մասնագետների և քաղաքականություն մշակողների միջև: Ներդնել «Խմբագրական հսկողության» լրացուցիչ շերտ երեխաների մասին նյութերի համար: Մշակել ստուգաթերթիկ լրագրողների համար՝ երեխաների վերաբերյալ նյութեր պատրաստելիս:**

- 3 -

Ներառել երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող պաշտոնական թեժ գծերի և հաղորդման հարթակների կոնտակտային տվյալներ սոցիալական գովազդի ժամանակահատվածում, ինչպես նաև բոլոր առնչվող հաղորդումներում, հոդվածներում կամ հեռարձակումներում: **Ստեղծել լրատվամիջոցների համար ստանդարտ «ռեսուրսների տուփ», որը պարտադիր կերպով կցվում է բոլոր երեխաներին վերաբերող նյութերին: Մշակել ձայնային և տեսողական ինֆոգրաֆիկաներ, որոնք կարող են օգտագործվել բոլոր լրատվամիջոցներում: Ներդնել կարճ QR կոդեր տպագիր մամուլում և**

հեռուստատեսությամբ, որոնք կուղղորդեն դեպի աջակցության ծառայություններ: Համագործակցել սոցիալական մեդիա հարթակների հետ՝ ավտոմատացված տեղեկատվության ներառման համար, երբ որոնումներ են կատարվում երեխաների բռնության հետ կապված թեմաներով: Հեռարձակման ժամանակ պարբերաբար ներկայացնել «ի՞նչ անել, եթե...» հիշեցումներ:

- 4 -

Իրականացնել «Մեդիա դասընթացներ» երեխաների համար՝ քննադատական մեդիա գրագիտություն զարգացնելու նպատակով: Սովորեցնել երեխաներին գնահատել տեղեկատվության հավաստիությունը, նույնականացնել կեղծ լուրերը և ապատեղեկատվությունը, պաշտպանվել մանիպուլյացիաներից և ճանաչել վտանգավոր բովանդակությունը: Ներառել նաև սոցիալական մեդիայի անվտանգ օգտագործման թեմաներ:

- 5 -

Մշակել հատուկ համագործակցային ծրագրեր հայկական սոցիալական մեդիա դաշտում ազդեցություն ունեցող անձանց (influencers) հետ՝ նրանց հարթակներում տարածելու կանխարգելման և իրազեկման ուղերձներ: Ներգրավել հատկապես տղամարդ ազդեցություն ունեցող անձանց ս՝ տղաների լսարանին հասնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

1. Ներածություն և նպատակ

Երեխաների նկատմամբ սեռական շահագործումը և բռնությունը լուրջ հանրային առողջապահական խնդիր է և երեխաների իրավունքների կոպտագույն խախտում: Քանի որ երեխաների նկատմամբ բռնության դեպքերի մեծ մասը տեղի է ունենում գաղտնի պայմաններում, բնակչության շրջանում իրականացվող հարցումները կարևոր են խնդիրը տեսանելի դարձնելու տեսանկյունից: Երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության մասշտաբը և բնույթը հուսալիորեն չափելով՝ կարող ենք մշակել ապացուցահեն կանխարգելիչ ծրագրեր և ծառայություններ: Այն դեպքում, երբ այս հարցումներն անցկացվում են պարբերաբար, դրանք պատասխանատու մարմիններին և երեխաների պաշտպանության ոլորտի կառույցներին հնարավորություն են տալիս հետևել այս ոլորտում առաջընթացին և գնահատել իրականացվող քաղաքականությունների և միջոցառումների ազդեցությունը:

Այս բաժնում Հայաստանում երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության վերաբերյալ ձևավորող հետազոտությունը ներկայանում է՝ որպես երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ բնակչության շրջանում իրականացվող ապագա ուսումնասիրությունների համար գործնական, քայլ առ քայլ ներկայացվող առաջարկությունների շարք: Ըստ այդմ, առաջարկվող հարցման մեթոդաբանությունը, գործիքակազմը և կիրառված պաշտպանության ընթացակարգերը փորձարկվել են Հայաստանում և ներառում են փորձագիտական խմբի կողմից բարձրացված (տե՛ս Դելֆի հարցում) և Երևանի պետական համալսարանի Էթիկայի հանձնաժողովի կողմից առաջարկված հատուկ պահանջները, մասնավորապես՝ ծնողական և երեխաների կողմից համաձայնության և երեխաների պաշտպանության երաշխավորման վերաբերյալ:

Այս բաժնում, մենք հաճախ հղում ենք կատարում էլեկտրոնային հավելվածին (OSF, մշտական հղում՝ https://osf.io/vx7ky), որտեղ զետեղված են բոլոր վերը նշված հետազոտական նյութերը:

2. Հարցման մշակումն ու իրականացումը

Ընտրանքի ռազմավարություն

Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի տարածվածության չափման ձեռնարկը որպես երևույթի ուսումնասիրման առավել արդյունավետ մեթոդ խորհուրդ է տալիս ներկայացուցչական, դպրոցական հարցումները՝ նշելով դրանց արդյունավետությունը ավագ դպրոց հաճախելիության համատեքստում (Մեյնք և այլք, 2016թ.): Հայաստանի սեփական փորձը հաստատում է, որ այս մոտեցումը և՛ իրագործելի է, և՛ ընդունելի, երբ այն կիրառվում է երեխաների պաշտպանությանը միտված խիստ պայմանների պահպանմամբ:

Առաջարկում ենք օգտագործել շերտավորված, կլաստերային ընտրանք, որը ընդգրկում է Երևանը և բոլոր մարզերը և որտեղ դպրոցական դասարանները հիմնական ընտրանքային

միավորներ են: Այս մոտեցումն օգնում է ընդգրկել տարբեր սոցիալական, տնտեսական և էթնիկ ծագում ունեցող երեխաներին:

Դպրոցական հարցման հիմնական սահմանափակումը դրա անկարողությունն է ընդգրկել ֆորմալ կրթություն չստացող դեռահասներին: Ընտրանքի կողմնակալությունը նվազեցնելու համար առաջարկում ենք մշակել լրացուցիչ բաղադրիչ, ինչպիսին է վայրի վրա հիմնված կամ ծառայության հետ կապված հարցումը, որը կներառի դպրոցից դուրս գտնվող երիտասարդներին: Դպրոցական և այլընտրանքային մեթոդներից ստացված ընտրանքները պետք է ներկայացվեն և վերլուծվեն առանձին:

Նկատառումներ ընտրանքի չափի վերաբերյալ

Ընտրանքի համարժեք չափը որոշելիս անհրաժեշտ է հավասարակշռություն պահպանել վիճակագրական ճշգրտության և գործնական սահմանափակումների միջև, ինչպիսին է արժեքը: Ընտրանքի համարժեք չափը հիմնված է երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության գնահատված տարածվածության (մեր ուսումնասիրության մեջ 14%), սխալի չափը, կլաստերային մշակման էֆեկտների և հարցման մերժումների մակարդակի վրա: Ընտրանքը պետք է ուռճացվի՝ հաշվի առնելով կլաստերացումը, ծնողների և երեխաների կողմից սպասվող մերժումների դեպքերը: Հետևաբար, չնայած ստանդարտ հաշվարկը կարող է ենթադրել առնվազն 1000 մասնակից համազգային հարցման համար (Մեյնք և այլք, 2016թ.), մենք առաջարկում ենք կատարել գերընտրանք: Այս մոտեցումը անհրաժեշտ է պատասխանների սպասվող կորստին հակազդելու և վերջնական վերլուծական ընտրանքը բնակչության համար ներկայացուցչական դարձնելու համար:

Շրջանակում և ներկայացում

Հարցման ներկայացումը բոլոր շահագրգիռ կողմերին պետք է կազմակերպվի ամենայն մանրամասնությամբ՝ համագործակցությունն ու էթիկական ամբողջականությունն ապահովելու համար:

Տվյալների ընդունումն ապահովելու և դիմադրությունը նվազեցնելու համար հարցումը կառուցեք «երեխաների անվտանգության և բարեկեցության» շուրջ, այլ ոչ թե բռնության՝ համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղենիշների (Մեյնք և այլք, 2016թ.): Նման նուրբ ձևակերպումը արտացոլում է հարցման ավելի լայն բովանդակությունը՝ շրջակա միջավայրի, այդտեղ առկա ռիսկերի և աջակցության միջոցների հասանելիության վերաբերյալ:

Ծնողներին անհրաժեշտ է տրամադրել տեղեկատվություն, որը բացատրում է ուսումնասիրության նպատակը, կամավոր բնույթը և գաղտնիության պաշտպանության միջոցները (տե՛ս Էլեկտրոնային հավելված. Ծնողական համաձայնություն): Երեխաների համար հարցումից առաջ օգտագործեք բանավոր տեքստ՝ կամավորության և գաղտնիության սկզբունքներն ու մոտեցումները բացատրելու համար (տե՛ս Էլեկտրոնային հավելված. Երեխայի ներածական տեքստ):

Տվյալների հավաքագրում

Հանդիպումները պետք է անցկացվեն լուռ, փակ դասարաններում՝ առանց ուսուցիչների ներկայության, 10-15 երեխաներից բաղկացած խմբերով՝ երկու հոգեբան-ֆասիլիտատորների

հսկողության ներքո: Ֆասիլիտատորները պատասխանատու են ուսումնասիրության նպատակները ներկայացնելու, տեխնիկական աջակցություն տրամադրելու, երեխաների բարեկեցությունը պաշտպանելու և մասնակիցների ներգրավվածությունը, սթրեսը և տեխնիկական միջադեպերը արձանագրելու համար (տե՛ս Էլեկտրոնային հավելված. Ֆասիլիտատորների դաշտային նշումներ):

Տվյալների հավաքագրման առաջարկվող եղանակը՝ Էլեկտրոնային ինքնահարցազրույցը, հայտնի է նրանով, որ մեծացնում է մասնակիցների պատրաստակամությունը հաղորդելու զգայուն փորձի մասին: Սա պայմանավորված է անանունության և գաղտնիության բարելավված ընկալումներով, որոնք օգնում են մեղմել ամոթը, սոցիալական ցանկալիության ազդեցությունը և խարանի հետևանքները: Այս մոտեցման իրագործելիությունն ու արդյունավետությունը հաստատվել են մեր ձևավորող հետազոտության միջոցով:

Առաջարկում ենք օգտագործել հետազոտական թիմին պատկանող բջջային սարքեր (պլանշետներ): Սա ապահովում է միատարրություն, խուսափում է համացանցին մուտք գործելու կամ սարքի սեփականության հետ կապված խնդիրներից և ավելի լավ է ապահովում գաղտնիության պահպանումը: Հարցումները պետք է անցկացվեն՝ օգտագործելով անցանց նախընտրելի հավելվածներ, որոնք կարող են կայուն ցանցի առկայության դեպքում անվտանգ կերպով սինքրոնացնել տվյալները:

Հետևյալ գաղտնիության պայմանները պարտադիր են և հստակ սահմանվել են Էթիկայի հանձնաժողովի կողմից.

1

Հարցումներն անցկացրե՛ք ուսուցիչների տեսադաշտից դուրս և նստարանները դասավորեք այնպես, որ մասնակիցները չկարողանան դիտել միմյանց էկրանները:

2

Հարցաթերթում մի հավաքեք անձը նույնականացնող որևէ տվյալ (օրինակ՝ անուն-ազգանուն-ներ, կոնտակտային տվյալներ):

3

Բոլոր նույնականացնող տվյալները (օրինակ՝ դպրոցի և դասարանի ծածկագրերը) պետք է պահվեն պատասխանների տվյալներից առանձին, և դրանց հասանելիությունը պետք է խիստ սահմանափակված լինի միայն հետազոտական անձնակազմի կամ դրա առանձին անդամների համար:

Ֆասիլիտատորների թիմը և վերապատրաստում

Տվյալների հավաքագրումը պետք է վերահսկվի որակավորված մասնագետների կողմից: Մասնագետները պետք է լինեն հոգեբաններ կամ սոցիալական աշխատողներ, այլ ոչ թե դպրոցի աշխատակիցներ: Ֆասիլիտատորների համար անցկացրեք դասընթաց, որը կներառի անդրադարձ հետազոտական էթիկային, տրավմայի վրա հիմնված վարքագծի առանձնահատկություններին, հետազոտության բովանդակությանը, տվյալների հավաքման սարքերի կառավարմանը և երեխաների ուղղորդման արձանագրության պահպանմանը (տե՛ս Էլեկտրոնային հավելվածներ. վերապատրաստման ծրագիր և ուղղորդման արձանագրություն):

Կանխարգելման հետ ինտեգրում

Համայնքի ընդունելիությունն ու մասնակցությունը բարձրացնելու նպատակով դիտարկե՛ք հարցումը դպրոցում անվտանգության և բռնության վերաբերյալ ավելի լայն կանխարգելիչ արշավի շրջանակներում ընդգրկելու հնարավորությունը: Տվյալների հավաքագրումից անմիջապես հետո ֆասիլիտատորները պետք է անցկացնեն ամփոփիչ հանդիպում (10-15 րոպե): Այս հանդիպումը պետք է ներառի երևույթի կանխարգելման վերաբերյալ նվազագույն բովանդակություն՝ սահմանելով «անվտանգ իրավիճակներ» հասկացությունը. օրինակ՝ բացատրե՛ք, թե ինչպես կարելի է դիմել օգնության, և բաժանե՛ք աջակցության ծառայությունների կոնտակտային տվյալներ պարունակող նյութեր (տե՛ս թռուցիկի օրինակը էլեկտրոնային հավելվածում): Սա օգտագործում է հարցման ներուժը որպես կանխարգելիչ հնարավորություն՝ առանց դիմելու ֆասիլիտատորների օգնությանը գործելու որպես խորհրդատուներ: Այս հանդիպման ընթացքում կամ դրանից հետո սթրեսի ցանկացած բացահայտում պետք է կառավարվի սահմանված ուղղորդման ընթացակարգի համաձայն:

Հարցաթերթ և չափումներ

Մեր ձևավորող հետազոտության մեջ օգտագործված հարցաթերթը մշակվել է հատուկ երեխաների նկատմամբ սեռական բռնությունը չափելու համար՝ հիմնվելով ստանդարտացված գործիքակազմի վրա: Այն վավերացվել է Դելֆի փորձագիտական հարցման, երեխաների հետ ճանաչողական հարցազրույցների արդյունքների և Երևանի պետական համալսարանի էթիկայի հանձնաժողովի կողմից տրված եզրակացության միջոցով: Այս վավերացման գործընթացը հանգեցրել է կարևոր հարմարեցումների հայկական մշակութային և լեզվական համատեքստի համար: Չնայած այս հարմարեցումները կարող են փոքր-ինչ ազդել ստանդարտ չափանիշներ օգտագործող այլ երկրների տվյալների հետ ուղղակի համեմատելիության վրա, դրանք կարևոր են գործիքի տեղական արդիականությունը և էթիկական ամբողջականությունն ապահովելու համար: Երեխաների համար նախատեսված վերջնական հարցաթերթիկը, ինչպես նաև համաձայնության ձևերը, զետեղված են էլեկտրոնային հավելվածում: Առաջարկում ենք, որ երեխաների նկատմամբ բռնության հարցաթերթիկների ցանկացած ապագա թարգմանություն, մշակում կամ թարմացում հայկական համատեքստում հետևի վավերացման նմանատիպ ընթացակարգի:

Հարցաթերթից ստացված հիմնական ցուցիչների հաշվարկման ուղեցույցը տրամադրվում է էլեկտրոնային հավելվածում՝ վիճակագրական վերլուծություն:

3. Էթիկական նկատառումներ

Այս հետազոտությունը պետք է առաջնորդվի երեխաների մասնակցության հետևանքով նրանց որևէ վնաս չպատճառելու գերակա էթիկական սկզբունքով: Մեթոդաբանությունը պետք է համապատասխանի ՅՈՒՆԻՍԵՖ-ի «Երեխաների մասնակցությամբ էթիկական հետազոտություններ»-ի (Գրեհեմ և այլք, 2013թ.) սահմանված ուղեցույցներին, որը երեխաների մասնակցությամբ էթիկական հետազոտությունների ամենաընդգրկուն շրջանակն է:

Դաշտային աշխատանքները սկսելուց առաջ հետազոտողները պետք է մշակեն հետազոտական էթիկայի արձանագրություն, ստանան հավաստագրված էթիկայի հանձնաժողովի հաստատումը և խստորեն հետևեն երեխաների պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջներին:

Ծնողական համաձայնություն

Քանի որ հարցումն անցկացվելու է անչափահաների շրջանում, ծնողից կամ օրինական խնամակալից պետք է ստանալ կամավոր և տեղեկացված համաձայնություն: Այս գործընթացի համար կարևոր է հստակ, պարզ լեզվով կատարվող հաղորդակցման քայլը: Ծնողները պետք է հասկանան ուսումնասիրության նպատակը, դրա կարևորությունը երեխայի անվտանգության բարձրացման համար, իրենց երեխայի մասնակցության կամավոր բնույթը (ներառյալ ցանկացած պահի առանց պատժի հրաժարվելու իրավունքը) և գաղտնիության պահպանման ամուր երաշխիքները: Սեռական բռնության և շահագործման նման զգայուն թեմաներով դպրոցական հարցումների համար Էթիկայի հանձնաժողովը ընդգծել է ծնողական ակտիվ համաձայնության անհրաժեշտությունը: Նման պատրաստի ձևանմուշը հասանելի է Էլեկտրոնային հավելվածում՝ Ծնողական համաձայնության ձև:

Երեխայի համաձայնություն

Միաժամանակ, երեխայի սեփական իմաստալից համաձայնության ապահովումը կարևորագույն նշանակություն ունի: Սա բազմափուլ գործընթաց է.

1

Հարցման սկզբում որակավորված ֆասիլիտատորը պետք է տրամադրի ստանդարտացված, երեխայի համար հարմարեցված բանավոր բացատրություն՝ ընդգծելով կամավորության և գաղտնիության վերաբերյալ հիմնական դրույթները (տե՛ս Էլեկտրոնային հավելված. Երեխայի համար նախատեսված ներածական տեքստ):

2

Հարցումը սկսելուց առաջ երեխաները պետք է իրենց համաձայնությունը տան էկրանին հայտնվող հուշման միջոցով: Զգայուն հարցերի մոդուլից առաջ էկրանին պետք է հայտնվի լրացուցիչ հուշում, որը կրկին հիշեցնում է ցանկացած հարց կամ մի ամբողջ բաժին բաց թողնելու երեխաների իրավունքի մասին:

Ձևավորող հետազոտությունը ցույց է տվել, որ չնայած հրապարակային մերժումները հազվադեպ էին, երեխաները մշտապես օգտագործում էին ներկառուցված համաձայնության հուշումները՝ ցույց տալով իրենց ազատ կամքի հստակ դրսևորումը: Հետևաբար, մենք խստորեն խորհուրդ ենք տալիս օգտագործել բազմաշերտ համաձայնության գործընթացը՝ մասնակցության կամավոր բնույթը երաշխավորելու համար: Կարևոր է նաև փաստաթղթավորել բոլոր մերժումների մակարդակը (թե՛ ծնողների, թե՛ երեխաների կողմից)՝ արդյունքում ստացված տվյալներում ընտրության հնարավոր կողմնակալությունները հասկանալու և մեղմելու համար:

4. Ուղղորդման և աջակցության ծառայություններ

Երեխայի ուղղորդման գրավոր ընթացակարգի առկայությունը կարևոր է: Այս փաստաթուղթը պետք է ներառի քայլերի հստակ շարք՝ ֆասիլիտատորներին օգնելու տարբերակել ընդհանուր մտահոգությունները և անհապաղ միջամտություն պահանջող իրավիճակները, ինչպիսիք են առկա փաստացի վտանգը, վերջերս տեղի ունեցած ծանր բռնության դեպքը կամ ակտիվ ինքնավնասման ռիսկը: Արձանագրությունը պետք է ուրվագծի կոնկրետ ազդակներ, նշանակված դերեր և պարտադիր ժամկետներ, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ

օրենսդրությանը և տեղական գործընկեր կազմակերպությունների կարողություններին: Կարևոր է հիշել, որ տվյալներ հավաքագրողները քննիչներ չեն. նրանց դերն իրավիճակի կայունացումն է և անգամ աննշան մտահոգությունը արձանագրելը և երեխային անմիջապես պաշտպանության համար պատասխանատու անձի հետ կապելը: Այս գործընթացը կառավարելու համար հասանելի է համապարփակ ձևանմուշ (տե՛ս Էլեկտրոնային հավելվածը. Ուղղորդման արձանագրություն):

Բոլոր մասնակիցներին՝ անկախ հարցման ընթացքում նրանց կողմից կատարված բացահայտումից, պետք է տրամադրվի հստակ տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կարելի է ինքնուրույն օգտվել աջակցության ծառայություններից: Մեր ուսումնասիրության մեջ դա իրականացվել է երկկողմանի մոտեցման միջոցով. հարցաթերթի վերջին՝ «Շնորհակալություն» էջում տեղադրվել են Հայ օգնության ֆոնդի «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի կոնտակտային տվյալները, և յուրաքանչյուր երեխայի բաժանվել է պարզ լեզվով գրված թռուցիկ, որում բացատրվում է, թե ինչպես կարելի է օգնություն ստանալ: Այս թռուցիկը հասանելի է հարմարեցման համար Էլեկտրոնային հավելվածում՝ Թռուցիկ երեխաների համար:

Վերջապես, բոլոր հետազոտողներն ու ֆասիլիտատորները պետք է մանրակրկիտ վերապատրաստում անցնեն, որպեսզի ճանաչեն և աջակցեն այն երեխաներին, ում մոտ կարող է հարցման հետևանքով սթրեսային իրավիճակ առաջանալ: Ըստ այդմ, նման վերապատրաստումը ֆասիլիտատորներին պետք է զինի հարցման ընթացքում և դրանից հետո արդյունավետ, տրավմայի վրա հիմնված միջամտության մոտեցումների կիրառմանը՝ ապահովելով, որ յուրաքանչյուր երեխայի բարեկեցությունը լինի գերակա խնդիր:

5. Վերլուծություն, հաշվետվություն և թափանցիկություն

Հաշվետվության արդյունքների թափանցիկությունը կարևոր է ապահովելու ուսումնասիրության արդյունքների հավաստիությունն ու օգտակարությունն երեխաների պաշտպանության քաղաքականության և պրակտիկայի համար: Հետազոտության արդյունքների թափանցիկությունն ու օգտակարությունն ապահովելու համար առաջարկում ենք բոլոր հաշվետվություններում հետևողականորեն ներառել հետևյալ տարրերը.

Իրագործելիության և ընդունելիության չափանիշներ

Մասնակցության աստիճանի մանրամասն հաշվետվությունը կարևոր է: Կարևոր է արձանագրել և հրապարակել ամբողջական պատկերը՝ սկսած հարցման մեջ ներգրավվող երեխաների թվից մինչև այն երեխաների թիվը, ովքեր ստացել են ծնողական համաձայնությունը, տվել են իրենց սեփական համաձայնությունը, սկսել են հարցումը և վերջապես ավարտել են այն: Կարևոր է նաև հաղորդել բաց թողնված հարցերի քանակի և պատասխանից հրաժարվելու վերաբերյալ տվյալների մասին: Բացի այդ, պետք է հաղորդել հարցումն ավարտելու միջին ժամանակի և մասնակիցների հետաքրքրության, ներգրավվածության և սթրեսի վերաբերյալ ցանկացած գրառման, ինչպես նաև տեխնիկական միջադեպերի մասին՝ հիմնված ֆասիլիտատորների դաշտային նշումների վրա: Այս տվյալները հիմնարար նշանակություն ունեն ընտրանքի կողմնակալության և տարածվածության գնահատականների մեկնաբանման վրա այդ կողմնակալության ունեցած ազդեցության վերաբերյալ տեղեկացված քննարկում ծավալելու համար:

Տարածվածություն և օրինաչափություններ

Հաշվետվությունները պետք է հստակ ներկայացնեն ինչպես ողջ կյանքի ընթացքում բռնության ենթարկված լինելու, այնպես էլ վերջին մեկ տարվա ընթացքում բռնության ենթարկված լինելու վերաբերյալ ստացված արդյունքները: Վերլուծությունը պետք է տարբերակի առցանց և առկա համատեքստերը և մանրամասն նկարագրի բռնության հանգամանքները՝ ներառյալ հանցանքի վայրը և հանցագործի հոգեբանական պատկերը: Ավելին, պետք է լինի բացահայտման օրինաչափությունների, օգնություն փնտրելու վարքագծի և բազմազոհականացման (տարբեր տեսակի զոհ դառնալու փորձառություն) վերաբերյալ հաշվետվություն, որը համապարփակ պատկերացում կտրամադրի արդյունքները ուսումնասիրողներին կամ հետագայում նման հետազոտություններ իրականացնողներին:

Կողմնակալության և զգայունության ստուգումներ

Հնարավոր կողմնակալությունները նախօրոք ուսումնասիրվում են մանրակրկիտ վերլուծության միջոցով: Առաջարկում ենք ուսումնասիրել (ա) այն երեխաների միջև եղած տարբերությունները, որոնց ծնողները համաձայնություն են տվել և նրանց, ում ծնողները համաձայնություն չեն տվել (եթե ընտրանքի շրջանակի տվյալները դա թույլ են տալիս), (բ) զգայուն մոդուլին մասնակցած երեխաների և այն բաց թողած երեխաների միջև եղած տարբերությունները և (գ) զգայուն մոդուլի շրջանակներում հարցերին չպատասխանելու օրինաչափությունների միջև եղած տարբերությունները: Տարածվածության բոլոր գնահատականները պետք է մեկնաբանվեն զգուշորեն՝ հստակ քննարկելով, թե շերտավորված համաձայնության գործընթացը և սեռական բռնության շուրջ առկա խարանը ինչպես կարող են ազդել հաղորդման և տվյալների հուսալիության վրա:

Սահմանափակումների ընդունում

Հետազոտողները պետք է բացեիբաց քննարկեն հետազոտության սահմանափակումները, ներառյալ՝

1

Ծնողական համաձայնության և դպրոցական ընտրանքի շրջանակի վրա հիմնվելուց բխող ընտրանքի կողմնակալություն, որը կարող է բացառել խոցելի, դպրոցից դուրս գտնվող բնակչությունը:

2

Չափման հետ կապված մարտահրավերներ, մասնավորապես՝ սեռական բռնության նկատմամբ խարանը և բռնության բացահայտման գենդերային օրինաչափությունները, որոնք, հավանաբար, հանգեցնում են թերհաղորդմանը:

Հետազոտողներին խրախուսում ենք ակտիվ կերպով քանակական տվյալների վերածել ծնողական համաձայնության և զգայուն մոդուլներին մասնակցության մակարդակի ազդեցությունը:

Թափանցիկության հանձնառություն

Հետազոտության հավաստիությունն ու վերարտադրելիությունն ապահովելու համար մասնագիտական խմբերին կոչ ենք անում արխիվացնել գործիքակազմի ամբողջական

պատմությունը, բոլոր համաձայնության նյութերը, ֆասիլիտատորի տեքստերը և երեխայի պաշտպանության ընթացակարգը հանրային պահոցում: Այս նյութերը պետք է մեջբերվեն ցանկացած հրապարակման մեթոդների բաժնում: Այս ուղեցույցի բոլոր օժանդակ փաստաթղթերը հասանելի են էլեկտրոնային հավելվածում:

6. Եզրափակում

Հայաստանում երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության ուսումնասիրությունների հաջորդ փուլը պետք է առաջնահերթությունը տա երեխաների անձնական տվյալների գաղտնիությանը, ինքնավարությանը և մշակութային հարմարվողականությանը՝ պատասխանների մակարդակի աճի փոխարեն: Համաձայնության եղանակը և զգայուն մոդուլին անցումը մեթոդաբանական զեկույցներում թափանցիկ դարձնելով, ինչպես նաև երևույթի տարածվածության վերաբերյա վիճակագրական տվյալների հետ միասին հրապարակելով իրագործելիության չափանիշները՝ կարող ենք պաշտպանել երեխաներին, ամրապնդել հանրային վստահությունը և ներկայացնել կայուն, էթիկական ապացույցներ՝ որպես քաղաքականության և պրակտիկ աշխատանքի հիմք:

Հավելվածներ (գործնական գործիքակազմ)

Լիարժեք թափանցիկություն և մատչելիություն ապահովելու համար, այս հետազոտությանն առնչվող մանրամասն հավելվածներն ու օժանդակ նյութերը տրամադրվում են էլեկտրոնային եղանակով: Այս ռեսուրսները ներառում են ամբողջական մեթոդաբանական փաստաթղթեր, հարցման գործիքակազմ և ուսումնական նյութեր, որոնք համալրում են հիմնական նյութը: Բոլոր հավելվածներն ու լրացուցիչ փաստաթղթերը հասանելի են հետևյալ կայքէջում՝ https://osf.io/vx7ky (մշտական հղում):

Էլեկտրոնային հավելվածը ներառում է հետևյալ հիմնական ռեսուրսները՝

- Երեխաների համար նախատեսված փորձնական հարցաթերթ և համաձայնության ձև (հայերեն և անգլերեն)
- Ծնողական համաձայնության ձև (հայերեն և անգլերեն) Բանավոր ներածական տեքստ երեխաների համար (հայերեն և անգլերեն)
- Թռուցիկ երեխաների համար (հայերեն)
- Վերապատրաստման ծրագիր ֆասիլիտատորների համար (հայերեն և անգլերեն)
- Երեխայի ուղղորդման ընթացակարգ (հայերեն և անգլերեն)
- Վիճակագրական վերլուծություն (անգլերեն)
- Ֆասիլիտատորների դաշտային նշումներ (հայերեն և անգլերեն)
- Էլեկտրոնային հավելված. Հարցման հարցաթերթի ոլորտներ և բովանդակության ակնարկ (անգլերեն)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Boateng GO, Neilands TB, Frongillo EA, Melgar-Quiñonez HR, Young SL. Best Practices for Developing and Validating Scales for Health, Social, and Behavioral Research: A Primer. Front. Public Health. 2018; 6:149.

- Graham, A.,Powell, M., Taylor, N., Anderson, D. & Fitzgerald, R. (2013). Ethical Research Involving Children. Florence: UNICEF Office of Research - Innocenti. https://www.unicef.org/innocenti/reports/ethical-research-involving-children

- Meinck, F., Neelakantan, L., Steele, B., Jochim, J., Davies, L. M., Boyes, M., ... & Dunne, M. (2023). Measuring violence against children: A COSMIN systematic review of the psychometric properties of child and adolescent self-report measures. Trauma, Violence, & Abuse, 24(3), 1832-1847.

- Meinck, F., Steinert, J., Sethi, D., Gilbert, R., Bellis, M., Alink, L., & Baban, A. (2016). Measuring and monitoring national prevalence of child maltreatment: a practical handbook. World Health Organisation.
https://iris.who.int/server/api/core/bitstreams/b47bb834-3273-4f42-8ed0-87c5d2c588c4/content

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երեխաների անվտանգության ապահովման քաղաքականություն-ընթացակարգը կրթական, մշակութային և սպորտային հաստատություններում երեխաների պաշտպանության ամբողջական համակարգի հիմքն է: Այն ստեղծում է շրջանակ, որը թույլ է տալիս հաստատություններին կանխարգելել բռնությունը, արագ արձագանքել միջադեպերին և աջակցել տուժած երեխաներին:

ՄԱՍ 1. ՆՊԱՏԱԿԸ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Նպատակը՝ Երեխաների անվտանգության ապահովման ընթացակարգը (ԵԱԱԸ) իրենից ներկայացնում է հիմնարար փաստաթուղթ, որը սահմանում է կրթական, մշակութային և սպորտային հաստատությունների պարտավորությունները, սկզբունքները և գործողությունները երեխաների նկատմամբ բռնության, հատկապես սեռական բռնության և շահագործման դեպքերի կանխարգելման և դրանց արձագանքման ուղղությամբ: Ընթացակարգի հիմքում ընկած է երեխաների լավագույն շահի գերակայության սկզբունքը և այն ընկալումը, որ յուրաքանչյուր հաստատություն, որտեղ երեխաներ են լինում, կրում է անվիճարկելի պատասխանատվություն նրանց անվտանգությունն ապահովելու համար:

ԵԱԱԸ-ի նպատակն է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ երեխաները պաշտպանված են բոլոր տեսակի բռնություններից, նրանց լսում են, հարգում են, և առկա են հստակ մեխանիզմներ բռնության ցանկացած դրսևորում կանխարգելելու, ճանաչելու և դրանց արձագանքելու համար: Սա ենթադրում է ոչ միայն հաստատության ներքին համակարգերի ներդրում, այլև համագործակցության կամուրջների կառուցում արտաքին պաշտպանության օղակների հետ՝ ապահովելով երեխաների համապարփակ անվտանգությունը:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

- 1 -

Անվտանգ միջավայրի ստեղծում և պահպանում. Հաստատությունները պետք է ապահովեն ֆիզիկական և հուզական անվտանգության բարձր չափանիշներ: Ֆիզիկական միջավայրը պետք է կառուցված և կահավորված լինի այնպես, որ նվազագույնի հասցվի բռնության կամ չարաշահման հնարավորությունը: Սա ենթադրում է բաց տարածքների նախապատվություն, որտեղ երեխաները միշտ տեսանելի են, տեսահսկման համակարգերի տեղադրում ռիսկային գոտիներում, սանհանգույցների կառուցում տարիքային խմբերին համապատասխան անձնական տարածքի ապահովմամբ, և հստակ կանոնակարգված մուտք հաստատության տարածք:

Ընթացակարգը պետք է կարգավորի նաև թվային միջավայրի անվտանգությունը՝ հաշվի առնելով համացանցի և էլեկտրոնային սարքերի օգտագործման աճող միտումները: Համակարգիչները և ինտերնետին միացված սարքերը պետք է տեղակայված լինեն հանրային տարածքներում, ապահովված լինեն տարիքային սահմանափակումներով և զտիչներով, և

պահպանվեն թվային անվտանգության բարձր չափանիշները:

Հաստատությունը պետք է մշակի համացանցի օգտագործման հստակ կանոններ՝ ներառյալ սոցիալական ցանցերի, հաղորդակցության գործիքների և առցանց բովանդակության սպառման սահմանափակումները: Հուզական անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել մթնոլորտ, որտեղ հարգում են երեխաների կարծիքը, խրախուսում են նրանց արտահայտվել և լուրջ են վերաբերվում նրանց մտահոգություններին: Այստեղ կարևոր է նաև մշակութային զգայունությունը և ներառականությունը՝ հարգելով տարբեր մշակութային և սոցիալական խմբերի երեխաների արժեքները և առանձնահատկությունները:

- 2 -

Անձնակազմի կառավարում և վերահսկողություն. Անձնակազմի հավաքագրման, ընտրության և կառավարման գործընթացները պետք է մշակված լինեն այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի երեխաների համար հնարավոր անվտանգային ռիսկերը: Սա սկսվում է հավաքագրման փուլում հիմնավոր ստուգումներից, ներառյալ նախկին աշխատանքային փորձի և առնվազն երկու երաշխավորագրերի ստուգումը: Որտեղ հնարավոր է, պետք է ստուգվի նաև քրեական անցյալը, հատկապես երեխաների դեմ կատարված հանցագործությունների առումով:

Բոլոր աշխատակիցները, ներառյալ ժամանակավոր կամ փոխարինող աշխատակիցները և կամավորները, պետք է անցնեն պարտադիր և համապարփակ ներածական վերապատրաստում երեխաների պաշտպանության թեմայով: Վերապատրաստումը պետք է պարբերաբար թարմացվի և լրացվի կանոնավոր քննարկումներով և դեպքերի ուսումնասիրություններով: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն անձնակազմին, որն անմիջական և կանոնավոր շփում ունի երեխաների հետ:

Անձնակազմի վարքագծի կանոնագիրքը պետք է սահմանի հստակ ուղենիշներ ընդունելի և անընդունելի վարքագծի վերաբերյալ: Այս կանոնագիրքը պետք է ներառի երեխաների հետ անհատական շփման կանոններ, ֆիզիկական շփման սահմանափակումներ, տեղեկատվության գաղտնիության պահպանման և սոցիալական մեդիայի օգտագործման կանոններ: Կանոնագիրքը պետք է նաև սահմանի հաղորդման պարտավորություններ և պատասխանատվություն խախտումների դեպքում:

- 3 -

Բռնության ճանաչում և արձագանքում. Ընթացակարգը պետք է մանրամասն նկարագրի բռնության տարբեր դրսևորումների ճանաչման մեթոդները և արձագանքման քայլերը: Անձնակազմը պետք է վերապատրաստված լինի տարբերակելու բռնության ֆիզիկական, հուզական և վարքագծային նշանները: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի սեռական բռնության ազդանշաններին, քանի որ դրանք կարող են լինել ավելի թաքնված և բարդ ճանաչման համար: Հաղորդման մեխանիզմները պետք է լինեն բազմազան՝ հաշվի առնելով երեխաների և աշխատակիցների տարբեր կարիքները: Սա կարող է ներառել գրավոր հաղորդումներ, թեժ գծեր, առցանց հաղորդման ձևեր, վստահված անձանց նշանակում և անանուն հաղորդման տարբերակներ: Երեխաների համար պետք է ապահովված լինեն տարիքին համապատասխան մեխանիզմներ, որոնք հեշտությամբ հասկանալի և մատչելի են նրանց համար: Արձագանքման ընթացակարգը պետք է լինի երեխայակենտրոն և տրավմա-իրազեկ: Դեպքի հայտնաբերման պահից անհրաժեշտ է անհապաղ գործողություններ

իրականացնել՝ ապահովելու երեխայի անվտանգությունը և բարեկեցությունը: Սա կարող է ներառել բժշկական օգնություն, հոգեբանական աջակցություն, ապահով միջավայրի ապահովում և իրավապահ մարմինների ներգրավում, եթե անհրաժեշտ է:

Դեպքի կառավարումը պետք է լինի բազմամասնագիտական, ներգրավելով երեխաների պաշտպանության պատասխանատուներին, սոցիալական աշխատողներին, հոգեբաններին և, անհրաժեշտության դեպքում, բժշկական և իրավական մասնագետների: Յուրաքանչյուր դեպք պետք է մանրակրկիտ փաստաթղթավորվի՝ ապահովելով տվյալների գաղտնիությունը և պաշտպանությունը:

- 4 -

Գենդերային և տարիքային առանձնահատկությունների հաշվառում. Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ աղջիկները և տղաները տարբեր կերպ են արձագանքում բռնության իրավիճակներին և տարբեր ուղիներով են փնտրում աջակցություն: Ընթացակարգը պետք է հաշվի առնի այս առանձնահատկությունները և մշակի գենդերային զգայուն մոտեցումներ:

Տղաների համար, ովքեր հաճախ խուսափում են բռնության մասին բարձրաձայնելուց և դիմում են ընկերներին, ոչ թե մեծահասակներին, պետք է ստեղծել հատուկ միջավայր, որտեղ նրանք կկարողանան անվտանգ կերպով կիսվել իրենց խնդիրներով: Սա կարող է ներառել տղամարդ մենթորներ, չդատապարտող և անքննադատ մթնոլորտ և այնպիսի միջոցառումներ, որոնք խրախուսում են հույզերի արտահայտումը և օգնության դիմելը:

Աղջիկների համար, ովքեր ավելի հակված են դիմելու ծնողներին կամ ուսուցիչներին, պետք է ապահովել ապահով տարածքներ և վստահելի կին մեծահասակների առկայություն: Աղջիկների հատուկ մտահոգությունները, ինչպիսիք են առցանց հետապնդումը և սեքստորշնը, պետք է հատուկ ուշադրության արժանանան:

Տարիքային տարբերությունները նույնպես կարևոր են, օրինակ՝ 12-14 տարեկան դեռահասների համար, ովքեր համաձայն հետազոտության, առավել խոցելի են սեռական բռնության նկատմամբ, պետք է մշակվեն հատուկ կանխարգելիչ և աջակցող միջոցառումներ: Ավագ դեռահասների համար պետք է տրամադրել ավելի շատ ինքնավարություն և ներգրավել նրանց որպես դրական օրինակներ իրենց կրտսեր համադասարանցիների համար:

- 5 -

Կանխարգելում, կրթում և իրազեկում. Երեխաների անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրիչը կանխարգելիչ կրթությունն է: Բոլոր հաստատություններում պետք է իրականացվեն տարիքին համապատասխան կրթական ծրագրեր՝ նպատակ ունենալով սովորեցնել երեխաներին ճանաչել վտանգավոր իրավիճակները, պաշտպանել իրենց անձնական սահմանները և փնտրել օգնություն, երբ դա անհրաժեշտ է:

Այս կրթությունը պետք է ներառի այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ անձնական սահմանները, համաձայնության կարևորությունը, առողջ հարաբերությունների հատկանիշները, վտանգավոր և անվտանգ գաղտնիքների տարբերակումը, և թվային անվտանգությունը: Կարևոր է, որ այս թեմաները քննարկվեն պարբերաբար, ոչ միայն միանվագ դասընթացների տեսքով:

Ծնողների և խնամակալների համար նույնպես պետք է իրականացվեն կանոնավոր իրազեկման

միջոցառումներ: Նրանք պետք է տեղեկացված լինեն երեխաների անվտանգության քաղաքականության մասին, իմանան բռնության նշանները և իրենց դերը երեխաների անվտանգությունն ապահովելու գործում: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հայրերի և տղամարդ խնամակալների ներգրավմանը, ովքեր կարող են մեծ դեր խաղալ հատկապես տղաների աջակցության հարցում:

- 6 -

Թվային անվտանգություն. Ժամանակակից աշխարհում առցանց միջավայրը դառնում է երեխաների կյանքի անբաժանելի մասը, և հաստատությունները պետք է ունենան հատուկ մեխանիզմներ թվային անվտանգության ապահովման համար: Սա ներառում է համակարգչային սարքավորումների և ինտերնետ հասանելիության կարգավորում, առցանց վարքագծի կանոններ և թվային միջադեպերին արձագանքման հատուկ ընթացակարգեր:

Հաստատությունները պետք է մշակեն հստակ կանոններ սոցիալական ցանցերի, տեսանյութերի և լուսանկարների տարածման, համացանցային հաղորդակցության վերաբերյալ: Անձնակազմը պետք է վերապատրաստված լինի ճանաչելու և արձագանքելու թվային միջադեպերին, ինչպիսիք են գրումինգը, սեքստորշնը և կիբեռբուլլինգը:

Թվային անվտանգության ուսուցումը պետք է հարմարեցված լինի տարբեր տարիքային խմբերին և հաշվի առնի երեխաների զարգացող կարողությունները: Կրտսեր տարիքի երեխաների համար շեշտադրումը պետք է լինի հիմնական անվտանգության կանոնների վրա, մինչդեռ ավագ տարիքային խմբի դեռահասները պետք է ուսումնասիրեն ավելի բարդ թեմաներ, ինչպիսիք են թվային քաղաքացիությունը և առցանց ինքնության կառավարումը:

ՄԱՍ 2. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Երեխաների անվտանգության ապահովման համար պատասխանատու է հաստատության յուրաքանչյուր անձ, սակայն պատասխանատվության հստակ բաշխումն անհրաժեշտ է արդյունավետ իրականացման համար:

- 1 -

Հաստատության ղեկավարություն. Հաստատության ղեկավարությունը կրում է ընդհանուր պատասխանատվություն երեխաների անվտանգության ապահովման քաղաքականության ներդրման և իրականացման համար: Տնօրենը կամ ղեկավար մարմինը պետք է սահմանի հստակ տեսլական և առաջնահերթություն երեխաների անվտանգության հարցերում, տրամադրի անհրաժեշտ ռեսուրսներ և հետևի քաղաքականության իրականացմանը: Ղեկավարությունը պատասխանատու է ապահովելու, որ բոլոր աշխատակիցները տեղյակ լինեն քաղաքականությունից, ստանան համապատասխան վերապատրաստում և հետևեն սահմանված ընթացակարգերին: Տնօրենը պետք է պարբերաբար վերանայի և թարմացնի քաղաքականությունը, հաշվի առնելով նոր օրենսդրական պահանջները, լավագույն փորձը և հաստատության սեփական փորձառությունը:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է արտաքին մարմինների հետ հարաբերությունների կառուցման և պահպանման համար, ներառյալ տեղական ինքնակառավարման մարմինները, ոստիկանությունը, սոցիալական ծառայությունները և առողջապահական հաստատությունները: Տարեկան առնվազն մեկ անգամ պետք է ներկայացվի հաշվետվություն

վերադաս մարմիններին երեխաների անվտանգության ապահովման միջոցառումների վերաբերյալ:

- 2 -

Երեխաների պաշտպանության պատասխանատուներ. Յուրաքանչյուր հաստատություն պետք է նշանակի առնվազն մեկ, իսկ նախընտրելի է երեխաների պաշտպանության երկու պատասխանատու(տղամարդ և կին): Այս անձինք պետք է անցնեն հատուկ վերապատրաստում և լինեն հաստատությունում երեխաների պաշտպանության հիմնական կոնտակտային անձինք:

Երեխաների պաշտպանության պատասխանատուների հիմնական պարտականություններն են՝ անձնակազմի վերապատրաստումների կազմակերպումը, բռնության կասկածների և հաղորդումների ընդունումը և կառավարումը, այլ մարմինների հետ կապի ապահովումը, և համապատասխան փաստաթղթերի վարումը: Նրանք պետք է հասանելի լինեն թե՛ երեխաների, թե՛ աշխատակիցների համար և ունակ լինեն տրամադրելու աջակցություն և ուղղորդում:

Պատասխանատուների տվյալները և նրանց հետ կապ հաստատելու միջոցները պետք է հստակ ցուցադրված լինեն հաստատության տարածքում, և բոլոր երեխաները և աշխատակիցները պետք է տեղյակ լինեն, թե ում դիմել երեխաների անվտանգության հարցերով: Նրանց դերը ներառում է նաև մոնիտորինգի իրականացումը, տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, և բարելավման առաջարկների ներկայացումը ղեկավարությանը:

- 3 -

Անձնակազմի անդամներ. Բոլոր աշխատակիցները, ներառյալ ուսուցիչները, վարչական անձնակազմը, տեխնիկական աշխատակիցները, կամավորները և պրակտիկա անցնող ուսանողները ունեն երեխաների անվտանգության ապահովման պարտականություններ: Նրանք պետք է ծանոթ լինեն քաղաքականությանը, հասկանան բռնության նշանները և տիրապետեն հաղորդման ընթացակարգերին:

Անձնակազմի անդամները պարտավոր են ահազանգել, եթե նրանք տեսնում են բռնության նշաններ կամ լսում են երեխայի բռնության մասին հաղորդումը: Նրանք պետք է ապահովեն երեխաների անվտանգությունն իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում և դասերի ժամանակ: Անձնակազմը պետք է խստորեն հետևի վարքագծի կանոնագրքին և պահպանի մասնագիտական սահմանները:

Աշխատակիցները նաև պատասխանատու են երեխաների հետ կանխարգելիչ աշխատանքների անցկացման համար, քննարկելով անվտանգության հարցերը տարիքին համապատասխան եղանակով և ստեղծելով վստահության մթնոլորտ, որտեղ երեխաները կկարողանան ազատ արտահայտվել:

- 4 -

Երեխաներ և ծնողներ. Երեխաները և ծնողները կարևոր շահագրգիռ կողմեր են երեխաների անվտանգության ապահովման գործընթացում: Նրանք պետք է տեղեկացված լինեն քաղաքականության մասին և իմանան, թե ինչպես կարող են հաղորդել իրենց մտահոգությունները:

Երեխաները պետք է իմանան իրենց իրավունքները, հասկանան, թե ինչն է ընդունելի

վարքագիծ և ինչը՝ ոչ, և տեղյակ լինեն, թե ում կարող են դիմել օգնության համար: Տարիքին համապատասխան կրթական ծրագրերը պետք է օգնեն նրանց զարգացնել ինքնապաշտպանության հմտություններ, սովորեցնեն հարգել ուրիշների սահմանները և խրախուսեն խնդիրների մասին բարձրաձայնելը:

Ծնողները և խնամակալները պետք է տեղեկացված լինեն հաստատության երեխաների անվտանգության քաղաքականության մասին, ստորագրեն համաձայնագիր՝ պարտավորվելով աջակցել դրան, և ակտիվորեն ներգրավվեն երեխաների անվտանգության ապահովման միջոցառումներում: Ծնողական ժողովները, աշխատաժողովները և տեղեկատվական նյութերը պետք է օգտագործվեն՝ բարձրացնելու իրազեկվածությունը երեխաների պաշտպանության հարցերի վերաբերյալ:

- 5 -

Կապը պաշտպանության արտաքին օղակների հետ. Երեխաների համապարփակ պաշտպանությունը հնարավոր չէ առանց այլ պատասխանատու մարմինների և ծառայությունների հետ սերտ համագործակցության: Հաստատությունները չեն կարող և չպետք է գործեն մեկուսացած՝ բռնության դեպքերին արձագանքելիս:

- 6 -

Պետական մարմիններ և օրենսդրական պարտավորություններ. Հաստատությունները պետք է լիովին տեղյակ լինեն իրենց օրենսդրական պարտավորություններին և պարտադիր հաղորդման պահանջներին: Ընթացակարգը պետք է հստակ սահմանի, թե երբ և ինչպես պետք է դիմել պետական մարմիններին, ինչպիսիք են ոստիկանությունը, սոցիալական ծառայությունները, առողջապահական հաստատությունները և կրթական վերահսկող մարմինները:

Որոշակի տեսակի բռնության կասկածների դեպքում, հատկապես երբ կան հանցագործության հատկանիշներ, հաղորդումը ոստիկանությանը պարտադիր է: Այս դեպքերը պետք է հստակ նշվեն ընթացակարգում, և անձնակազմը պետք է վերապատրաստված լինի ճանաչելու նման իրավիճակները:

Ընթացակարգը պետք է սահմանի նաև համագործակցության եղանակները սոցիալական ծառայությունների հետ, որոնք կարող են տրամադրել աջակցություն ռիսկի տակ գտնվող երեխաներին և ընտանիքներին: Սա հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ երեխայի անվտանգությունը կարող է վտանգված լինել տանը կամ համայնքում:

- 7 -

Համագործակցություն համայնքային ռեսուրսների հետ. Բացի պետական մարմիններից, հաստատությունները պետք է համագործակցեն տարբեր համայնքային ռեսուրսների հետ՝ ստեղծելու պաշտպանության համապարփակ ցանց: Սա ներառում է տեղական ՀԿ-ներ, ճգնաժամային կենտրոններ, թեժ գծեր և աջակցության ծառայություններ:

Մասնագիտացված ՀԿ-ները կարող են տրամադրել փորձագիտական խորհրդատվություն, վերապատրաստումներ և ռեսուրսներ՝ ուղղված երեխաների պաշտպանության կոնկրետ ասպեկտների: Նրանք կարող են նաև աջակցել բռնության զոհերին՝ տրամադրելով խորհրդատվություն, իրավական աջակցություն կամ վերականգնողական ծառայություններ: Ճգնաժամային կենտրոնները և թեժ գծերը կարող են լինել կարևոր ռեսուրսներ անհապաղ

աջակցության համար, հատկապես, երբ հաստատությունը չունի իր վերապատրաստված մասնագետներին: Հաստատությունը պետք է ունենա այս ծառայությունների թարմ ցանկ և կապեր այդ ծառայությունների հետ՝ արագ ուղղորդման համար:

- 8 -

Համակարգման մեխանիզմներ և տեղեկատվության փոխանակում. Արդյունավետ համագործակցություն ապահովելու համար անհրաժեշտ են հստակ համակարգման մեխանիզմներ: Հաստատությունը պետք է ունենա միասնական ուղղորդման թերթիկ, որը պարունակում է բոլոր համապատասխան կազմակերպությունների և ծառայությունների կոնտակտային տվյալները, դրանց մասնագիտացումը և ուղղորդման ընթացակարգը:

Տեղեկատվության փոխանակումը պետք է իրականացվի գաղտնիության պահպանման սկզբունքով: Հաստատությունը պետք է հստակ գիտակցի, թե ինչ տեղեկատվություն կարող է և պետք է կիսի արտաքին մարմինների հետ, և ինչպես պետք է պահպանի գաղտնիությունը՝ միաժամանակ չխոչընդոտելով քննությանը կամ աջակցության տրամադրմանը:

Կարևոր է կազմակերպել պարբերական հանդիպումներ արտաքին գործընկերների հետ՝ կիսվելու փորձով, քննարկելու մարտահրավերները և կոորդինացնելու գործողությունները: Սա կարող է օգնել ստեղծել ավելի ամբողջական և արդյունավետ պաշտպանության համակարգ:

- 9 -

Հետադարձ կապի և հետևողական աջակցության մեխանիզմներ. Ուղղորդման և հաղորդման գործընթացը չպետք է ավարտվի, երբ հաստատությունը տեղեկացնում է արտաքին մարմիններին: Կարևոր է հետևել դեպքի ընթացքին և ապահովել, որ երեխան և ընտանիքը ստանան անհրաժեշտ աջակցությունը:

Ընթացակարգը պետք է ներառի հետադարձ կապի մեխանիզմներ, որոնց միջոցով հաստատությունը կարող է տեղեկանալ դեպքի ընթացքի մասին՝ միաժամանակ հարգելով գաղտնիությունը: Սա հատկապես կարևոր է, երբ երեխան շարունակում է հաճախել հաստատություն, և անհրաժեշտ է շարունակական աջակցություն:

Հաստատությունը պետք է պատրաստ լինի տրամադրել երկարաժամկետ աջակցություն բռնության զոհերին, ներառյալ ճկուն ուսումնական գրաֆիկ, հոգեբանական աջակցություն և սոցիալ-հուզական ուսուցում: Այս աջակցությունը պետք է համակարգված լինի արտաքին մասնագետների հետ՝ ապահովելու համապարփակ մոտեցում:

ՄԱՍ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նախապատրաստում. Ներդրման առաջին փուլը սկսվում է մանրակրկիտ նախապատրաստությամբ և ռազմավարական պլանավորմամբ: Հաստատության ղեկավարությունը պետք է ստեղծի աշխատանքային խումբ, որը կղեկավարի քաղաքականության մշակումը և ներդրումը: Այս խումբը պետք է ներառի տարբեր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների, ներառյալ ուսուցիչներ, ծնողներ, մասնագետներ և, եթե հնարավոր է, երեխաներից ներկայացուցիչներ:

Կարևոր է իրականացնել ռիսկերի գնահատում և կարիքների վերլուծություն՝ հասկանալու հաստատությունում առկա մարտահրավերները և առանձնահատկությունները: Սա կօգնի հարմարեցնել քաղաքականությունը կոնկրետ համատեքստին՝ միաժամանակ պահպանելով անվտանգության բարձր չափանիշներ:

Աշխատանքային խումբը պետք է մշակի մանրամասն ժամանակացույց և ռեսուրսների պլան քաղաքականության ներդրման համար: Սա պետք է ներառի վերապատրաստումների ժամանակացույց, անհրաժեշտ նյութերի պատրաստում և տեխնիկական ենթակառուցվածքների թարմացում:

Վերապատրաստում և կարողությունների զարգացում, Անձնակազմի համապարփակ վերապատրաստումը երեխաների անվտանգության ապահովման քաղաքականության ներդրման հիմնաքարն է: Բոլոր աշխատակիցները, ներառյալ տեխնիկական և օժանդակ անձնակազմը, պետք է անցնեն պարտադիր ներածական վերապատրաստում, որը կծածկի քաղաքականության հիմնական սկզբունքները, բռնության նշանները և հաղորդման ընթացակարգերը:

Երեխաների պաշտպանության պատասխանատուների համար պետք է կազմակերպվեն ավելի մանրամասն և խորքային վերապատրաստումներ: Նրանք պետք է ձեռք բերեն հմտություններ դեպքի կառավարման, հաղորդակցության, տրավմա-իրազեկ մոտեցումների և բազմագերատեսչական համագործակցության ոլորտներում:

Վերապատրաստումները պետք է լինեն շարունակական գործընթաց, ոչ միանվագ միջոցառում: Անձնակազմի համար պետք է կազմակերպվեն պարբերական թարմացումներ, դեպքերի ուսումնասիրություններ և քննարկումներ՝ գիտելիքները և հմտությունները պահպանելու և զարգացնելու համար:

Իրազեկության բարձրացում և մշակույթի փոփոխություն. Երեխաների անվտանգության ապահովման քաղաքականությունն ավելին է, քան ուղղակի կանոնների և ընթացակարգերի շարք: Այն պահանջում է մշակույթի փոփոխություն, որտեղ երեխաների անվտանգությունը դառնում է յուրաքանչյուրի պատասխանատվությունը և ներդրվում է հաստատության բոլոր գործընթացներում և աշխատակիցների աշխատանքային պարտականությունների հատվածում և ստորագրվում է համապատասխան աշխատակցի կողմից առ այն, որ տեղեկացված է;

Երեխաների և ծնողների իրազեկվածությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել տեղեկատվական միջոցառումներ, տարածել նյութեր և ներառել անվտանգության թեմաները դասերի և արտադասարանական գործունեության մեջ: Իրազեկման նյութերը պետք է լինեն տարիքին համապատասխան, մատչելի և հասկանալի բոլոր երեխաների և ծնողների համար:

Մշակույթի փոփոխությունը պետք է խրախուսվի նաև օրինակի ուժով: Ղեկավարությունը և առանցքային աշխատակիցները պետք է ցուցադրեն պատշաճ վարքագիծ և արժեքներ, խրախուսեն բաց հաղորդակցությունը և արագ արձագանքեն մտահոգություններին:

ՄԱՍ 4. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Երեխաների անվտանգության ապահովման քաղաքականությունը պետք է լինի դինամիկ, կարողանա հարմարվել նոր մարտահրավերներին և հիմնված լինի փորձի վրա: Մոնիտորինգի և գնահատման մեխանիզմները կարևոր են քաղաքականության արդյունավետությունը չափելու և բարելավման ոլորտները բացահայտելու համար:

Հաստատությունը պետք է ներդնի պարբերական ինքնագնահատման գործընթաց, որը կներառի փաստաթղթերի վերանայում, աշխատակիցների, երեխաների և ծնողների հարցումներ, և դեպքերի վարման որակի վերլուծություն: Այս գնահատումները պետք է իրականացվեն առնվազն տարին մեկ անգամ:

Արտաքին գնահատումները, որոնք իրականացվում են անկախ մասնագետների կամ գործակալությունների կողմից, կարող են տրամադրել օբյեկտիվ հայացք և նոր գաղափարներ: Սա հատկապես օգտակար է խոշոր հաստատությունների համար կամ լուրջ միջադեպի հետազոտման շրջանակներում:

Գնահատման արդյունքները պետք է օգտագործվեն ընթացակարգի և քաղաքականության բարելավման պլանների մշակման համար, որոնք կներառեն կոնկրետ գործողություններ, պատասխանատուներ և ժամկետներ: Շարունակական բարելավման նման շրջափուլը ապահովում է քաղաքականության արդիականությունն ու արդյունավետությունը:

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆ՝

Վերոնիկա Օդինոկովա
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, «Աստրա» առողջության ամրապնդման և բռնությունից պաշտպանության հիմնադրամի հիմնադիր տնօրեն:

Յուլիանա Մելքումյան
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ:

Միրա Անտոնյան
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, Մարդիգյան Երեխաների պաշտպանության կենտրոնի գործադիր տնօրեն:

Տաթևիկ Կարապետյան
Սոցիալական աշխատանքի մագիստրոս, ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս: